ք աղ ա ք ա կ ան մ շ ա կ ու յ թ ի ց , ձ ն ա վ ո թ վ ու մ ե ն ն ա ն
կ առ ա վ ար չ ա կ ան մ շ ա կ ու յ թ ի պ ա հ ա ն ջ ն եր :
Ը ն դ հ ան ր ա պ ե ս , հ ան ր ա յ ի ն ծ առ ա յ ո ղ ի ց պ ա հ ա ն ջ վ ու մ
է կ առ ա վ ար չ ա կ ան տեխնոլոգիաների հ մ ու տ
տ ի ր ա պ ե տ ու մ ` պ ա յ մ ան ա վ ո թ վ ա ծ ի ն չ պ ե ս
ս ո ց ի ա լ ա կ ան գ ար գ ա ց մ ան մ ա կ ար դ ա կ ո վ , ա յ ն պ ե ս է լ
կ ա յ ու ն պ ա յ մ ան ն եր ո վ , ճ գ ն ա ժ ա մ ա յ ի ն
պ ա յ մ ան ն եր ո վ կ ամ կ առ ա վ ար մ ան մ ե կ օ բ յ ե կ տ ի ց
մ յ ու ս ի ն ա ն ց ն ե լ ու ժ ա մ ան ա կ կ առ ա վ ար մ ան ռ ե ժ ի մ ի
փ ո փ ո խ ու թ յ ամ ք : Ա յ դ է վ կ ա յ ու մ հ ա յ թ ե ն ա կ ան և
ար տ ա ս ա հ մ ան յ ան պ ե տ ա կ ան ծ առ ա յ ու թ յ ան
գ ար գ ա ց մ ան պ ա տ մ ու թ յ ու ն ը : Օ թ ի ն ա կ ` Ա Մ Ն պ ե տ ա կ ան
ծ առ ա յ ու թ յ ան պ ա տ մ ու թ յ ան մ ե ջ առ ա ն ձ ն ա ց ն ու մ ե ն
մ ի շ ար ք փ ու լ լ եր : Փ ու լ լ ի ց փ ու լ ա ն ց ու մ ն եր ը
գ գ ա լ ի ո թ ե ն փ ո խ ե լ ե ն վ ար չ ա կ ան կ առ ա վ ար մ ան
ս կ գ բ ու ն ք ն եր ն ու բ ո վ ա ն դ ա կ ու թ յ ու ն ը և պ ե տ ա կ ան
ծ առ ա յ ո ղ ն եր ի պրոֆեսիոնալ ի գ մ ի ն ն եր կ ա յ ա ց վ ո ղ
պ ա հ ա ն ջ ն եր ը ` «Ժ առ ա ն գ ն եր ի և ջ ե ն թ լ մ ե ն ն եր ի
ի շ խ ա ն ու թ յ ու ն ը », «ս ե փ ա կ ան ու ժ եր ո վ

առաջխաղացումը՝ նույնպես մարդկանց
 իշխանությունը», «համընդհանուր քարիքի»
 սկզբունքի գերակայությունը և
 «գործունեության գիտական կառավարումը»: Իսկ ՌԴ
 պետական ծառայության պատմության մեջ կարելի է
 առանձնացնել այնպիսի շրջաններ, ինչպիսիք են,
 օրինակ, արքունական՝ «ցարին, կայսերը և
 հայրենիքին ծառայելը», կուսակցական-
 խորհրդային նոմենկլատուրան՝ «կոմունիզմի
 գաղափարներին նվիրվածությունը», լիբերալ՝
 «դեմոկրատներին իշխանությունը», որոնց
 փոխարինելու են գալիս կենտրոնամետ
 պրագմատիկները⁵³: Մեր երկրում պետական
 ծառայության մեջ կարելի է առանձնացնել
 թագավորական, այնուհետև, ինչպես ՌԴ-ում,
 կուսակցական-խորհրդային նոմենկլատուրան՝
 «կոմունիզմի գաղափարներին նվիրվածությունը»,
 լիբերալ՝ «դեմոկրատներին իշխանությունը»:

Հանրային ծառայողների դերը չափազանց
 կարևորվում է հատկապես սոցիալական
 քարտեզախուլների ժամանակակից պայմաններում:
 Մասնագիտական գիտելիքների և հմտությունների
 ձեռքբերումը հանգեցնում է հանրային
 ծառայողների անհատական-բարոյական որակների
 կատարելագործմանը և բարձրացնում դրանց
 մակարդակը: Այս առումով տեղին է հիշատակել
 Թեոդոր Ռուզվելտի այն դիտարկումը, որ տարրական
 կրթությունն չստացած գողը կարող է ինչ-որ բան
 գողանալ ապրանքատար վագոնից, իսկ համալսարան
 ավարտելու պարագայում նա կարող է ամբողջ
 շարքակազմը թալանել⁵⁴: Որոշ
 հասարակություններում պետական կառավարման

⁵³ Государственное управление: основы теории и организации (учебник. в 2 т., т. 2). Под ред. В. А. Козбаненко, Изд. 2-е, с изм. и доп., М., «Статус», 2002, 592 с., с. 222.

⁵⁴ Государственное управление: основы теории и организации (учебник. в 2 т., т. 2). Под ред. В. А. Козбаненко, Изд. 2-е, с изм. и доп., М., «Статус», 2002, 592 с., с. 245.

համակարգում հաճախ տեղ են գտնում
կամայականությամբ, անտարբերությամբ,
անպատասխանատվությամբ, ոչ բավարար
կոմպետենտությամբ: Նմանատիպ երևույթները
հանգեցնում են պետության և հասարակության
կապի խաթարման, սեփական իշխանության նկատմամբ
անվստահության և, բնականաբար, պետական
ծառայողի հեղինակության անկման: Հետևաբար
ավելի հեշտ է նման երևույթները կանխարգելելը,
քան հետո դրանցից ազատվելը: Իսկ կանխարգելումը
հնարավոր է միայն սոցիալական,
կազմակերպարարական, ֆինանսատնտեսական
համալիր միջոցառումների օգնությամբ: Դրանք
պետք է ընդունվեն համապետական նորմատիվային
ակտերով, այսինքն՝ կենտրոնացված կարգով:

Քանի որ պետությանը երիտասարդ է, մեզ մոտ
պետական ծառայության բարեփոխման գործընթացը
դեռ չի ավարտվել. շարունակվում է պետական
ծառայողի մասնագիտության մեջ քաղաքական-
իրավական, գործնական, բարոյական, էթիկական,
հոգեբանական ակունքների արդյունավետ
հարաբերակցության որոնումը: Սակայն ակնհայտ է,
որ ի վերջո պետք է ձևավորվի հանրային
ծառայության այնպիսի համակարգ, որը
կհամապատասխանի նորմատիվային-արժեքային
դիրքորոշումներին, միևնույն ժամանակ՝
ժամանակակից պահանջներին՝ հիմնված գիտական
վերլուծության մեթոդների վրա: Պետության և նրա
քաղաքացիների, ողջ հասարակության և
յուրաքանչյուր անհատի վիճակը կախված է այն
բանից, թե ով է ընդունում կառավարչական
որոշումները, ինչպես են դրանք փոխանցվում
գործնական ոլորտ և կյանքի կոչվում: Այստեղ
կարևորվում է ոչ միայն կառավարման ապարատը,
այլ և կառավարում իրականացնող անձը:

Հանրային ծառայությունն առաջացել է պետության կազմավորմանը գուրդահեռ՝ որպես հասարակական կյանքի կազմակերպման պետական ձևի արտաքին դրսևորում:

Մարդու, ինչպես նաև հասարակության նպատակառոչ դրված գործունեության կարևորագույն դրսևորումներին մեկը ծառայությունն է: Այս հասկացությունն օգտագործվում է տարբեր իմաստներով՝ որպես մարդկային գործունեության տեսակ, որպես սոցիալ-իրավական ինստիտուտ, որպես պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգ, որպես հոգևոր գործունեություն և այլն⁵⁵:

Սոցիալական առումով հանրային ծառայությունը հասարակության և պետության, պետական ապարատի և հասարակական կառույցների, հանրային ծառայողի և քաղաքացու միջև հարաբերություններին ինստիտուտ է: Այս առումով հանրային ծառայության համակարգն ապահովում է տարբեր սոցիալական հարաբերություններում մարդկանց պահանջմունքների, շահերի, հակումների, սովորությունների, բնագոյների և այլ դրդապատճառների արդյունքում առաջացած վարքագծի կարգավորիչ գործառնությունների ակնակցումը:

Հանրային ծառայության բնորոշումը թույլ է տալիս այն դիտարկել տարբեր տեսանկյուններից, որոնք փոխկապակցված են և միմյանց լրացնող, սակայն հանրային ծառայության գործառնությունները բազմաշերտ վերլուծության են ենթարկված իրավական, քաղաքական և այլ տեսանկյուններից, ինչը չի կարելի ասել հոգեբանական վերլուծության մասին: Հանրային ծառայության գործառնությունների

⁵⁵«Государственное служба», В. В. Волкова, А.А.Сапфирова, Закон и право,изд.ЮНИТИ-ДАНА,2012, с. 5.

հոգեբանական վերլուծությունն իր մեջ ներառում է ոչ միայն գուտգործառույթի կատարումը, այլև անձին առհասարակ տվյալ գործունեության ոլորտում:

Հանրային ծառայության էությունն արտացոլում է տվյալ հասարակության մեջ գոյություն ունեցող տնտեսական, քաղաքական, հոգևոր հարաբերությունները և սոցիալական կառավարման կազմակերպման եղանակը:

Հանրային ծառայությունը ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումն է. այն ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը, պետական և համայնքային պաշտոնները⁵⁶, ինչը թույլ է տալիս ամբողջականության մեջ դիտարկել կառավարման համակարգը՝ իր հոգեբանական կողմերով:

Հանրային ծառայությունն առաջին հերթին ունի իրավակիրառական նշանակություն: Հանրային ծառայության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է տվյալ երկրում տիրող հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական վիճակով: Հանրային ծառայությունը նաև հոգևոր-մշակութային բնագավառ է, քանի որ արտացոլում է հասարակությունում առկա արժեքային համակարգն ու բարոյական նորմերը: Հետևաբար անհրաժեշտ է կատարել հանրային ծառայության համակարգային ուսումնասիրություն⁵⁷:

Հանրային ծառայությունը, փաստորեն, ապահովում է պետական գործառույթները և իրականացնում է պետության որդեգրած

⁵⁶ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մաս (ընդունվել է 2011թ. մայիսի 26-ին):

⁵⁷ **Լոբյան Ա.**, Հանրային ծառայողների մասնագիտական գործունեության հոգեբանական առանձնահատկությունները, Երևան, ՀՀ պետական կառավարման ակադեմիա, 2015, 240 էջ:

Զազմավարութիւնը: Յայտնի է, որ այսօր
 պետութիւնն ինքնին իշխանական
 լիազորութիւններին նախնական աղբյուրն է.
 դրանք փոխանցվում են ժողովրդի կողմից:
 Ժողովրդավարացմանը գուգահեռ՝ պետութիւնը
 դառնում է իրավական և սոցիալական, ինչը պետական
 ծառայութեան փոփոխութեան պատճառ է:
 Պետութիւնը, իշխանութիւնը և ներկայումս
 և հասարակութեան վրա, իր գործունեութիւնը
 կազմակերպում է հասարակական
 պահանջմունքները բավարարելու
 ուղղորդված ծառայամբ, ինչի հիման վրա որոշվում
 են հանրային ծառայութեան
 առաջնահերթութիւնները: Յանդես գալով
 պետութեան անունից՝ այն առավելապես
 սպասարկում է հասարակութեան ներքին,
 քան ի նրա նպատակ է նրա շահերի, իրավունքների ու
 ազատութիւնների իրացմանը՝ որպէս քաղաքացու
 և անհատի: Այսպիսով, հանրային ծառայութիւնը
 դառնում է սպասարկող ոլորտ, սակայն
 սպասարկումն իրականացվում է օրենքի
 սահմաններում, որով որոշվում են քաղաքացու
 իրավունքներն ու պարտականութիւնները:

Քանի որ հանրային ծառայութիւնը
 պետականաշինութեան գործում էական դեր ունի,
 անընդհատ նոր պահանջներ են ներկայացվում
 հանրային ծառայողին և նրա գործունեութեանը:
 Ուստի առօրյա կյանքում սահմանադրական
 իդեալները կյանքի կոչելը՝ հաշվի առնելով ոչ
 միայն հայրենական, այլ և համաշխարհային
 պատմութեան փորձն ու մեր պետականութեան
 ժամանակակից հիմնահարցերին ու նպատակներին
 համահունչ պետական ծառայութեան կայացման
 գործընթացը, տնական ժամանակ և յուրահատուկ
 մոտեցում է պահանջում: Իրականում Յայտնի

Յանրապետութեան յանրային ծառայութեան
իրավական և կադրային ապահովման նոր
տեսիսն ունենալու և ուղիներ ընտրելու մը ոչ միշտ
է իրականացնելու հասարակական մտքի առաջադեմ
ծգտութեան իրատապիսն դիրներն համապատասխան :

Այսպիսով, ինչպես տեսնուի ենք գրական
աղբյուրներն վերլուծութեան յանրային և արված
եզրակացութեան յանրային, հանրային
ծառայութեան կառուցվածքի
կարևոր և անհրաժեշտ տարր է : Այն կապող օղակ է
պետութեան և հասարակութեան միջև : Նրա գլխավոր
հատկանիշը պետական կառավարման
գործառնական յանրային կազմակերպման
և կարգավորման ուղղութեամբ մասնագիտորեն
կատարելու արդյունավետ իրականացնել է :

Իրավական, ժողովրդավարական և սոցիալական
պետութեան զարգացման առաջնային
նախադրյալներն են մեկը արդյունավետ գործող
պետական /հանրային համակարգ և դրա
գործունեութեան համար անհրաժեշտ պայմաններ
ստեղծելն է, ինչը միտված է նաև պետութեան
ընդհանուր գործառնական կատարումն
ապահովելուն :

Յանրային ծառայութեան էութեանը
սոցիալական ուղղվածութեան ունի, քանի որ
հետապնդում է հասարակական օգտակար նպատակներ
և խնդիրներ՝ ծառայելու համագային շահերին :
Լուծելով բազմաթիվ հասարակական և պետական
խնդիրներ՝ հանրային ծառայութեանը կատարում
է պետական իշխանութեան ապահովման,
իրականացման գործառնական, որոնք պետք է
գործեն իշահ հասարակութեան :

Սերտորեն կապված լինելով իշխանութեան
իրականացման, կառավարման տեսիսն ունենալու և
մեխանիզմների հետ՝ հանրային ծառայութեանը

ն պատակ ունի իրականացնել ու սոցիալական կազմակերպման, պլանավորման և կանխատեսման, որոշումներ ի կայացրման և կատարման, սոցիալական հաղորդակցության, համակարգման, վերահսկողության, իրազեկման գործառնություններ: Հանրային ծառայության գործունեության ժամանակակից փուլում ավելի ու ավելի գերակա է դառնում պետական սոցիալական ծառայություններ մատուցել ու միտումը՝ կրթական, դաստիարակչական, իրավունքի պաշտպանության, անվտանգության և այլն: Ելնելով հանրային ծառայության վարչական գործունեության բնույթից՝ կարելի է առանձնացնել այնպիսի գործառնություններ, ինչպիսիք են տեղեկատվական-վերլուծական, կազմակերպատեսիկական, փորձագիտական, ընթացակարգային, ինչպես նաև կառավարչական որոշումներ ի կատարման, ֆինանսատնտեսական, իրավական, կադրային գործառնությունները⁵⁸:

Որպես պետության սոցիալական ակունք նախ և առաջ հանդես են գալիս քաղաքացիական հասարակության, իրավական և ժողովրդավարական պետության առաջնահերթություններն ու արժեքները (մարդու և քաղաքացու իրավունքներ ի ու ազատություններ ի պաշտպանությունը, խոսքի, խղճի, մտքի, դավանանքի ազատությունը, ՁԼՄ-ների ազատությունը, սոցիալական ապահովությունը և այլն):

Հայտնի է, որ որպես պետական կառավարչական գործունեություն ու յորտ՝ հանրային ծառայությունը կազմակերպում է որոշակի սկզբունքներով, որոնք դրված են նրա իրավական կարգավորման և հանրային ծառայողներ ի

⁵⁸ Государственное управление: основы теории и организации (учебник. в 2 т., т. 2). Под ред. В. А. Козбаненко, Изд. 2-е, с изм. и доп., М., «Статус», 2002, 592 с., с. 225.

գործունեության հիմքում: Հանրային ծառայության սոցիալ-իրավական հիմքեր են հասարակության զարգացմանը միտված պաշտոնապետ հռչակված առաջնահերթություններն ու ուղղությունները, դրանց համապատասխանող պետական կառույցների նպատակները, ինչպես նաև հանրային ծառայության գործառնության և կազմակերպման սկզբունքներն ու հիմունքները:

Հասարակական-տնտեսական կյանքի, քաղաքական համակարգի բնույթը և պետական ապարատի ներքին կառուցվածքը, պետական ծառայողների անձնակազմը որոշում են հանրային ծառայության սոցիալական դերը և սոցիալական կարգավիճակը: Ի վերջո, հանրային ծառայության գործունեությունը արդյունավետ կլինի, եթե այն օգտակար կլինի հասարակության համար և լուծի վերջինիս կողմից առաջադրված խնդիրները:

Հանրային ծառայությունը պետք է մարմնավորի մի կողմից իրավական ինստիտուտների համակարգը՝ իրավական նորմերով ու օրենքներով հանդերձ, որոնք բնորոշում են պետության նպատակների և գործառնության ձևավորման ու իրականացման կարգը, մյուս կողմից՝ ժողովրդին, որը կառավարվում է այդ օրենքներով: Իսկ հանրային ծառայությունը այն մարդկանց ամբողջությունն է, որոնք հատուկ պատրաստված են և մասնագիտորեն զբաղված են պետական ապարատում պետության սոցիալական դերի մարմնավորմամբ:

Այսպիսի միասնականության շնորհիվ հանրային ծառայությունը ստանում է հանրային-իրավական ինստիտուտի կարգավիճակ և ինքնուրույն տեղ է գրավում պետական, իրավական և հասարակական ինստիտուտների շարքում:

Այսպիսով, բազմաթիվ գիտական աղբյուրների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ

հանրային ծառայություն համակարգի
 կատարելագործումը և հանրային ծառայողի
 սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները
 կարևոր դեր են խաղում պետության կայացման և
 պետական կառավարման իրականացման գործում:
 Հասարակական փորձը ցույց է տալիս, որ պետական
 ապարատի կատարելագործումը և վերակառուցումը
 չեն և լուծում առաջացած խնդիրները, եթե հանրային
 ծառայողի անձը չի համապատասխանում զբաղեցրած
 պաշտոնին, և նա իր անձնային հատկություններով
 չի կարող իրականացնել օրենքով սահմանված
 գործառնությունները: Հանրային ծառայության
 ոլորտը՝ որպես հասարակություն հետ
 անմիջականորեն փոխհարաբերվող բնագավառ,
 հոգեբանական տեսանկյունից համարվում է բարդ,
 քանի որ ենթադրում է «մարդ-մարդ»
 փոխհարաբերություններ, ինչը նոր համակարգային
 մոտեցման պահանջ է ներկայացնում պետական
 կառավարման համակարգում աշխատող անձի
 մասնագիտական և հոգեբանական որակներին:

Համայնքային ծառայությունները հանրային
 ծառայության ինքնուրույն տեսակ է, որի
 հիմնախնդիրները քննարկում են թաղարձ
 համայնքային ծառայության
 յուրահատկություններն և ս: Ինչպես հայտնի է,
 համայնքային ծառայության միջոցով է
 իրականացվում պետության և քաղաքացու
 անմիջական կապը: Տեղական ինքնակառավարման
 մարմինները քաղաքականություններ իրականացնում
 են համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու և
 հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց
 միջոցով՝ Հայաստանի Հանրապետության
 օրենքներով նրանց վերապահված
 լիազորություններն շրջանակներում, քաղաքական

որոշուումներ ընդունելով և համակարգելով դրանց կատարումը:

Համայնքային ծառայությունը քաղաքական ու ժողովի հարաբերակցության փոփոխությունից կամ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքներից անկախ մասնագիտական գործունեություն է, որն իրականացնում է համայնքների ղեկավարների, երևանում՝ երևանի քաղաքապետարանի աշխատակազմերում՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով այդ մարմիններին վերապահված խնդիրներն ու գործառնությունները:

Համայնքային ծառայողը համայնքի ղեկավարի աշխատակազմում համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված որևէ պաշտոն (բացառությամբ ժամանակավոր թափուր պաշտոնի) զբաղեցնող անձն է: Ինչպես հանրային ծառայության, այնպես էլ համայնքային ծառայության պաշտոնների անձնագիրը օրենքով սահմանված կարգով հաստատված մի փաստաթուղթ է, որը սահմանում է տվյալ պաշտոնն զբաղեցնող համայնքային ծառայողի համար օրենքով և իրավական այլ ակտերով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար համայնքային ծառայողին մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող, ինչպես նաև համայնքային ծառայության դասային համապատասխան աստիճան ունենալու պահանջները: Այդ փաստաթուղթը պարունակում է տվյալ պաշտոնի համար անհրաժեշտ մի շարք մասնագիտական և անձնային առանձնահատկություններ և:

Համայնքային ծառայության պաշտոնները դասակարգվում են ըստ խմբերի՝ ելնելով այդ

պաշտոնն զբաղեցնող անձանց աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու և լիազորություններ, շփումներ և ներկայացուցչություն, խնդիրներ քարդություն և դրանց ստեղծագործաբար և լուծելու պահանջի, ինչպես նաև գիտելիքներ և հմտություններ անհրաժեշտ մակարդակից:

Չամայնքային ծառայության պաշտոնները դասակարգվում են հետևյալ խմբերի.

ա) համայնքային ծառայության գլխավոր պաշտոններ

բ) համայնքային ծառայության առաջատար պաշտոններ

գ) համայնքային ծառայության կրտսեր պաշտոններ:

Չամայնքային ծառայության պաշտոնների յոլրաքանչյոլր խումբ դասակարգվում է 1-ին, 2-րդ և 3-րդ ենթախմբերի, որտեղ 1-ինը սվյալ խմբի քարծրագոյն ենթախումբն է: Չամայնքային ծառայության գլխավոր պաշտոնների 1-ին ենթախմբում ընդգրկվում է 15 հազարից ավելի բնակչոլթյոլն ոլնեցող համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտոլղարի պաշտոնը:

Չամայնքային ծառայության պաշտոնների յոլրաքանչյոլր խմբի յոլրաքանչյոլր ենթախմբի ընդհանոլր նկարագիրը հաստատոլմ է Չայաստանի Չանրապետոլթյան կառավարոլթյան և լիազորած պետական կառավարման մարմինը: Ինչպես երևոլմ է համայնքային ծառայոլթյան նկարագրոլթյոլնից, անձը նմանատիպ ծառայոլթյոլնոլմ աշխատելիս պետք է գինված լինի մասնագիտական գիտելիքներով և հմտոլթյոլններով: Խոսքը վերաբերոլմ է մասնագիտական կոմպետենտոլթյանը, որին կանդրադառնանք հետագայոլմ:

Համայնքային ծառայողական ոլորտում կոմպետենտությունը հանգամանալից դիտարկել է Վ. Ի. Վասիլևը: Հեղինակը նշում է, որ ըստ իրենց նշանակության՝ տեղական ինքնակառավարման մարմինները բաժանվում են ընդհանուր և հատուկ իրավասություններ ունեցող մարմինների, այսինքն՝ «մարմիններ, որոնք լուծում են մեկ բնագավառով չսահմանափակվող հարցերի լայն շրջանակ, և մարմիններ, որոնք կոչված են դեկավարելու մեկ ոլորտ, գործերի հատուկ շրջանակ»⁵⁹: Առաջին կատեգորիային պատկանում են ներկայացուցչական մարմինները, երկրորդին՝ տեղական ինքնակառավարման մարմինների ստորաբաժանումները:

Սակայն համայնքային ծառայողների կոմպետենտության հոգեբանական մեկնաբանությունը վերաբերում է միայն այն հարցերի շրջանակին, որոնք կարող են լուծել համայնքի կառավարման այս կամ այն կառուցվածքային ստորաբաժանումները: Համայնքային ծառայողների մասնագիտական կոմպետենտության նման ըմբռնումը ենթադրում է ինչպես անհրաժեշտ գիտելիքների ու կարողությունների, այնպես էլ այնպիսի հոգեբանական առանձնահատկությունների և որակների առկայություն, որոնք պետք է ունենա համայնքային ծառայողը:

Ինչպես նշվում է բազմաթիվ տեսական աղբյուրներում, համայնքային ծառայողների մասնագիտական կոմպետենտությունը ներառում է այն հմտություններն ու կարողությունները, տեսական գիտելիքները, որոնք վերաբերում են ծառայողական լիազորություններին և գործառնություններին: Առաջին հերթին դրանք

⁵⁹ В. И. Васильев, Местное самоуправление. Учебное и научно-практическое пособие, М., 1999, 453 с., с. 173.

վերաբերում է նաև իրավիճակի պլանավորման, համակարգման, կարգավորման, կազմակերպման, վերլուծության, որոշմների մշակման և այն ամենին, ինչը ենթադրում է բուն կառավարումը, կառավարչական շրջափոխումը⁶⁰:

Այսպիսով, համայնքային կառավարման համակարգում մասնագիտական կոմպետենտությունը շատ նեղ իմաստ ունի. սահմանում է միայն այն հարցերի շրջանակը, որոնք լիազորված է լուծելու համայնքային ծառայողը:

Համայնքային ծառայողի աշխատանքի հոգեբանական կողմերը մեկնաբանելու համար անհրաժեշտ է անդրադառնալ նրա հիմնական գործառնություններին: Նա կազմակերպում է, ծրագրում, համակարգում, ղեկավարում, վերահսկում է կատարվող աշխատանքները: Այսպիսի գործառնություններ իրականացնելու համար հարկավոր է ոչ միայն գիտելիքների մեծ պաշար, այլև կառավարչին բնորոշ հոգեբանական որակներ: Համայնքային ծառայողն ունի ենթակա աշխատողներ, ուստի նրանից պահանջվում է թիմում աշխատելու կարողություն և պատվիրակման ունակություններ: Նա ընդունում է որոշումներ, տալիս է հանձնարարականներ՝ առնչվելով կառավարման հոգեբանության այնպիսի համընդհանուր խնդիրների, ինչպիսիք են որոշումների կայացման հոգեբանական յուրահատկությունները: Իր գործունեության բնույթից ելնելով՝ համայնքային ծառայողն անընդհատ նոր հարաբերություններ է հաստատում թե՛ քաղաքացիների և թե՛ կառավարման այլ

⁶⁰ **Васильев Е. И., Зерчанинова Т. Е.,** Социальный аудит профессиональной компетентности государственных служащих, Вопросы управления, 2012, N 4 (21).

Деркач А. А., Зазыкин В. Г., Маркова А. К., Психология развития профессионала: Учебное пособие, М., Издательство РАГС, 2000, 124 с.

Анисимов О. С., Деркач А. А., Основы общей и управленческой акмеологии. М., РАГС, 1995, 272с.

մարմինների հետ: Նրա աշխատանքը ենթադրում է ամենօրյա առնչություն մարդկանց տարբեր խմբերի հետ: Հաղորդակցման ընդունակությունների զարգացումը համարվում է նրա աշխատանքի կարևոր բաղադրիչը: Խնդիրների լուծման տեսանկյունից համայնքային ծառայողը բացահայտում, վերլուծում, գնահատում է ռազմավարական և կազմակերպական բնույթի խնդիրներ, ինչպես նաև գտնում է դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումները: Այստեղ խոսքը մտածողության յուրահատկությունների մասին է:

Համայնքային ծառայողների այսպիսի աշխատանքը ենթադրում է կազմակերպչական մեծ ընդունակություններ՝ գործունեության նպատակի հստակ որոշում, իր և ենթակաների աշխատանքները պլանավորելու կարողություն, վերջիններիս գործունեությունը համակարգելու, պարտականությունները բաշխելու ընդունակություն: Մարդկանց ղեկավարելու համար անհրաժեշտ է, որ համայնքային ծառայողը դրսևորի ստեղծագործական մոտեցում, անհատական վերաբերմունք և որոշումներ ընդունելիս հաշվի առնի դրանց հեռանկարային լինելը:

Որոշումների ընդունման գործառնություն առավել բնորոշ է ղեկավարի գործունեությանը. այն լայնորեն ներկայացված է կառավարչական գործունեության մեջ: Համաձայն կառավարման տեսության՝ որոշում ընդունելու գործառնությունը ղեկավարի գործունեության առանցքն է⁶¹: Ղեկավարի գործունեության էությունն այնքանի գիտակցումն է, որ ինքը կառավարման համակարգում է գտնվում որոշումներ կայացնելու և դրանց համար պատասխանատվություն կրելու համար: Հարկ է նշել,

⁶¹ Макаров В. М., Попова В. Г., Менеджмент, Учебное пособие, Стандарт третьего поколения. СПб, Питер, 2011, 256с., с.142

որ նա պետք է տիրապետի շփման հիմնական՝ տեղեկատվական, ճանաչողական, հոլզական գործառույթներին: Ղեկավարը կիրառում է հաղորդակցման վերբալ և ոչ վերբալ միջոցներ: Բարձր զարգացած խոսքի մշակույթը ոչ միայն ընդհանուր մտավոր զարգացածության ցուցանիշ է, այլև ղեկավարի հեղինակությունը պահպանելու միջոց: Խոսքային շփման ժամանակ կարևոր են ոչ միայն տեքստի իմաստը, այլև ենթատեքստը: Տեղեկատվության առումով շատ կարևոր է նաև ոչ վերբալ հաղորդակցումը՝ շեշտադրությունը և դիմախաղը: Ընդհանրապես, ղեկավարի հաղորդակցման բարձր մշակույթը շրջապատի կողմից նրա ճիշտ հասկացված լինելու նախապայման է ⁶²:

Այսպիսով, համայնքային ծառայությունը, լինելով հանրային ծառայության կարևոր բաղադրամաս, հոգեբանական տեսանկյունից բարդ ոլորտ է, ինչը պահանջում է հոգեբանական մասնագիտական պատրաստվածություն և անընդհատ կատարելագործվելու ունակություն:

⁶² Бандурка А. М., Бочарова С.П., Землянская Е.В., Психология управления, Харьков, ООО, Фортуна – Пресс, 1998, 464с., с. 209-211

1.2. Հանրային ծառայությունների մասնագիտական գործունեության և պաշտոնավարման առանձնահատկությունները

Հանրային ծառայությունների համակարգի ամբողջական ուսումնասիրությունը պահանջում է անդրադառնալ նաև այս համակարգում պաշտոնատարան ձևացնող գործառնությունների իրականացման յուրահատկություններին: Հանրային ծառայությունների մասնագիտական գործունեությունը պահանջում է մասնագիտական և հոգեբանական կոմպետենցիաներ: Մասնագիտական յուրահատկությունները մեկնաբանելու համար անդրադառնանք այն իրավական դաշտին, որով կանոնակարգվում է հանրային ծառայությունների համակարգը:

Հանրային ծառայությունների հիմնական նպատակը պետությունների խնդիրների և գործառնությունների իրականացումն է: «Հանրային ծառայությունների մասին» ՀՀ օրենքում (6-րդ հոդված) նշված են հանրային ծառայություն առջև դրված մի շարք խնդիրներ, որոնցից են⁶³.

- ✓ սահմանադրական կարգի պահպանումը,
- ✓ պետության կառավարման գործառնությունների իրականացումը,
- ✓ հասարակական կյանքի սոցիալ-տնտեսական և քաղաքական ոլորտներում կայունության ապահովումը,
- ✓ քաղաքական որոշումների պատրաստումը և իրականացումը,
- ✓ հասարակության քարտեզագրության ապահովումը,
- ✓ մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանությունը,

⁶³ «Հանրային ծառայությունների մասին» ՀՀ օրենք, 6-րդ հոդված:

- ✓ օրենսդրություններ նախատեսված դեպքերում պետական հարկադրանքի կիրառումը,
- ✓ հասարակական կարգի պահպանումը և այլն:

Որպեսզի պետական մարմինները և պաշտոնատարան ձինք կարողանան իրականացնել վերը նշված խնդիրները, պետք է օժտված լինեն որոշակի լիազորություններով ու գործառնություններով:

Ցանկացած մասնագիտական գործունեություն, մասնավորապես պետական համակարգում, կանոնակարգվում է օրենսդրությամբ, որտեղ ամրագրվում է ոլորտը կարգավորող հասարակական հարաբերություններին մասնակիցների իրավունքների ու պարտականությունների շրջանակը: Վերջիններս, ուղղակիորեն անդրադառնալով մասնագետի անձնային և վարքային դրսևորումներին, կերտում են նրա հոգեբանական դիմանկարը: Հանրային ծառայողների մասնագիտական պատրաստման և նրանց հոգեբանական առանձնահատկություններին վերլուծությունն իրացնող անդրադառնանք ոլորտը կանոնակարգող ՀՀ օրենսդրական ակտերին:

Հայաստանի Հանրապետությունում պետծառայողական հարաբերություններն առավել կանոնակարգվեցին ՀՀ Սահմանադրության փոփոխությունից հետո: Հանրային ծառայության բնագավառը ստացավ սահմանադրաիրավական ամրագրում (ՀՀ Սահմանադրության 30.2-րդ հոդված):

Հանրային ծառայության ոլորտում կարևորագույն քայլ էր ՀՀ Ազգային ժողովի կողմից 2011 թվականի մայիսի 26-ին «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի ընդունումը:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային ծառայությունը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով պետությանը

վերապահված լիազորություններն է, որն ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը, պետական և համայնքային պաշտոնները:

Պետական ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական մարմիններին վերապահված խնդիրներին և գործառույթների իրականացմանը:

Պետական ծառայությունն ընդգրկում է քաղաքացիական ծառայությունը, դատական ծառայությունը, դիվանագիտական ծառայությունը, հատուկ ծառայությունները՝ պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության, հարկային, մաքսային, փրկարար ծառայության հանրապետական գործադիր մարմիններում, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայությունը, Ազգային անվտանգության խորհրդում, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտում, ինչպես նաև օրենսքննչական խառնուրդով ձևավորված ծառայություններ:

Համայնքային ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված խնդիրներին և գործառույթների իրականացմանը:

Այսպիսով, հանրային ծառայության և վերջինիս բովանդակությունը կազմող տարրերի օրենսդրական վերոհիշյալ սահմանումներին հետևում է, որ այն պետության առջև դրված խնդիրներին լուծմանն ու նպատակների իրագործմանը կոչված գործունեություն է, որն

իրականացվում է մասնագիտական գործունեության միջոցով:

Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության հարաբերությունները կարգավորվում են շուրջ երկու տասնյակ օրենքներով («Քաղաքացիական ծառայության մասին», «Համայնքային ծառայության մասին», «Ոստիկանությունում ծառայության մասին», «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին», «Դիվանագիտական ծառայության մասին», «Դատական ծառայության մասին», «Մաքսային ծառայության մասին», «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին», «Հայաստանի փրկարար ծառայության մասին», «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքներ և այլն): Պետական ծառայության բնագավառը կարգավորվում է նաև մի շարք ենթաօրենսդրական ակտերով, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի որոշումներով և գերատեսչական բազմաթիվ այլ ակտերով:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանվում են Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության սկզբունքները, կազմակերպման կարգը, էթիկայի կանոնները, ինչպես նաև կարգավորվում են բարձրաստիճանի պաշտոնատար անձանց գոյքի, եկամուտներին և փոխկապակցված անձանց մասին հայտարարագրման հետ կապված հարաբերությունները: Նշված օրենքի գործողությունը տարածվում է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում նշված մարմիններում հանրային ծառայության պաշտոններին անվանացանկով նախատեսված պաշտոն զբաղեցնող անձանց վրա: Օրենքի գործողությունը տարածվում է

բարձրաստիճան պաշտոնատար անձանց վրա միայն «Հանրային ծառայություն մասին» ՀՀ օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում:

Պետական պաշտոններն են՝ քաղաքական (բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների), պաշտոնների, հայեցողական (բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների, երևանի գլխավոր ճարտարապետի, երևանի վարչական շրջանի ղեկավարի և նրա տեղակալի, Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների օգնականների, երևանի գլխավոր ճարտարապետի օգնականի պաշտոնները), քաղաքացիական, ինչպես նաև պետական ծառայության պաշտոնները:

Համայնքային պաշտոններն են՝ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների, Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների, երևանի գլխավոր ճարտարապետի, երևանի վարչական շրջանի ղեկավարի և նրա տեղակալի, Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների օգնականների, երևանի գլխավոր ճարտարապետի օգնականի, Հայաստանի Հանրապետության համայնքների ավագանիների անդամների, ինչպես նաև համայնքային ծառայության պաշտոնները:

Միաժամանակ պետք է նշել, որ հանրային ծառայության՝ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված որոշ պաշտոններ գրադեցնելը

(ը ն տր ու թ յ ա ն կ ամ ն շ ա ն ա կ մ ա ն ս կ զ ք ու և ք ո վ)
ի ն ք ն ա ք ե ր ա ք ա ր չ ի ե ն թ ա դ ր ու մ պ ե տ ա կ ա ն
ծ առ ա յ ու թ յ ու և : Յ ամ ա ձ ա յ ն «Յ ա ն ր ա յ ի ն
ծ առ ա յ ու թ յ ա ն մ ա ս ի ն » Յ Յ օ ր ե ն ք ի 4-ր դ հ ո դ վ ա ծ ի 13-ր դ
մ ա ս ի ` պ ե տ ա կ ա ն ծ առ ա յ ու թ յ ա ն պ ա շ տ ո ն ը պ ե տ ա կ ա ն
ծ առ ա յ ու թ յ ա ն պ ա շ տ ո ն ն ե ր ի ա ն վ ա ն ա ց ա ն կ ո վ
ն ա խ ա տ ե ս վ ա ծ պ ա շ տ ո ն է , ո ր ն զ ք ա դ ե ց ն ե լ ու
պ ա յ մ ա ն ն ե ր ը ս ա հ մ ա ն վ ու մ ե ն պ ե տ ա կ ա ն
ծ առ ա յ ու թ յ ա ն առ ա ն ձ ի ն տ ե ս ա կ ն ե ր ը կ ա ր գ ա վ ո ր ո դ
Յ ա յ ա ս տ ա ն ի Յ ա ն ր ա պ ե տ ու թ յ ա ն օ ր ե ն ք ն ե ր ո վ :

Ա յ դ պ ի ս ի ք ե ն , մ ա ս ն ա վ ո ր ա պ ե ս , «Յ ա ն ր ա յ ի ն
ծ առ ա յ ու թ յ ա ն մ ա ս ի ն » Յ Յ օ ր ե ն ք ի 4-ր դ հ ո դ վ ա ծ ու մ
թ վ ա ր կ վ ա ծ ք ա դ ա ք ա կ ա ն պ ա շ տ ո ն ն ե ր ը (Յ ա յ ա ս տ ա ն ի
Յ ա ն ր ա պ ե տ ու թ յ ա ն ն ա խ ա գ ա հ ի , Յ ա յ ա ս տ ա ն ի
Յ ա ն ր ա պ ե տ ու թ յ ա ն Ա զ գ ա յ ի ն ժ ո դ ո վ ի
պ ա տ գ ա մ ա վ ո ր ն ե ր ի , Յ ա յ ա ս տ ա ն ի Յ ա ն ր ա պ ե տ ու թ յ ա ն
վ ա ր չ ա պ ե տ ի , Ա զ գ ա յ ի ն ա ն վ տ ա ն գ ու թ յ ա ն խ ո ր հ ր դ ի
ք ա ր տ ու դ ա ր ի , Յ ա յ ա ս տ ա ն ի Յ ա ն ր ա պ ե տ ու թ յ ա ն
ն ա խ ա ր ա ր ն ե ր ի և Յ ա յ ա ս տ ա ն ի Յ ա ն ր ա պ ե տ ու թ յ ա ն
հ ա մ ա յ ն ք ն ե ր ի դ ե կ ա վ ա ր ն ե ր ի պ ա շ տ ո ն ն ե ր ը), ո ր ո ն ք
զ ք ա դ ե ց ն ո դ պ ա շ տ ո ն ա տ ա ր ա ն ձ ի ն ք Յ ա յ ա ս տ ա ն ի
Յ ա ն ր ա պ ե տ ու թ յ ա ն օ ր ե ն ս դ ր ու թ յ ա մ ք ի ր ե ն ց
վ ե ր ա պ ա հ վ ա ծ լ ի ա գ ո ր ու թ յ ու և ն ե ր ի շ ր ջ ա ն ա կ ու մ
ը ն դ ու և ու մ ե ն ք ա դ ա ք ա կ ա ն ո ր ո շ ու մ ն ե ր և
հ ա մ ա կ ա ր գ ու մ դ ր ա ն ց կ ա տ ա ր ու մ ը : Ք ա դ ա ք ա կ ա ն
պ ա շ տ ո ն զ ք ա դ ե ց ն ո դ պ ա շ տ ո ն ա տ ա ր ա ն ձ ը փ ո խ վ ու մ է
ք ա դ ա ք ա կ ա ն ու ժ ե ր ի հ ա ր ա ք ե ր ա կ ց ու թ յ ա ն
փ ո փ ո խ ու թ յ ա ն դ ե պ ք ու մ ` ք ա ց առ ու թ յ ա մ ք օ ր ե ն ք ո վ
ն ա խ ա տ ե ս վ ա ծ դ ե պ ք ե ր ի :

«Յ ա ն ր ա յ ի ն ծ առ ա յ ու թ յ ա ն մ ա ս ի ն » Յ Յ օ ր ե ն ք ի 4-ր դ
հ ո դ վ ա ծ ի 4-ր դ մ ա ս ու մ ա մ ր ա գ ր վ ա ծ է , ո ր ք ա դ ա ք ա կ ա ն
պ ա շ տ ո ն ն ե ր (ք ա ց առ ու թ յ ա մ ք ը ն տր ո վ ի ք ա դ ա ք ա կ ա ն
պ ա շ տ ո ն ն ե ր ի) կ ա ր ո դ ե ն զ ք ա դ ե ց ն ե լ Յ ա յ ա ս տ ա ն ի
Յ ա ն ր ա պ ե տ ու թ յ ա ն ա յ ն ք ա դ ա ք ա ց ի ն ե ր ը , ո ր ո ն ք ու և ն ե ն
ք ա ր ձ ր ա գ ու յ ն կ ր թ ու թ յ ու և : Ս ա կ ա յ ն օ ր ե ն ք ը չ ի

նշում, թե ինչ մասնագիտական կրթության մասին է խոսքը, հետևաբար այդ պաշտոնն զբաղեցնող անձը չի անցնում հատուկ պարտադիր պատրաստությանը և հետևյալ դպաշտոնն զբաղեցնելու համար: Մինչդեռ կառավարման հոգեբանության գիտական հայեցակարգերում խոսվում է այն մասին, որ մասնագիտության, անձի հոգեբանական առանձնահատկություններին և նրա աշխատանքային գործունեության միջև գոյություն ունի հստակ համապատասխանության մեխանիզմ⁶⁴: Հայրենական և արտասահմանյան հետազոտություններում բազմիցս արձանագրվել է այն փաստը, որ մասնագիտական կրթությունը զարգացնում է անձի աշխատանքային գործունեության համար անհրաժեշտ հոգեբանական և մասնագիտական որակներ: Ընտրովի քաղաքական պաշտոններին համար օրենքը որևէ կրթություն չի նշում: Քաղաքական պաշտոնն զբաղեցնող պաշտոնատար անձանց գործունեության սկզբունքներին և կազմակերպման կարգի հետ կապված հարաբերությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 13-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, հանրապետության Նախագահի հրամանագրերով և այլ իրավական ակտերով (տե՛ս Հավելված 1)⁶⁵:

Հավելվածում ներկայացված նյութերից երևում է, որ հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձինք կարիք ունեն հոգեբանական պատրաստության: Որոշումներին կայացման հոգեբանական

⁶⁴ **Бодров В. А.**, Психология профессиональной деятельности, Теоретические и прикладные проблемы, М., РАН, 2006, 624 с.

⁶⁵ **Լոբյան Ա.**, Հանրային ծառայողներին մասնագիտական գործունեության հոգեբանական առանձնահատկությունները, Երևան, ՀՀ պետական կառավարման ակադեմիա, 2015, 240 էջ, էջ 216-218:

տեսությունը հաստատում է նայագործը նթացի և հոգեկաներևոյթների միջև կապը :

Քաղաքացիական պաշտոնը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով որոշակի ժամանակահատվածով նշանակովի կամ ընտրովի պաշտոն է, որն զբաղեցնող պաշտոնատար անձը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորություններ շրջանակում՝ կոլեգիալ, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև անհատական հիմունքներով ընդունում է որոշումներ ու համակարգում դրանց կատարումը և իր պաշտոնավարման ժամանակահատվածում քաղաքական ու ժերի հարաբերակցության փոփոխության դեպքում չի փոխվում : Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական պաշտոնների դասակարգումը ներկայացված է «Հանրային ծառայություն մասին» ՀՀ օրենքում (տե՛ս հավելված 2):

Հանրային ծառայողի մասնագիտական գործունեության պատկերի մեկնաբանությունը (պրոֆեսիոգրամա) ենթադրում է նախ հանրային ծառայության հիմնական սկզբունքների դիտարկում : Ըստ «Հանրային ծառայություն մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ հանրային ծառայության հիմնական սկզբունքներն են՝

- 1) ՀՀ Սահմանադրության և օրենքների գերակայությունը .
- 2) մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների առաջնահերթությունը .
- 3) հանրային ծառայության կայունությունը .
- 4) օրենքի առջև հանրային ծառայողների իրավահավասարությունը .

- 5) հանրային ծառայությունների հրապարակայնությունը .
- 6) հանրային ծառայությունների քաղաքական գույքազուրկությունը .
- 7) քաղաքացիների համար հանրային ծառայությունների հավասար մատչելիությունը՝ իրենց մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին համապատասխան .
- 8) հանրային ծառայությունների արհեստավարժությունը .
- 9) հանրային ծառայությունների իրավական և սոցիալական պաշտպանվածությունը .
- 10) անկողմնակալությունը .
- 11) ազնվությունը .
- 12) հարգանքը անձի նրա իրավունքներին հանդեպ .
- 13) պատասխանատվության զգացումը :

Նշված սկզբունքները չափման չեն ենթարկվում, ուստի որևէ մեթոդով դժվար է ստուգել կամ վերահսկել՝ հետևում են արդյոք հանրային ծառայություն այդ սկզբունքներին: Իսկ դանշանակում է, որ այս պարագայում մնում է հիմնվել համապատասխան անձնային որակների վրա: Օրինակ՝ անկողմնակալությունը, ազնվությունը, հարգանքը անձի և նրա իրավունքներին հանդեպ, պատասխանատվության զգացումը առաջին հերթին կրում են բարոյական բնույթ, և դրանց կենսագործումը ծառայողական իրավահարաբերություններում միանշանակ չէ: Ենթադրվում է, որ արդյունավետ հանրային ծառայություն իրականացնելու համար մասնագետից պահանջվում են հետևյալ հոգեբանական որակները՝

- ✓ ինքնակարգավորման հմտություններ
- ✓ հաղորդակցման կարողություն

- ✓ սթրեսսակայունություն
- ✓ հանդուրժողականություն
- ✓ վճռականություն
- ✓ նպատակասլացություն
- ✓ ստեղծարարմտածելակերպ:

1.3.3 Զանրային ծառայություն անպաշտոններին դասակարգումը և նկարագրերը

Զանրային ծառայությունը, ինչպես արդեն նշել ենք, պետությունը Յայաստանի Յանրապետության Սահմանադրությունում և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը, պետական և համայնքային պաշտոնները:

Պետական կառավարման և հանրային ծառայության հիմնական տարրը պաշտոնն է, որի միջոցով իրականացվում է պրոֆեսիոնալ ծառայողական գործունեություն:

Զանրային պաշտոնը պետական մարմինների համակարգում հաստիքային միավոր է, որն ապահովում է պետական մարմինների լիազորությունների իրականացումը:

Զանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է իր գործունեությունն իրականացնելիս առաջնորդվել միայն հանրային շահերով:

«Զանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում հանրային ծառայության պաշտոնը սահմանվում է որպես պետական և համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկերով նախատեսված պաշտոն:

Նույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանվում է «պետական ծառայության պաշտոն» հասկացությունը. «Պետական ծառայության պաշտոնը

պետական ծառայությունների
անվանացանկով նախատեսված պաշտոն է, որն
գրադեցնելու առանձնահատկությունները
սահմանվում են պետական ծառայություն
տեսակները կարգավորող Հայաստանի
Հանրապետության օրենքներով»⁶⁶:

Պետական ծառայություն
պաշտոնում նախատեսված են պետական
ծառայողների որոշակի դասային աստիճաններ և
կոչումներ: Օրինակ՝ քաղաքացիական ծառայության
պաշտոնում սահմանվում են քաղաքացիական
ծառայության դասային աստիճաններ,
դիվանագիտական ծառայության պաշտոնում՝
դիվանագիտական աստիճաններ, գիևվորական
ծառայության պաշտոններում՝ գիևվորական և
հատուկ կոչումներ և այլն:

Հանրային ծառայության դասային աստիճանը
բնորոշվում է որպես տվյալ հանրային ծառայողի
մասնագիտական գիտելիքներին ու աշխատանքային
ունակություններին համապատասխանող
որակավորման չափանիշ («Հանրային ծառայության
մասին»

ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետ): Որքան
բարձր է դասային աստիճանը, նույնքան բարձր պետք
է լինի հանրային ծառայողի գիտելիքներին և
ունակություններին մակարդակը:

Հանրային ծառայության դասային աստիճաններ
(կոչումներ) սահմանելու, ինչպես նաև դրանք
շնորհելու, իջեցնելու, դրանցից զրկելու հետև
կապված հարաբերությունները կարգավորվում են
պետական ծառայության առանձին տեսակներով,
ինչպես նաև համայնքային ծառայությունը
կարգավորող Հայաստանի Հանրապետության

⁶⁶ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 13-րդ
կետ:

օրենքներով և այլ իրավական ակտերով: Համաձայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի՝ հանրային ծառայության պաշտոններ խմբերի և ենթախմբերի դասակարգման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են պետական ծառայության առանձին տեսակները, ինչպես նաև համայնքային ծառայությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով: Համաձայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ հանրային ծառայության յուրաքանչյուր տեսակի համար նախատեսվում են պաշտոնների անվանացանկեր, որոնք հաստատվում են պետական ծառայության առանձին տեսակները, ինչպես նաև համայնքային ծառայությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:

Հանրային ծառայության առանձին տեսակների դասային աստիճանների (կոչումների) համապատասխանությունը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Պետական ծառայողների լիազորությունների չափը որոշելու համար կիրառվում է պետական ծառայության պաշտոնների դասակարգումը ըստ որոշակի ոլորտների և խմբերի: Համապատասխան խմբի պաշտոնների համար սահմանվում են պետական ծառայողների որակավորման պահանջները, այդ պաշտոններում նշանակումների հերթականությունը, նրանց դասային աստիճանների, դիվանագիտական աստիճանների, գիևվորական և հատուկ կոչումների շնորհման կարգը, ինչպես նաև պետական ծառայությանը վերաբերող այլ հարցեր:

Որակավորմանը ներկայացվող պահանջների թվին դասվում են մասնագիտական կրթության մակարդակը, պետական ծառայության ստաժը կամ մասնագիտական

ստաժը, մասնագիտական այն գիտելիքների իմացությունը, որոնք անհրաժեշտ են պաշտոնական պարտականությունները կատարելու համար:

Հանրային ծառայության պաշտոնները դասակարգվում են՝ ըստ այդ պաշտոնները զբաղեցնող անձանց աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու կամ իրագործելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանք ստեղծագործաբար լուծելու պահանջի, ինչպես նաև գիտելիքների և հմտությունների անհրաժեշտ մակարդակի:

Հանրային ծառայության անանձին տեսակների պաշտոնների խմբերի համապատասխանությունը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հանրային ծառայության պաշտոն է համարվում հանրային ծառայության տվյալ տեսակի պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոնը:

Վերջերս գործածության մեջ են մտել «պաշտոնի անձնագիր» (նկարագիր)», «աշխատանքի նկարագիր» հասկացությունները, որոնք կիրառվում են թե՛ մասնավոր, թե՛ պետական հատվածում:

Պաշտոնի անձնագիրը (նկարագիրը) տվյալ պաշտոնի էությունը բնութագրող փաստաթուղթ է, որը, որպես կանոն, ներառում է պաշտոնի անվանումը, վերջինիս տեղը կազմակերպության կառավարման կազմակերպական կառուցվածքում, պաշտոնի նպատակներն ու խնդիրները, պաշտոնյայի հիմնական իրավունքներն ու պարտականությունները, աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը, որոշումներ կայացնելու լիազորությունները, շփումների և ներկայացուցչության սահմանները, խնդիրների

բարդութեան մակարդակներին և դրանց լուծման ժամանակ ստեղծագործական լուծումներ կիրառելու նպատակահարմարութեանը, ինչպես նաև գիտելիքներին, հմտութեաններին և աշխատանքային փորձի ներկայացվող պահանջները:

Խոսելով հանրային ծառայության պաշտոնի մասին՝ անհրաժեշտ է բնութագրել նաև «հանրային ծառայության անձնագիր» հասկացությունը: Տվյալ պաշտոնն զբաղեցնող ծառայողի համար հանրային ծառայության անձնագիրը օրենքով և իրավական այլ ակտերով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները նկարագրող և տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար հանրային ծառայողին մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացնող, ինչպես նաև դասային համապատասխան աստիճան ունենալու պահանջները սահմանող՝ օրենքով նախատեսված կարգով հաստատված փաստաթուղթ է («Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ):

Քաղաքացիական ծառայության պաշտոններին դասակարգման հիմքում դրվել են տվյալ պաշտոնն զբաղեցնող անձանց աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորություններին, շփումներին և ներկայացնող չառայան, խնդիրներին բարդութեան և դրանց ստեղծագործական լուծման պահանջի, ինչպես նաև գիտելիքներին և հմտութեաններին անհրաժեշտ մակարդակները բնութագրող գործունեությունը, որոնց միջոցով լուծվում են միջարք հիմնախնդիրներ:

Միաժամանակ պետական ծառայության ընդունվելու համար օբյեկտիվորեն նախատեսված են որոշ սահմանափակումներ (տարիքային,

մասնագիտական և այլն), որոնք բխում են գործունեության այդ տեսակի առանձնահատկություններից և այն իրականացնող քաղաքացիների իրավական առանձնահատուկ կարգավիճակից: Այսպիսի ընդհանուր հիմունքներով են կանոնակարգվում ոչ միայն պետական, այլև հանրային ծառայության ընդունվելու հետկապված հարաբերությունները:

Հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն հանրային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով (նկարագրով) ներկայացվող պահանջները բավարարող և պետական ծառայության առանձին տեսակները, ինչպես նաև համայնքային ծառայությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված պահանջները բավարարող քաղաքացիները՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրույթությունից:

Հանրային ծառայության պաշտոն չի կարող զբաղեցնել այն անձը, որը՝

- ◊ դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
- ◊ դատական կարգով գրկվել է հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու (որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ գործունեությունը ամբողջությամբ զբաղվելու) իրավունքից,
- ◊ տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը հանրային ծառայության տվյալ պաշտոնի նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել իր լիազորությունների իրականացումը (այդ հիվանդություններից են ցանկը (ցանկերը) հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը),

◊ դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ,

◊ օրենքի խախտմամբ չի անցել ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն:

Նշված պահանջներին բացի՝ պետական ծառայության անանձին տեսակները, ինչպես նաև համայնքային ծառայությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքներով կարող են սահմանվել նաև այլ պահանջներ (տե՛ս «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդված):

Համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1801-Ն որոշման՝ հանրային ծառայության պաշտոնի նշանակվելու դեպքում լիազորությունների իրականացումը խոչընդոտող հիվանդությունների ցանկում ներառվել են հետևյալ հիվանդությունները.

1. բոլոր տեսակի փսիխոտիկ բնույթի հոգեկան խանգարումներ,
2. ոչ փսիխոտիկ բնույթի հոգեկան խանգարումներ, որոնք ընթանում են հաճախակի սրացումներով՝ արտահայտված ներոտիկ խանգարումներով և անձի հոգեբանական խանգարումներով,
3. մտավոր հետամնացություն,
4. ալկոհոլամոլություն, թմրամոլություն, թունամոլություն,
5. թոքերի տուբերկուլյոզ (ակտիվ շրջանում),
6. Էպիլեպսիա (ընկնավորություն):

Պետք է նշել, որ ՀՀ կառավարության կողմից հաստատված հիվանդությունների ցանկում ներառված չէ կետ հոգեբանական այնպիսի յուրահատկությունների մասին, որոնք կարող են խոչընդոտել հանրային ծառայողի աշխատանքը: Հոգեբանության տեսանկյունից այդ յուրահատկությունները հիմնականում կարող են

վ ե ր ա ք ե ր ե լ ա ն ձ ի հ ու զ ա կ ա ն ու լ ո թ ի
առ ա ն ձ ն ա հ ա տ կ ու թ յ ու լ ն ն ե թ ի ն
ի ն ք ն ա կ ա ր գ ա վ ո թ մ ա ն մ ե խ ա ն ի գ մ ի կ ա յ ու լ ն ու թ յ ա ն ը⁶⁷:

⁶⁷ **Լ ո ք յ ա ն Ա.**, Յ ա ն թ ա յ ի ն ծ առ ա յ ո ղ ն ե թ ի մ ա ս ն ա գ ի տ ա կ ա ն
գ ո թ ու լ ն ե ու թ յ ա ն հ ո գ ե ք ա ն ա կ ա ն առ ա ն ձ ն ա հ ա տ կ ու թ յ ու լ ն ն ե թ ը ,
Երևան , Յ Յ պ ե տ ա կ ա ն կ առ ա վ ա թ մ ա ն ա կ ա դ ե մ ի ա , 2015, 240 է ջ , է ջ 59

1.4. Հանրային ծառայողներին վերապատրաստման և ատեստավորման առանձնահատկությունները

Ակնհայտ է, որ հանրային ծառայողական անձնակազմի կառավարման համակարգում կարևորվում է կրթության դերը: Անձնակազմի մասնագիտական զարգացման անհրաժեշտ միջոցներն են կադրերի պատրաստումը, նրանց վերապատրաստումը և որակավորման բարձրացումը: Դրանք հանրային ծառայողներին կառավարչական ու մասնագիտական նոր գիտելիքներ ու հմտություններ ուղղակի փոխանցելու գործընթացներ են:

Հանրային ծառայողի մասնագիտական պատրաստումը և զարգացումը բարդ գործընթաց է, որը ներառում է կրթական բաղադրիչներ: Ամենալայն հիմաստով վերապատրաստումը պարբերաբար իրականացվող ուսուցում է, որը նպատակ ունի ապահովելու հանրային ծառայողի գիտելիքների և հմտությունների անհրաժեշտ պաշար, որոնց յուրացումը, բնականաբար, կնպաստի հանրային ծառայողի գործունեության հոգեբանական կայունության բարելավմանը, ինչպես նաև ինքնավստահության ձևավորմանը:

Պետական և համայնքային ծառայողական պաշտոն կարող են զբաղեցնել այն քաղաքացիները, որոնք ունեն տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված մասնագիտական համապատասխան գիտելիքներ (մասնագիտություն), ինչպես նաև աշխատանքային որոշակի ունակություններ (\$իզիկական, մտավոր), փորձառություն և այլն: Այդ պահանջները, բացառությամբ տարիքային, առողջական և նման այլ սահմանափակումների, խտրական և առանձնահատուկ են հանրային ծառայողական յուրաքանչյուր տեսակի դեպքում: Հարկ է նշել, որ ժամանակակից

գիտական տեսությունների մեջ մշակված են հայեցակարգեր, որոնք բնութագրում են անձի գործունեության հոգեֆիզիոլոգիական անվտանգությունը: Դրանց հիմնական խնդիրը մարդու հոգեֆիզիոլոգիական, հոգեբանական և սոցիալ-հոգեբանական հատկությունների ուսումնասիրումն է, հատկություններ, որոնք դրսևորվում են կոնկրետ մասնագիտական գործունեության մեջ, ազդում են դրա արդյունավետության և որակի վրա, որոշում են մարդու աշխատունակության և հուսալիության մակարդակը, նրա հոգեկան վիճակը, աշխատանքից բավարարված լինելու աստիճանը և հոգեֆիզիոլոգիական ռեսուրսները⁶⁸: Աշխատանքի մտավոր բովանդակության հագեցմանը և լարվածության ու ժեղացմանը վերաբերող հայեցակարգերում կարևոր տեղ են զբաղեցնում անձի մասնագիտական գործունեության հոգեֆիզիոլոգիական վերլուծությունը, նրա հոգեֆիզիոլոգիական վիճակների բարելավումը, մասնագիտական ընտրության և պիտանելիության խնդիրների լուծումը, մարդու անհատական հոգեֆիզիոլոգիական որակների որոշումը և ձևավորումը: Կոնկրետ գործունեությունն կատարելու անձի ընդունակությունը որոշում է աշխատունակության բովանդակությունը՝ որպես մարդու աշխատանքի հուսալիության հիմնական բաղադրիչ: Աշխատունակության մակարդակը կարող է փոփոխվել ըստ հետևյալ ցուցանիշների՝ գործունեության արդյունավետության, մարդու ինքնագագնողությունը, օրգանիզմի

⁶⁸ **Пряжников Н. С.**, Психология труда, учеб. пособие для студ. высш. учеб. заведений, Н. С. Пряжников, Е. Ю. Пряжникова. 5-е изд., стер., М., Издательский центр «Академия», 2009, 480 с.; **Толочек В. А.**, Современная психология труда. Учебное пособие. СПб., Питер, 2005, 479 с.;

Климов Е. А., Психология профессионала. Психологи Отечества. М., Воронеж: НПО «МОДЭК», 1996, 400 с.
Щербатых Ю. В., Психология труда и кадрового менеджмента в схемах и таблицах, М., Кнорус, 2011, 248с.

գործառույթները և համակարգերը հոգեֆիզիկական ցուցանիշները⁶⁹:

Հանրային ծառայողները արհեստավար ժողովուրդներ են թաղրում և պաշտոնական պարտականությունների կատարման խնդրում մասնագիտական պահանջվող մակարդակ և պատրաստվածություն, ծառայության ողջ ընթացքում մասնագիտական գիտելիքների և հմտությունների մշտական կատարելագործում:

Եթե հանրային ծառայողը չունի ներմասնագիտացում, ապա նա պետք է մասնագիտական որակներ ձեռք բերի աշխատանքի ընթացքում: Այս առումով մասնագիտական գիտելիքների ամրապնդման, ձևավորման և զարգացման կարևոր միջոց կարող են լինել վերապատրաստումները:

Հանրային ծառայողների վերապատրաստումը հանրային ծառայողների աշխատանքային պարտականությունների կատարման արդյունավետության բարձրացման նպատակով մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործմանն ուղղված գործընթաց (միջոցառում) է («Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետ):

Հանրային ծառայողի վերապատրաստման և ատեստավորման հետ կապված հարաբերությունները սահմանվում են «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 17-րդ և 18-րդ հոդվածների դրույթներով:

Հանրային ծառայողները ենթակա են պարտադիր վերապատրաստման:

Դրանից բացի՝ վերապատրաստում կարող է անցկացվել նաև հանրային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով (և կարագրով) սահմանված՝ հանրային ծառայողի իրավունքների

⁶⁹ Экономика и социология труда: Учебник Под ред. д.э.н., проф. А. Я. Кибанова. М., ИНФРА-М, 2010, 584 с.

ն Լ պարտականություններին, մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին տիրապետման կոնկրետ պահանջներին կատարելագործման կամ այդ պահանջներին փոփոխություն, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը սահմանված այլ դեպքերում:

Հանրային ծառայողներին վերապատրաստման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են պետական ծառայության առանձին տեսակները, ինչպես նաև համայնքային ծառայությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով:

ՀՀ քաղաքացիական ծառայության օրենսդրությունը սահմանում է քաղաքացիական ծառայողներին մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին կատարելագործման հետ կապված հիմնական սկզբունքային մոտեցումները, քաղաքացիական ծառայողներին վերապատրաստումների կազմակերպմանը և իրականացմանը վերաբերող խնդիրներն ու առանձնահատկությունները:

ՀՀ քաղաքացիական ծառայության օրենսդրությունը սահմանում է քաղաքացիական ծառայողներին վերապատրաստումների երկու տեսակ՝ պարտադիր (իրականացվում են առնվազն երեք տարին մեկ) և ոչ պարտադիր (իրականացվում են քաղաքացիական ծառայողի կամ համապատասխան մարմնի աշխատակազմի ղեկավարի նախաձեռնությամբ):

Պարտադիր վերապատրաստումները ենթադրում են քաղաքացիական ծառայողներին վերապատրաստումների իրականացումը ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից հաստատված վերապատրաստումների ուսումնական

ծրագրերով, իսկ նաև պարտադիր վերապատրաստումները կարող են անցկացվել նաև ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից հաստատված այլ ուսումնական ծրագրերի համաձայն:

Պարտադիր վերապատրաստումներն իրականացվում են հիմնական մեթոդներով՝ դասախոսություն, որը քաղաքացիական վերապատրաստումների իրականացման հիմնական ձևն է և գործնական պարապմունքներ, որոնք կիրառվում են վերապատրաստումների իրականացման ընթացքում:

Ինչպես հայտնի է, հանրային ծառայության համակարգի տարրերի արմատավորման առաջնեկը քաղաքացիական ծառայությունն է, որից հետո գործողության մեջ դրվեցին պետական այլ ծառայություններ և համայնքային ծառայությունը: Վերապատրաստման ծրագրերում հոգեբանական բաղադրիչների պարտադիր ներառումն ուղղակիորեն կնպաստի ունկնդիրների հոգեբանական պատրաստվածության ձևավորմանը:

Համաձայն «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը հաստատում է քաղաքացիական ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի ընդհանուր նկարագիրը:

Քաղաքացիական ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի ընդհանուր նկարագրով սահմանվում է տվյալ խմբում ընդգրկվող պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողի աշխատանքի կազմակերպման և դեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու և լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանք ստեղծագործաբար լուծելու պահանջի, գիտելիքների և հմտությունների անհրաժեշտ

մակարդակը (տե՛ս ՀՀ քաղաքացիական ծառայողների խորհրդի 2002 թվականի հունիսի 18-ի N 20-Ն որոշման հավելվածի 3-րդ կետը):

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության քաղաքացիական և համայնքային ծառայողների մի շարք վերապատրաստումներ իրականացնում են մի քանի ուսումնական հաստատություններ՝ երևանի պետական համալսարանը, ՀՀ պետական կառավարմանակադեմիան, Կառավարման և տնտեսագիտության ինստիտուտը և այլն: Այս հաստատություններում իրականացվող վերապատրաստման ծրագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք առավելապես միտված են ծառայողների գիտելիքների հարստացմանը: Այսպես, քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ծրագրերը ներառում են ՀՀ Սահմանադրությունը, քաղաքացիական ծառայողների օրենսդրությունը և ՀՀ քաղաքացիական ծառայողների խորհրդի իրավասությունն առնչվող թեմաներ, որոնք կազմել են ուսումնական ժամերի քանակի շուրջ չորս հինգերորդ մասը: Համանման պատկեր է նաև համայնքային ծառայողների համակարգում: Այստեղ վերապատրաստման ծրագրերը գրեթե ամբողջությամբ ընդգրկում են ՀՀ Սահմանադրությունը, տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունը սահմանող ՀՀ օրենսդրությունը և համայնքային ծառայողների առանձնահատկությունները⁷⁰: Դիտարկումները ցույց են տալիս, որ վերապատրաստմանը հատկացվող ժամաքանակի մնացած մասը տրամադրվում է

⁷⁰ **Է. Օրդյան, Յ. Օրդյան**, Հանրային ծառայողների աշխատանքային ունակությունների կատարելագործումը՝ որպես հայեցակարգային հիմնախնդիր, «Տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրներ», գիտական աշխատանքների ժողովածու, Երևան, Օր-Դար հրատ., 2012, 127-148 էջ:

քաղաքացիական ծառայություն համակարգում մասնագիտական հմտությունների զարգացմանը:

Քաղաքացիական և համայնքային ծառայողների առաջին վերապատրաստման արդյունքների և ծառայողների կարիքների ուսումնասիրությունից պարզվեց, որ անհրաժեշտություն կա ավելացնելու աշխատանքի կատարելագործմանն ուղղված ուսուցման թեմաների ու ժամերի քանակը: Ուստի քաղաքացիական ծառայողների վերապատրաստման համար մշակվեցին և հաստատվեցին նոր ծրագրեր, որոնցում տեղ գտան մարդկային ռեսուրսների կառավարմանը և հոգեբանությունը վերաբերող մի շարք թեմաներ՝ աշխատակազմի ընտրություն և համալրում, սթրեսի կառավարում, կոնֆլիկտի հոգեբանություն, հանրություն հետ կապեր, էթիկան քաղաքացիական ծառայության համակարգում, կոռուպցիայի դեմ պայքարի հմտություններ, գործավարություն և փաստաթղթաշրջանառության կազմակերպման հմտություններ:

Անհրաժեշտ է նշել, որ համանման միտում է նկատվում նաև համայնքային ծառայողների վերապատրաստման նոր ծրագրերում, որոնք մշակվեցին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության պատվերով և ՄԱԿ-ի ծրագրի հովանավորությամբ՝ 2010թ. անցկացված համայնքային ծառայողների կարիքների փորձագիտական հետազոտության արդյունքների հիման վրա:

Ըստ ծրագրերում մշակված հայեցակարգային մոտեցման դրույթի՝ ժամանակն է փոփոխել վերապատրաստման գաղափարախոսությունը՝ վերապատրաստման ծրագրերը ճանաչողական և ընդհանուր իմացաբանական ոլորտն ավելի մոտեցնելով համայնքային ծառայողների

մասնագիտական գիտելիքների, աշխատանքային ու
կառավարչական հմտությունների զարգացմանը: Դա
հնարավորություն է կտա ավելի սերտացնել ու
վերապատրաստման կայքը համայնքային ծառայողի
պաշտոնի անձնագրով նախատեսվող
գործառնությունների հետ, ինչը կնպաստի դրանք
ամբողջ ծավալով և պահանջվող մակարդակով
կատարելուն:

ՀՀ քաղաքացիական ծառայության
օրենսդրությունը սահմանում է նաև
քաղաքացիական ծառայողների մասնագիտական
գիտելիքների և աշխատանքային
ունակությունների կատարելագործման նպատակով
գործունեության սկզբունքներն ու մոտեցումները,
վերապատրաստման գործունեություն կարգը:

Քաղաքացիական ծառայության
վերապատրաստումների համակարգը որոշ չափով
փոխկապակցված է ատեստավորումների համակարգի
հետ: Քաղաքացիական ծառայողն իր առաջին
ատեստավորումից առաջ պարտավոր է անցնել առաջին
վերապատրաստումը, սակայն հաջորդ
ատեստավորումների դեպքում ատեստավորումից
առաջ վերապատրաստում անցնելն այլևս պարտադիր
չէ: Դրա հետ մեկտեղ՝ վերապատրաստումների
համակարգը փոխկապակցված չէ քաղաքացիական
ծառայության համալրման համակարգի հետ, երբ
մրցողություն հաղթած դիմորդը պետք է նաև պաշտոնն
զբաղեցնելուց առաջ վերապատրաստում անցնի՝ ըստ
համապատասխան ուսումնական ծրագրերի:
Վերապատրաստումների համակարգը
պայմանավորված չէ նաև առաջխաղացմամբ:

Հանրային ծառայողների աշխատանքի գնահատման
մեթոդներից է կարգերի ատեստավորումը: Չնայած
ատեստավորումը մասնագետներին
հնարավորություն է ընձեռնում մշտապես գտնվել ու

մասնագիտորեն քարձր կարգավիճակում,
այնուամենայնիվ հոգեբանական տեսանկյունից
այն սթրեսածին գործունե (ատեստավորման
սթրեսային ազդեցությունը կքննարկենք
հաջորդիվ): Ատեստավորումը նպատակ ունի
պարզելու գբադեցրած պաշտոնին հանրային
ծառայողի գիտելիքներին և աշխատանքային
ունակությունների համապատասխանությունը:

Համաձայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ
օրենքի

18-րդ հոդվածի՝ հանրային ծառայողների
ատեստավորման կամ կատարողականի գնահատման հետ
կապված հարաբերությունները կարգավորվում են
պետական ծառայության առանձին տեսակները,
ինչպես նաև համայնքային ծառայությունը
կարգավորող Հայաստանի Հանրապետության
օրենքներով և այլ իրավական ակտերով:

Անդրադառնալով հանրային ծառայության
կազմակերպման կարգին՝ պետք է նշել, որ
ծառայության առանձին տեսակների մասին
օրենքներում մանրամասն նկարագրված են
հանրային ծառայության այս կամ այն պաշտոնն
գբադեցնելու իրավունքի իրացման հստակ
պայմանները՝ ըստ տվյալ բնագավառի
առանձնահատկությունների, ինչպես նաև
ծառայություն կրելու կարգն ու պայմանները,
պաշտոնատար անձանց իրավունքներն ու
պարտականությունները:

Քաղաքացին հանրային ծառայության պաշտոն
կարող է գբադեցնել, եթե.

- ◆ լրացել է 18 տարին կամ առնվազն ունի տվյալ
ծառայության համար սահմանված (պետական և
համայնքային ծառայության դեպքերում)
նվազագույն տարիք, և չի լրացել սահմանված

անավելի ազոլյն տարիքը (55 կամ 65 տարեկան, իսկ որոշ դեպքերում՝ 70 տարեկան),

- ◆ իր մասնագիտական գիտելիքներով և աշխատանքային ունակություններով համապատասխանում է տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջներին, քաղաքական կամ հայեցողական գնահատման չափանիշներին (քաղաքական և հայեցողական պաշտոններին դեպքում),
- ◆ տիրապետում է հայերենին կամ նաև օտար լեզուներին,
- ◆ սահմանված կարգով հաղթահարել է տվյալ թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթի պայմանները կամ համապատասխանում է արտամրցութային կարգի պայմաններին և այլն:

Մասնագետներին տարիքային սահմանափակումներին անդրադառնալով՝ նշենք, որ հոգեբանական տեսանկյունից անձնիք զարգացման ընթացքում ունենում է ճգնաժամային շրջաններ, որոնք իրենց ազդեցությունն են թողնում աշխատանքային գործունեության վրա: Անձի զարգացման ընթացքում անցումային և ճգնաժամային շրջանների նկարագրությունը անդրադարձել են քաղաքաբիվ հեղինակներ⁷¹: Մարդու զարգացման ընթացքում անցումային և ճգնաժամային շրջանները մեկ տարիքային փուլից մյուսին անցնելու բեկումնային կետ են հանդիսանում: ճգնաժամերից հետո մարդն ունենում է ձեռքբերումներ, հասունանում է, վերաիմաստավորում կյանքի որոշակի փուլերը:

⁷¹ **Малкина-Пых И.Г.,** **Возрастные кризисы** взрослости. М., **Изд-во Эксмо**, 2005, 416 с.
Поливанова К. Н., **Психология возрастных кризисов.** К.Н. Поливанова. М., Академия, 2000, 184 с.
Խուլդոնյան Ս., Անձի զարգացման ճգնաժամային տարիքները, Երևան, 2-րդ ակ -97, 2004, 248 էջ:
Տաթևյան Յ., 2-րդ զարգացման հոգեբանություն հիմունքներ, Երևան, 3-րդ հրատ., 2013, 163 էջ:

Յուրաքանչյուր ճգնաժամային փոփոխում տեղի է
ունենում անձի գարգացման սոցիալական
իրավիճակի ամբողջական փոփոխութեան. փոխվում
են սոցիալական միջավայրում
փոխհարաբերութեան ներհանուր բնույթը, երբեմն
նաև գործունեության ձևը և այլն: Այս
փոփոխութեան կրում են թռիչքաձև բնույթ,
ուստի հաճախ ուղեկցվում են բացասական
վարքագծերի դրսևորմամբ և հոգական
ապրումներով⁷²: Հանրային ծառայության առանձին
տեսակների վերաբերյալ օրենքներով այս կամ այն
պաշտոնն զբաղեցնելու համար նախատեսված են նաև
լրացուցիչ այլ նախապայմաններ:

Հանրային ծառայության առանձին ոլորտներում
հանրային ծառայողներին ներկայացվող
պահանջները միմյանցից որոշ չափով տարբերվում
են: Օրինակ՝ քաղաքացիական ծառայության
համակարգում կարող են ընդգրկվել առնվազն
միջնակարգ կրթություն ունեցող ՀՀ քաղաքացիներ,
իսկ հարկային ծառայության համակարգում՝
հայերենին տիրապետող, պետական հավատարմագրում
ստացած բարձրագույն ուսումնական
հաստատությունն ավարտած, պետական
հավատարմագրում ստացած մասնագիտությունների
գծով բարձրագույն կրթություն ունեցող
Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ:
Հանրային ծառայողի հիմնական իրավունքներն ու
պարտականությունները կանոնակարգվում են
օրենքի համապատասխան կետերով, որոնք
ներկայացված են հավելված 3-ում⁷³: Այդ

⁷² **Խուրդյան Ս.**, Անձի գարգացման ճգնաժամային տարիքները,
Երևան, 2-րդ անգակ -97, 2004, 248 էջ:

⁷³ **Լոբյան Ա.**, Հանրային ծառայողների մասնագիտական
գործունեության հոգեբանական առանձնահատկությունները,
Երևան, ՀՀ պետական կառավարման ակադեմիա, 2015, 240 էջ, էջ 219:

փաստաթղթերում կարևորվում են առևտրային կազմակերպությունների և հանրային ծառայությունների ներգրավված մասնագետների իրավունքների ու պարտականությունների տարբերությունները:

1.5.3 անրային ծառայողների գործունեության հիմնարար հայեցակարգերի վերլուծությունը

Կառավարման հիմնահարցերը քննարկվել են բազմաթիվ հեղինակների կողմից, սակայն հանրային ծառայողների գործունեությանը վերաբերող վերլուծությունները սակավաթիվ են: Ուստի մենք անդրադառնում ենք կառավարման հայեցակարգային մոտեցումներին:

Կառավարչական գործունեությունը սկզբունքորեն տարբերվում է գործունեության

մյուս տեսակներից: Նկատենք, որ մինչև 20-րդ դարի սկիզբը կառավարումը չէր դիտարկվում որպես հատուկ գործունեություն և առանձին գիտական հետազոտությունների ամարկաչ էր: Առաջին անգամ կառավարման կառուցակարգերի և սկզբունքների մասին խոսեցին 1911 թվականին՝ Ֆ.Թեյլորի «Գիտական կառավարման սկզբունքները» գրքի տպագրությունից հետո, որտեղ նա առանձնացրել է կառավարչական աշխատանքի հիմնական սկզբունքները: 1920 թվականին Ա.Ֆայոլը նկարագրեց կառավարման սկզբունքների հաջորդական համակարգը⁷⁴: Ընդգծենք, որ կառավարման գաղափարը՝ որպես գիտակարգ, մասնագիտություն, հետազոտություն ունի, համեմատաբար նոր է: Կառավարումը գործունեության ինքնուրույն ուղղություն է ճանաչվել միայն 20-րդ դարում: Ավելին, կառավարումը և կազմակերպումը մինչև 1900-ական թվականները բոլորովի այլ տեսք ունեն: Այդուհանդերձ կայացված են հին և ժամանակակից կառավարման համեմատությունները: Նախկինում կազմակերպությունները ձգտում էին ունենալ բարձր օղակի կառավարիչների փոքր խումբ, որն ընդունում էր բոլոր հնարավոր որոշումները: Չաճախ կառավարումն իրականացվում էր մեկ անձի կողմից: Եթե կառավարման վերին օղակում գտնվող անձը (նա գրեթե միշտ տղամարդ էր) և վարչեր էր և կառավարիչ, ապա ամեն ինչ քիչ թե շատ հարթ էր ընթանում: Չին և ժամանակակից կառավարման ձևերի համեմատական վերլուծությունն անդրադարձել են Մ. Մեկսոնը և համահեղինակներ Մ. Ալբերտը, Ֆ.

⁷⁴ Розанова В. А., Психология управления. М., 2010, 420с.
 Чередниченко И. П., Психология управления. Ростов н/Дону, Феникс, 2011, 608 с.

Խեղոնուրիս⁷⁵: Վերլուծությունը ներկայացված է աղյուսակի տեսքով:

Աղյուսակ 1.

Յինև ժամանակակից կառավարման ձևերի համեմատություն

Յին կառավարում	Ժամանակակից
Սակավաթիվ մեծ կազմակերպություններ հսկայական	Մեծ թվով հզոր, խոշոր կազմակերպություններ, ինչպես կոմերցիոն, այնպես
Սակավաթիվ ղեկավարներ, միջին	Մեծ թվով ղեկավարներ՝ այդ
Կանավարչական գործունեությունը հաճախ էր տարբերվում և էր ստանձնակալական	Հստակ անձնացված են կառավարչական խմբերը, կառավարչական
Ընդունված է ժամանգաբար ղեկավար պաշտոն գրադեցնելը կամ այն ուժով գոպելը	Ղեկավար պաշտոններ գրադեցնելն իրականացվում է կոմպետենցիաների հիման վրա՝
Քիչ աշխատողներ են ընդունակ կազմակերպության համար ևս ունեն	Ծառաշխատողներ են ընդունակ կազմակերպության համար ևս ունեն
Կարևոր էր հրամանի կատարումը	Կարևոր է կոլեկտիվ աշխատանքը

Մինչև 20-րդ դարը համակարգային կառավարումը քչերին էր հետաքրքրում: Մարդկանց առավել հետաքրքրում էր, թե ինչպես օգտագործել կազմակերպությունը շատ գումար վաստակելու

⁷⁵ Мескон М., Альберт М., Хедоури Ф., Основы менеджмента [Учебник]: Пер. с англ., М.Х. Мескон, М. Альберт, Ф. Хедоури; Общ. ред. и вступ. ст. Л. И. Евенко. 3-е изд. М., Дело, 2000, 704 с.

համար, հետաքրքրում էր քաղաքական իշխանություն և նենալը, սակայն ոչ դրանք կառավարելը:

Անդրադառնանք կառավարման գիտություն սկզբնավորմանը և փոփոխություն: Առաջին փոփոխություն համակարգային մոտեցումն է կառավարմանը: Ֆ. Թեյլորի «Գիտական կառավարման սկզբունքները» աշխատությունը հրատարակում էր հետո կառավարումը ճանաչվեց որպես գիտություն և հետագոտական ինքնուրույն ուղղություն⁷⁶: Կառավարման նկատմամբ հետաքրքրությունն առաջացնող հիմնական ուժը Անգլիայում սկսված արդյունաբերական հեղափոխությունն էր: Սակայն այն միտքը, որ կառավարումը կարող է եսկան ներդրում ունենալ կազմակերպության զարգացման և հաջողության հարցում, նախ ծագել է Ամերիկայում: Ամերիկյան համարվում է ժամանակակից կառավարման հայրենիքը: Նույնիսկ 20-րդ դարի սկզբին Միացյալ Նահանգները գործնականում միակերկիրն էր, որտեղ մարդն իրան ձնային հատկանիշներով ու կոմպետենտությամբ կարող էր հաղթահարել իր ծագմամբ ու ազգությամբ պայմանավորված դժվարությունները: 19-րդ դարում միլիոնավոր եվրոպացիներ, ձգտելով բարելավել իրենց ճակատագիրը, գաղթում էին ԱՄՆ՝ ստեղծելով աշխատասեր մարդկանցից կազմված աշխատուժի մեծ շուկա: Միացյալ Նահանգները ստեղծման հենց սկզբից լրջորեն խրախուսում էր կրթության գաղափարը, և բոլոր նրանք, ովքեր ցանկանում էին կրթություն ստանալ, ունենում էին դրահնարավորությունը: Կրթությունը նպաստում էր, որ մտավոր մեծ ներուժ ունեցող մարդիկ տարբեր դերակատարություն ունենային բիզնեսում, այդ

⁷⁶ **Бурганова Л. А.**, Теория управления, учебное пособие, М. Инфра-М, 2004, 153 с.; Психология управления. Чередниченко И.П., Тельных Н.В. Ростов - на/Д.: Феникс, 2004.с.4-5

թվում՝ կառավարման մեջ ⁷⁷:

Յաջորդը կառավարման՝ որպես գիտակարգի զարգացման փուլն էր, որը պայմանավորված էր հարակից գիտությունների՝ մաթեմատիկայի, ինժեներիայի, հոգեբանության, սոցիոլոգիայի և մարդաբանության զարգացման հաջողություններով: Գիտության այս ոլորտների զարգացմանը զուգընթաց կառավարման ոլորտի հետազոտողները, տեսաբանները և գործող մասնագետները բացահայտում էին կառավարման հաջողություն վրա ազդող ավելի շատ գործոններ: Այս գիտելիքներն օգնում էին գտնելու կառավարման նոր մոտեցումներ: Ընդհանուր առմամբ հայտնի է չորս մոտեցում, որոնք էական ներդրում են ունեցել կառավարման տեսության և պրակտիկայի զարգացման մեջ: Գործընթացային մոտեցումը կառավարումը դիտարկում է որպես կառավարման փոխկապակցված գործառույթների անընդմեջ շարք: Ըստ համակարգային մոտեցման՝ դեկավարները պետք է կազմակերպությունը դիտարկեն որպես փոխկապակցված բաղադրիչների ամբողջություն, ինչպես մարդիկ, կառուցվածքը, խնդիրները և տեխնոլոգիաները, որոնք արտաքին փոփոխվող աշխարհում տարբեր նպատակների հասնելու միջոց են:

Իրավիճակային մոտեցումը հիմնվում է այն սկզբունքի վրա, որ կառավարման տարբեր մեթոդների պիտանիությունը որոշվում է իրավիճակով: Քանի որ ինչպես կազմակերպությունում, այնպես էլ արտաքին աշխարհում գոյություն ունեն բազմաթիվ մեթոդներ, չկա կազմակերպությունը կառավարելու մեկ «լավագույն» միջոց: Ստեղծվող իրավիճակում

⁷⁷ Мескон М., Альберт М., Хедоури Ф., Основы менеджмента [Учебник]: Пер. с англ., М.Х. Мескон, М. Альберт, Ф. Хедоури; Общ. ред. и вступ. ст. Л. И. Евенко. 3-е изд. М., Дело, 2000, 704 с.

ամենաարդյունավետ մեթոդն այն է, որն առավել համապատասխանում է տվյալ իրավիճակին: Իրավիճակային մոտեցման հիմքում ընկած է երկու թեզ. առաջին՝ գոյություն ունի ընդհանրացված արդյունավետ կառավարում բոլոր իրադրություններում, երկրորդ՝ կառավարման արդյունավետությունը պայմանավորված է ամենից առաջ դրա շարժունությունը և հարմարվողականությամբ այն միջավայրում, որտեղ գործում է տվյալ կազմակերպությունը⁷⁸:

Անդրադառնալով կառավարման դասական դպրոցներին, որոնք կառավարման հետազոտարգաման հիմքն են: անհերթականությունը դրանք կարելի է ներկայացնենք այդ դպրոցները ըստ ժամանակագրության.

1. Գիտական կառավարման դպրոց (1885-1920), հիմնադիր՝ ամերիկացի ինժեներ Ֆ.Թեյլոր,
2. Վարչական կառավարման դպրոց (1920-1950), հիմնադիր՝ Ֆրանսիացի ինժեներ, արդյունաբերող և կառավարման տեսաբան Ա. Ֆայոլ,
3. Մարդկային հարաբերություններ և վարքաբանական գիտություններ դպրոց (1930-1950), հիմնադիր՝ ամերիկացի հոգեբան և սոցիոլոգ Է.Մեյո,
4. Կառավարման գիտություն կամ քանակական մեթոդներ⁷⁹:

Գիտական կառավարումը կապված է Ֆ. Թեյլորի, Ֆրենկ և Լիլիան Ջիլբրեթների, Յենրի Գանտի աշխատանքների հետ: Նրանք ենթադրում էին, որ

⁷⁸ Կառավարչական գործունեությունն ամենաառավելագույնի հոգեբանական նկարագիրը // կոլեկտիվ մենագրություն, Ռ.Վ. Ադոլգոլմցյան, Լ.Յ. Պետրոսյան, Ս.Յ. Պողոսյան, Ա.Ռ. Խաչատրյան, Երևան, 2015, 232 էջ:

⁷⁹ Мескон М., Альберт М., Хедоури Ф., Основы менеджмента [Учебник]: Пер. с англ., М.Х. Мескон, М. Альберт, Ф. Хедоури; Общ. ред. и вступ. ст. Л. И. Евенко. 3-е изд. М., Дело, 2000, 704 с.
Розанова В. А., Психология управления. М., 2010, 420с.

դիտումներին ու չափումներին, տրամաբանության և վերլուծության ներքին կիրառմամբ կարելի է կատարել ազդերի ձեռքի աշխատանքի բազմաթիվ գործողություններ՝ այդպիսով բարձրացնելով դրանց արդյունավետությունը: Գիտական կառավարման մեթոդաբանության առաջին փուլը աշխատանքի բովանդակության վերլուծության ներքին դրա հիմնական բաղադրիչները որոշելը: Յիմնվելով ստացված տեղեկության վրա՝ նրանք փոփոխում էին գործողությունները, որպեսզի վերացնեն ավելորդ, անարդյունավետ շարժումները: Միաժամանակ, օգտագործելով ստանդարտ գործընթացներ և սարքավորումներ, փորձում էին բարձրացնել աշխատանքի արդյունավետությունը:

Այս դպրոցի կարևոր ներդրումը խթանման համակարգի կիրառումն էր՝ արտադրանքի ծավալը մեծացնելու և արտադրողականությանը բարձրացնելու հարցում աշխատողներին շահագրգռելու նպատակով: Յաճի էին առնում նաև հանգստի և անխուսափելի դադարների հնարավորությունը, այնպես որ որոշակի խնդիրներ կատարելու համար նախատեսված ժամանակը իրական էր և արդար: Սա դեկավարությանը հնարավորություն էր տալիս սահմանելու արտադրողական իրականանալի նորմեր և արագ ու չվճարելու նրանց, ովքեր գերազանցում էին սահմանված նվազագույն չափը: Այս մոտեցման հիմնական սկզբունքն այն էր, որ յուրաքանչյուրը գնահատվում էր ըստ աշխատանքի:⁸⁰ Այս մոտեցման հիմնադիրները կարևոր էին համարում այնպիսի կարգերի ընտրության հարցը, որոնք \$իզիկապես և

⁸⁰ **Пряжников Н.С., Пряжникова Е.Ю.** Психология труда и человеческого достоинства: Уч. пособие. М.: Изд-ий центр "Академия", 2003. – с.24-26.

մտավոր հնարավորություններով համապատասխանում էին իրենց կատարած աշխատանքին: Նրանք նաև ընդգծում էին ուսուցման նշանակությունը:

Փաստորեն Ֆ. Թեյլորը և նրա ժամանակակիցներն ընդունում էին, որ կառավարչական աշխատանքը հատուկ մասնագիտություն է, և կազմակերպությունը շահում է, եթե աշխատողների յուրաքանչյուր խումբ կենտրոնանում է այն բանի վրա, ինչն իրեն ավելի լավ է հաջողվում⁸¹: Այս մոտեցումը կտրուկ տարբերվում է հին համակարգից, երբ աշխատողն ինքն էր պլանավորում իր աշխատանքը:

Գիտական կառավարման դպրոցը շրջադարձային էր, քանի որ դրա շնորհիվ կառավարումն սկսեց լայնորեն ընդունվել որպես գիտական հետազոտություն ինքնուրույն ուղղություն: Առաջին անգամ դեկավարները և գիտնականները տեսան, որ գիտություն և տեխնիկայի բնագավառներում կիրառվող մեթոդներն ու մոտեցումները կարող են արդյունավետ կերպով կիրառվել կազմակերպության նպատակներին հասնելու համար:

Կառավարման վարչական դպրոցի (1920-1950) նպատակը կառավարման ընդհանուր սկզբունքների ստեղծումն էր: Այս դպրոցի ներկայացուցիչները համոզված էին, որ այդ սկզբունքներին հետևելով՝ կազմակերպությունը հաջողություններ կունենա: Սկզբունքներից մեկը կազմակերպության կառավարման ռացիոնալ համակարգի մշակումն է: Ֆայոլի հիմնական ներդրումը կառավարման տեսություն մեջ այն է, որ նա կառավարումը դիտարկում էր որպես ունիվերսալ գործընթաց՝ բաղկացած մի քանի փոխկապակցված

⁸¹ Бурганова Л. А., Теория управления, учебное пособие, М. Инфра-М, 2004, 153 с., с.13-14

գործառույթներին, ինչպես օրինակ՝ պլանավորումը և կազմակերպումը: Ռոզանովան «Կառավարման հոգեբանություն» գրքում նշում է, որ Ա. Ֆայոլի շնորհիվ կառավարումն սկսեց դիտարկվել որպես մարդկանց ինքնուրույն և առանձնահատուկ գործունեություն, ինչի հիման վրա էլ առաջացավ կառավարման հոգեբանությունը⁸²: Ըստ տեսության հաջորդ սկզբունքը վերաբերում է աշխատողների կառավարման և կազմակերպման կառուցվածքին: Որպես օրինակ ներկայացնում են միակենտրոն կառավարումը, համաձայն որի՝ մարդը պետք է հրահանգներ ստանա մեկ ղեկավարից և ենթարկվի միայն նրան:

Մարդկային հարաբերությունների դպրոցի (1930–1950)

Ներկայացուցիչները կարևորում էին մարդկային գործունի դերը կազմակերպության արդյունավետության բարձրացման հարցում: Գ. Ն. Նիկիֆորովն իր «Մենեջմենթ» գրքում նշում է, որ մարդկային հարաբերությունների դպրոցի հիմնադիրներից Գ. Մյունստերբերգը մեծ ներդրում ունի մասնագիտական պիտանիության, մասնագիտական ուսուցման, հոգնածության, հոգեվնասվածքի, արտադրության մեջ գովազդի հիմնախնդիրների մշակման գործում: Յատկապես մեծ ենրաներդրումը մասնագիտության ընտրության և մասնագիտական ընտրության ուղղությունների զարգացման մեջ⁸³:

Մարդկային հարաբերությունների դպրոցի զարգացման առումով մեծ հեղինակություն են վայելում Մ. Ֆոլետը և Է. Մեյոն⁸⁴: Մեյոյի հայտնի գիտափորձերը, որոնք անցկացվել են «Ուեսթերն

⁸² **Розанова В. А.**, Психология управления. М.: Альфа-Пресс, 2010, 420с.

⁸³ Психология менеджмента, Под научной редакцией Г. С. Никифорова, Санкт-Петербург, 2010, 534 с.

⁸⁴ **Бурганова Л. А.**, Теория управления, учебное пособие, М. Инфра-М, 2004, 153 с., с. 17

Ելեկտրիկ» ընկերությունում (Յոտորն), կառավարման տեսությունում նոր ուղղություն են ստեղծել: Այդ փորձերը բացահայտում են, որ հստակ մշակված աշխատանքային գործողությունները և ևս աշխատավարձը աշխատանքի արդյունավետության բարձրացման պարտադիր պայման չեն: Երբեմն աշխատողները գործընկերների ճնշումներին ավելի բուռն էին արձագանքում, քան ղեկավարության ցանկությանը և նյութական խթաններին: Ինչպես հետագայում ենթադրում է Մասլոն, մարդկանց վարքի մոտիվները հաճախ տնտեսական ուժերը չեն, այլ տարբեր պահանջմունքները, որոնք կարող են մասամբ և անուղղակիորեն բավարարվել գումարի միջոցով⁸⁵:

Հիմնվելով այս եզրակացությունների վրա՝ հետազոտողները ենթադրում են. եթե ղեկավարությունն ավելի մեծ ուշադրություն է դարձնում աշխատողներին, ապա բարձրանում է նրանց բավարարվածության աստիճանը, ինչն էլ հանգեցնում է աշխատանքի արդյունավետության բարձրացմանը: Նրանք առաջարկում են կիրառել մարդկային հարաբերությունների կառավարման հնարներ, ինչպես՝ անմիջական ղեկավարների առավել արդյունավետ գործողությունները, խորհրդատվությունները աշխատողների հետ և շփման ավելի լայն հնարավորությունների ընձեռումը:

«Վարքաբանական գիտությունների զարգացում» դպրոցի հիմնական ներկայացուցիչներից են Դ.Մակ-Գրեգորը, Ֆ. Յերգբերգը, Ռ. Լայկերտը և ուրիշներ: Նրանք ուսումնասիրել են սոցիալական համագործակցության, մոտիվացիայի, իշխանության և հեղինակության բնույթի, կազմակերպչական

⁸⁵ Мескон М., Альберт М., Хедоури Ф., Основы менеджмента, Учебник, Пер. с англ., М.Х. Мескон, М. Альберт, Ф. Хедоури; Общ. ред. и вступ. ст. Л. И. Евенко. 3-е изд. М., Дело, 2000, 704 с

կառուցվածքի, կազմակերպչական հաղորդակցման, լիդերության, աշխատանքի բովանդակության փոփոխության և աշխատանքային կյանքի որակի տարբերկողմեր⁸⁶:

Այս դպրոցի ուշադրության կենտրոնում միջանձնային հարաբերություններ հաստատելու մեթոդներն են: Նման մոտեցումն օգնում է աշխատողին գիտակցելու իր հնարավորությունները՝ հիմնվելով կազմակերպությունների կառուցման և կառավարման վարքաբանական հայեցակարգերի կիրառության վրա⁸⁷: Ընդհանուր առմամբ, այս դպրոցի հիմնական նպատակը կազմակերպության արդյունավետության բարձրացումն է՝ մարդկային ռեսուրսների արդյունավետությունը բարձրացնելու միջոցով:

Կառավարման գիտությունն կամ քանակական մոտեցում (1950 – առ այսօր): Մաթեմատիկան, վիճակագրությունը, ինժեներական գիտությունները և գիտության այլ ոլորտներ էական ներդրում են ունեցել կառավարման տեսության զարգացման գործում: Մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը քանակական մեթոդները կառավարման մեջ բավարարչափով չեն կիրառվել: Կառավարման գիտության հիմնական բնութագրիչը խոսքային դատողությունների և նկարագրական վերլուծության փոփոխությունն է՝ արտահայտված մոդելներով, սիմվոլներով և քանակական ցուցանիշներով: Քանակական մեթոդների զարգացման հիմնական խթաններից է համակարգիչների զարգացումը, ինչը գործողությունները հետազոտողներին թույլ է

⁸⁶ **Бурганова Л. А.**, Теория управления, учебное пособие, М. Инфра-М, 2004, 153 с., с. 18-19

⁸⁷ **Розанова В. А.** Психология управления. Учебное пособие . М.: ЗАО "Бизнес-школа "Интел-Синтез". - 1999. с.14-15

տալիս նախագծել աճող բարդություններ
մաթեմատիկական մոդելներ, որոնք առավել մոտեն
իրականությունը, հետևաբար առավել հստակ են⁸⁸:

Այս մոտեցման ազդեցությունը
բիհևորիստականից ավելի փոքր է, քանի որ
դեկլարների մեծ մասն առօրյայում բախվում է
մարդկային հարաբերություններին, մարդու վարքի
խնդիրներին: Բացի այդ, 60-ական թվականներին շատ
քիչ դեկլարներ ունեին բավարարչությունը՝
բարդ քանակական մեթոդները հասկանալու և
կիրառելու համար: Սակայն ներկայումս
դրությունն արագ փոխվում է, քանի որ բիզնեսի
ավելի շատ դպրոցներ առաջարկում են քանակական
մեթոդների և տեղեկատվական տեխնոլոգիաների
կիրառման դասընթացներ:

Ուշագրավ է Վ. Ռոզանովայի այն դիտարկումը, որ
60-ականներից սկսած՝ հոգեբանական մոտեցումն
ամբողջությամբ գրավել էր կազմակերպության
կառավարման ոլորտը: Այդ դեպքում կառավարման
հիմնական ուշադրությունը կենտրոնացվում էր
միջանձնային փոխհարաբերություններին,
այսինքն՝ սոցիալ-հոգեբանական խնդիրների վրա:
Հոգեբանական դպրոցի հիմնական նպատակը
մարդկային գործունի հաշվին կազմակերպության
գործունեության արդյունավետությունը
մեծացնելն էր: Մենեջմենթի հիմնահարցերը
զարգացում ստացան ամերիկացի, անգլիացի,
գերմանացի հետազոտողների աշխատանքներում (Գ.
Մինցենբերգ, Ջ. Բերնարդ, Պ. Դրոկեր, Գ. Սայմոն, Ս.
Առջիրիսա, Տ. Պիտենու, Ռ. Ուոտերման, Վ. Չիգերտ, Լ.
Լանգ, Ջ. Գրեյսոն, Մ. Վոլդկոկ, Դ. Ֆրենսիս)⁸⁹:

⁸⁸ **Урбанович А. А.**, Психология управления, Минск, Харвест 2007, 640 с.; **Бурганова Л. А.**, Теория управления, учебное пособие, М. Инфра-М, 2004, 153 с.

⁸⁹ **Розанова В. А.**, Психология управления. М., 2010, 420с.

Նշենք, որ մենեջմենթի տեսության նոր
նախնայական առանձնահատկությունն այն է, որ
կազմակերպությունները կառավարելու համար
մշակվում և կիրառվում են համակարգային,
իրադրական և գործընթացային մոտեցումներ, իսկ
սուբյեկտի գործունեությունը պլանավորելու և
ձևավորելու համար՝ տնտեսական մաթեմատիկական
մեթոդներ: Մասնագիտական գրականությունում
նշվում է, որ այս դպրոցի հիմնադիրներն են Ս.Բիռը,
Ն.Վիները, Բ.Ակկոֆը, Ս.Յանգը, Գ.Միլլերը, Մ.Պորտերը:
Ժամանակակից մենեջմենթի ներկայացուցիչները
կազմակերպությունը դիտարկում էին բաց
համակարգ, որը փոխկապվածություն մեջ է արտաքին
միջավայրի հետ: Կազմակերպությունը պետք է
դիտարկել որպես երկու ինքնուրույն,
փոխկապակցված ենթահամակարգերի
ամբողջություն՝ կառավարվող (կառավարման
օբյեկտ) և կառավարող (կառավարման սուբյեկտ), որն
ապահովում է շուկայում տնտեսությունն վարող
սուբյեկտի զարգացումը⁹⁰:

Նոր պետական կառավարման տնտեսական
նախնայականությունը խթանում է այնպիսի
առանցքային հասկացությունների առաջացումը,
ինչպիսիք են սպառողի վրա միտվածությունը,
արդյունքների համար պատասխանատվությունը,
արդյունավետությունը (UN Report 2005; Marks 2003)⁹¹: Գ.
Ֆրեդերիքսոնը պետական կառավարման նոր
տեսության առանցքային սկզբունքների շարքում
առանձնացնում է ծախսերի և շահույթի
հարաբերակցությունը⁹²:

Գ. Ֆրեդերիքսոնի կարծիքով, նոր պետական
կառավարումը ձգտում է ոչ միայն իրականացնել իր

⁹⁰ Чуйкин А.М., Основы менеджмента, Учебное пособие, Калининград, 1996, 106с.

⁹¹ Бочарова, А. К., Механизм оценки эффективности деятельности органов исполнительной власти субъектов Российской Федерации: Нац. исслед. ун-т «Высшая школа экономики», М., Изд. дом Высшей школы экономики, 2012, 68 с.

⁹² Шафритц Д., Классики теории государственного управления. Американская школа, М., МГУ 2003, 800с., с.429

օրենսդրական պարտականությունները հնարավորինս արդյունավետ, այլև ազդել կառավարչական որոշումներին ընդունման վրա՝ նպատակ ունենալով բարելավել բոլոր քաղաքացիներին կենսամակարդակը: Ըստ նրա՝ պետական կառավարումը ոչ միայն իրագործում է, այլև որոշում է քաղաքականությունը⁹³:

Ռուսական կառավարման դպրոցում համակարգային մեթոդաբանության հիմնարար դրոյթներն առաջադրվել են Ա.Բոգդանովի կողմից: Նացոլյց է տվել, որ կառավարման բոլոր տեսակները սկզբունքորեն ունեն միևնույն ընդհանուր գծերը: Յենց նա է ձևակերպել համակարգային մոտեցման առանցքային դրոյթը՝ կազմակերպված ամբողջը գերազանցում է նրա մասերի պարզ գումարը⁹⁴: Կառավարման գիտության հետագա զարգացումը կապվում է խորհրդային ժամանակաշրջանի հետ: Այդ ընթացքում առավել հետաքրքիր են արտադրության կառավարման վերաբերյալ գիտական մոտեցումների ձևավորման վերաբերյալ բանավեճերը (Է. Յոլ. Կորիցկի, Յոլ. Ա. Լավրիկով, Ա. Մ. Օմարով): Արևմտյան և խորհրդային կառավարման մասնագետների կողմից բարձր գնահատականի արժանացան Ա. Կ. Գաստնը և Պ. Մ. Կերժենցևը: Ա. Գաստնը ձևակերպել է յուրաքանչյուր աշխատանքի համար 16 օրենքականությունները, որոնք մինչ օրս իրենց նշանակությունը չեն կորցրել: Իսկ Պ. Մ. Կերժենցևը վերլուծել է մի կողմից կազմակերպության հոսսալիությունն ապահովող գործոնները, մյուս կողմից՝ դրան կմանը նպաստող գործոնները: Նա ձևակերպել է կազմակերպության սկզբունքները, որոնք կարող են կիրառվել յուրաքանչյուրի

⁹³ **Frederickson G.**, Comparing the Reinventing Government with the New Public Administration. Public Administration Review. 1996. Vol. 56. № 3.

⁹⁴ Психология менеджмента, Под научной редакцией Г. С. Никифорова, Санкт-Петербург, 2010, 534 с.

համար՝ առանձնահատուկ դեր հատկացնելով
ինքնահսկողությունը՝ սեփական աշխատանքը
կառավարելու կարողությունը⁹⁵:

Այսպիսով, հանրային ծառայողների
գործունեությունը վերաբերող
վերլուծությունները հիմնվում են կառավարման
հիմնարար տեսությունների, կառավարման
արևմտյան և ուսական դպրոցների հիմնարար
դրույթների, կառավարչի անձի, կառավարչական
գործունեություն առանձնահատուկություններին,
կառավարման գործընթացում միջանձնային
փոխհարաբերություններին, մարդկային գործունե
ընդգծելու հիման վրա: Յանրային ծառայությունը և
պետական կառավարման համակարգին նվիրված
ժամանակակից տեսական վերլուծություններում
գլխավորապես առանձնանում են այդ համակարգում
ծառայողների վարքի առանձնահատուկությունները՝
կապված պետական հետաքրքրությունների
գիտակցման, այլասիրության, անձնական և
ծառայողական մոտիվացիայի դրսևորման,
հասարակական և մասնագիտական
հետաքրքրություններին համադրման,
կազմակերպչական նույնականություն,
մասնագիտությունը նացիոնալ ընտրություն և այլնի
հետ:

⁹⁵Чередниченко И. П., Тельных Н. В., Психология управления, Серия «Учебники для высшей школы», Ростов н/Дону, Феникс, 2004, 608 с.

Шапиро С. А., Социально-экономические аспекты трудовой деятельности, Монография, М., АТИСО, 2011, 254 с.

Գ Լ Ո Ւ Խ ՈՒ
Հ Ա Ն Ր Ա Յ Ի Ն Կ Ա Ռ Ա Յ Ո Ղ Ն Ե Ր Ի Մ Ա Ս Ն Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն
Գ Ո Ր Կ Ո Ւ Ն Ե Ո Ւ Թ Յ Ա Ն Ե Վ Պ Ր Ո Ց Ե Ս Ի Ո Ն Ա Լ Ի Չ Մ Ի
Հ Ո Գ Ե Բ Ա Ն Ա Կ Ա Ն Ա Ռ Ա Ն Ձ Ն Ա Յ Ա Տ Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր Ը

Այս բաժնում քննարկվում են հանրային ծառայողի մասնագիտական կոմպետենտության հարցերը, տրվում է «մասնագիտական կոմպետենտություն» հասկացությունը հոգեբանական բնութագրերը: Տեսական անդրադարձ է կատարվում մասնագիտական կոմպետենտության տեսակներին, այնուհետև մեկնաբանվում են աշխատանքային գործունեության մեջ մասնագիտական ինքնորոշման խնդիրները: Բաժինն ավարտվում է հանրային ծառայողի մասնագիտական գործունեության ուսումնասիրման ակմեոլոգիական մոտեցումներին մեկնաբանությամբ:

2.1. Մասնագիտական կոմպետենտության տեսակները և հոգեբանական բնութագրերը

«Կոմպետենտություն» հասկացությունը սերտորեն կապված է մասնագիտական գործունեության մեջ «գիտակություն» բնորոշման հետ: Այսպես, օտարալեզու բառարաններում կոմպետենտությունը բացատրվում է որպես «գիտակություն և այնպիսի գիտելիքներին տիրապետում, որոնք թույլ են տալիս

դատողություններ անել ինչ-որ բանի վերաբերյալ ⁹⁶:
Վերջին շրջանում հայալեզու
աշխատողություններում հաճախ
կոմպետենտությունը ներկայացվում է որպես
իրագրելություն, սակայն, բովանդակությամբ
պայմանավորված, հաճախ գործածվում է նաև
բանիմացություն եզրույթը:

Իսկ «գիտակություն» հասկացությունն ինքնին
(լատիներեն *competentia`* իրավասություն) բացատրվում է
որպես`

1. ինչ-որ մարմնի կամ պաշտոնատար անձի
լիազորություններին շրջանակ,
2. այն հարցերի շրջանակը, որոնցում տվյալ անձը
գիտելիքներն փորձ ունի ⁹⁷:

«Կոմպետենտություն» հասկացությունը հաճախ
կիրառվում է նաև հոգեբանական
գրականությունում: Վերջին շրջանում այն
ներմուծվել է նաև կրթական համակարգ: Իմաստն այն
է, որ կրթության վերջնարդյունքը պետք է լինի
որոշակի կոմպետենցիաների ձեռքբերումը, ինչի
արդյունքում ստեղծվեց «կոմպետենտալիտետ
ուսուցում» արտահայտությունը: Մասնագիտական
գործունեության մեջ կոմպետենտությունը
համարվում է պրոֆեսիոնալ իզմի հատկանիշ ⁹⁸: Որպես
իրավասություն` այն բնութագրվում է սեփական
գործի, կատարվող աշխատանքի էության, դրանում
գոյություն ունեցող բարդ կապերի ու
հարաբերություններին, նպատակներին հասնելու
հնարավոր եղանակներին և միջոցներին
առավելագույնս հիմնավոր իմացություն:

⁹⁶ <http://dic.academic.ru/dic.nsf/ruwiki/1526590>

⁹⁷ Толковый словарь Д.Н. Ушакова <http://ushakovdictionary.ru/>

Большой энциклопедический словарь, http://enc-dic.com/enc_big/Kompetencija-28121.html

⁹⁸ Социальная психология: Учебное пособие для вузов (под ред. Сухова А.Н., Деркача А.А.). Серия: Высшее образование. 2000. с. 32-34, 56-60.

Կառավարման հոգեբանության արտասահմանյան մոտեցումներն ուսումնասիրելիս հանդիպում ենք «կոմպետենտություն» հասկացության այսպիսի մեկնաբանության. դա կառավարման այնպիսի միջոցների տիրապետումն է, որոնք գործնականում ապացուցել են իրենց արդյունավետությունը: Այսինքն՝ ղեկավարի կոմպետենտությունը ղեկավարի ընդունակություններն ու հմտություններն են:

Ժ. Յեննեկսի մոտեցումը «կոմպետենտություն» հասկացությանը փոքր-ինչ այլ է: Ըստ նրա՝ կոմպետենտությունն ասելով պետք է հասկանալ մենեջերի պատասխանատվությունն ու իրավունքները⁹⁹: Կատարված ուսումնասիրությունները թույլ են տալիս եզրակացնել, որ «կոմպետենտություն» հասկացությունն արտահայտում է մասնագիտական գործունեության խնդիրներին ու նպատակներին համապատասխան առաջադրանքների հստակ իրականացումն ապահոված աշխատանքը պատշաճորեն ներկայացնելու կարողություն: Այն հայտ է, որ այս հասկացության մեկնաբանություններում կոմպետենտությունը դիտարկվում է կառավարման և դրա հիմնական մեխանիզմների իրականացման տեսանկյունից:

Կառավարման հոգեբանության վերաբերյալ աշխատություններում իրազեկությունը մի կողմից մեկնաբանվում է որպես «ղեկավարի ինտեգրալային անհատական-կոգնիտիվ հատկանիշ, որը հիմնվում է մասնագիտական գիտելիքների և դրանք արդյունավետ կիրառելու կարողության համակարգի ձևավորվածության վրա»¹⁰⁰, մյուս

⁹⁹ **Йеннекс Ж.**, Менеджмент в условиях рыночной экономики: Теория и практика. Учебное пособие повышения квалификации менеджеров. Минск, 1992, 135 с.

¹⁰⁰ **Карпов А. В.**, Психология менеджмента. Учебное пособие. М., Гардарики, 2000, 584 с.

կողմից՝ որպես հատուկ ընդունակություն, որն ապահովում է կառավարման արտադրատեխնիկական գործառնությունների համակարգի արդյունավետ իրականացումը: Տվյալ գործառնությունների գլխավոր նպատակը վերջնական արդյունք ստանալն է, ինչն էլ ընկած է կազմակերպության գործունեության հիմքում: Գործունեության ողջ հաջողությունը կախված է այս գործառնությունների իրականացումից, որոնք ունեն մի կարևոր առանձնահատկություն. երբ գործողությունները պարբերաբար կրկնվում են, դրանց իրացումը կատարվում է անընդհատ փոփոխվող արտաքին և ներքին պայմաններում: Ղեկավարի կամ կառավարչի կոմպետենտության մակարդակը որոշվում է կառավարման օպերատիվ գործառնություն կատարելու նրա ընդունակությամբ:

Ա. Ֆ. Վեսելկովը, ներկայացնելով մի շարք հեղինակների սահմանումները «կոմպետենտություն» հասկացության վերաբերյալ, եզրակացնում է, որ այն մասնագիտական իրավիճակային խնդիրներն արդյունավետ լուծելու կոգնիտիվ կարողությունն է, ինչպես նաև մարդու ընդունակությունը՝ այնպես կառավարելու իր վարքը (հատկանիշների ամբողջությունը), որպեսզի դա համապատասխանի մասնագիտական այն պահանջներին, որոնք մշակվել են որոշակի կազմակերպական միջավայրում՝ ցանկալի արդյունքների հասնելու նպատակով. դրանք կառավարչական հաջող գործունեության համար անհրաժեշտ բնութագրերն են¹⁰¹: Վերլուծելով տարբեր սահմանումներ՝ նա հանգում է այն եզրակացության, որ «կոմպետենտություն» հասկացությունը «հիմնարար հատկություն»

¹⁰¹ А. Ф. Веселков, К вопросу о надежности результатов оценочных процедур и эффективности их использования, Журнал прикладной психологии, 2001, № 3, с. 3-8.

հասկացողությամբ փոխարինելիս սահմանման կառուցվածքը և իմաստը չեն փոխվում: «Կոմպետենտություն» հասկացողությունն առաջ է եկել մասնագիտությունների ամբողջական պրոֆեսիոգրամաների անհասանելի շեմը զգալիորեն իջեցնելու, բայց ոչ տարրական մակարդակի հասցնելու անհրաժեշտությունից¹⁰²:

Այսպիսով, Ա. Ֆ. Վեսելյուկի ելակետն այն է, որ կոմպետենտությունն իր կառուցվածքով բաղկացած է սուբյեկտի անհատական հատկանիշների «նվազագույն համալիրից», հատկանիշներ, որոնք համապատասխանում են նրա մասնագիտական գործունեությանը:

Միայլ հեզիսակ, վերլուծելով «կոմպետենցիա» և «կոմպետենտություն» հասկացողությունների ծագումնաբանությունը, նշում է Ջ. Ռադենի աշխատությունում արտել կոմպետենտությունը դիտարկվում է որպես սոցիալական կարևոր ոլորտում կյանքի հաջողություն: Ջ. Ռադենն առանձնացնում է կոմպետենտությունների 39 տեսակներ, որոնցից ուշագրավ են ինքնակրթությանը նդունակությունը, ինքնահսկողությունը, քննադատական մտածողությունը, բարդ խնդիրներ լուծելու պատրաստակամությունը, ինքնավստահությունը, համառությունը, համատեղ աշխատանքի ընդունակությունը և պատասխանատվությունը¹⁰³:

Վ. Դ. Օրեխովը կոմպետենտությունը համարում է «շրջապատի մարտահրավերներին արդյունավետորեն արձագանքելու և դրանք կանխատեսելու, ինչպես նաև կազմակերպության նազմավարական նպատակները զգալու, մարդկանց շահերը

¹⁰² Տե՛ս նույն տեղում:

¹⁰³ Кострова Ю. С., Генезис понятий «компетенция» и «компетентность». Молодой ученый. 2011, №12, Т.2, с. 102-104.

հասկանալու, նոր պայմաններում ինքնուրույն գործելու կարողություն»¹⁰⁴: Յեղիսակը ներկայացնում է «կոմպետենտություն» հասկացության հետևյալ բաղադրիչները՝ մտածողության ստեղծագործական ոճ, սեփական փորձը քննադատորեն իմաստավորելու կարողություն, անկանխատեսելի իրավիճակներին պատվով դուրս գալու կարողություն:

Մենեջմենթի և կառավարման տեսությունում «կոմպետենտություն» հասկացությունն աստիճանաբար ձևավորվել է ոչ միայն բուն մասնագիտական գործունեության, այլև բարդ համակարգերի, դրանցում գոյություն ունեցող սոցիալական հարաբերությունները կառավարելու պատրաստվածության մասին պատկերացումների հետ:

Կ. Ռոջերսը անձի և վարքագծի տեսությունը նկարագրելիս կիրառում է կոմպետենտության եզրույթը: Ուշագրավ է նրա այն միտքը, որ մարդու վարքագիծն ըմբռնելու հնարավորությունը և ամենահարմար դիրքորոշումներից մեկը հենց անձի կոմպետենտությունն է, այսինքն՝ «անհատի ներքին արժեքային համակարգը»¹⁰⁵: Նաև նշվում է այն, որ Կ. Ռոջերսը ենթադրում էր, որ մարդկանց վարքի բոլոր տեսակներն ուղղված են իրենց կոմպետենտության բարձրացմանը կամ ինքնահարացմանը: Նրա բնորոշ մամբ՝ վարքագիծը միջավայրի նկատմամբ ռեակցիան է այնպես, ինչպես այն ընկալվում է: Յետևաբար ավելի ճիշտ կլինի «մարդու վարքագիծը հասկանալ անձի արժեքային համակարգ առավելագույնս ներթափանցելու միջոցով, ինչպես նաև այդ անձի ապրումների աշխարհի պատկերները հնարավորինս նրա աչքերով տեսնելու միջոցով»¹⁰⁶:

¹⁰⁴ Դ. В. Орехов, К лидерству в бизнесе через развитие компетентности, Управление персоналом № 3 (80), 2003, с. 48.

¹⁰⁵ Хьел Л., Зиглер Д., Теории личности, Мастера психологии, Питер, 2006, 607с.

¹⁰⁶ Хьел Л., Зиглер Д., Теории личности, Мастера психологии, Питер, 2006, 607с.

«Կոմպետենտություն» հասկացությունը հիշատակում է նաև հայտնի հոգեբան Է. Էրիկսոնը, որը նկարագրում է մարդու զարգացման ութ հիմնական փուլեր: Նա առանձնացնում ու քննարկում է ոչ միայն հիմնական ճգնաժամերը, այլև որակական նորագոյացությունների հայտգալը¹⁰⁷: Ընդ որում, «իրագրելություն» հասկացությունը հեղինակը դիտարկում է հասարակությանը հարմարվելու տեսանկյունից: Էրիկսոնը գրում է, որ երեխայի մեջ զարգանում է ջանասիրություն, աշխատասիրություն, այսինքն՝ նա հարմարվում է «գործիքային» աշխարհի ոչ օրգանական օրենքներին: Նա ունակ է կատարելու արտադրական աշխատանք, չափազանց ջանասեր է և կլանված իր գործով: Հեղինակը կարծում է, որ երեխայի կոմպետենտության զարգացումն ընթանում է աշխատասիրության զարգացմանը գուցա հենց, ինչի արդյունքը լինում է ուրիշների կողքին և ուրիշների հետ աշխատանք կատարելը. այստեղ ի հայտ է գալիս և զարգանում է մշակույթի տեսնելու ոգիական էթնոսիգիտակցությունը¹⁰⁸:

Ամերիկացի հետազոտողներ Լ. Հյելլը և Դ. Չիգլերը, անդրադառնալով է. Էրիկսոնի տեսությանը, քննարկում են այնպիսի հասկացություն, ինչպիսին «կոմպետենտության զարգացողություն» է¹⁰⁹: Հեղինակները պնդում են, որ երեխայի կոմպետենտությունն աշխատասիրությունը մեծապես պայմանավորված են նրա առաջադիմությամբ և աշխատասիրությամբ: Այսպիսով, կոմպետենտությունը հասարակության սոցիալական, տնտեսական և քաղաքական կյանքին

¹⁰⁷ **Ջլինդ Է.**, Էրիկ Էրիկսոն և ութ փուլերի մարդկային կյանքի (Մ. Կոգիտո-սենտր, 1996. 166 ժ.)

¹⁰⁸ **Ջլինդ Է.**, Էրիկ Էրիկսոն և ութ փուլերի մարդկային կյանքի (Մ. Կոգիտո-սենտր, 1996.

¹⁰⁹ **Լ. Հյելլ, Դ. Չիգլեր**, Թեորիա անհատի, Մաստրա փսիխոլոգիա, Սանտա Կրուս, 2006, ժ. 227.

հաջող մասնակցության և մասնագիտական գործունեության հիմքն է:

Հոլմանիստական դպրոցի մեկ այլ ներկայացուցիչ՝ Աբրահամ Մասլոուն, «Կոմպետենտություն» հասկացությանն անդրադառնում է անհատական ուղղորդվածության հարցարանի նկարագրության ժամանակ, ինչը հնարավորություն է տալիս չափելու անհատի ինքնակտուալացման հետ կապված արժեքներն ու վարքագիծը: Իրագրության նրա ըմբռնումը համընկնում է անհատի կողմից «այժմ և այստեղ» հաջող գոյության հնարքներին տիրապետելու հետ (որը կիրառվում է ցանկացած կենսական իրավիճակում): Ըստ Ա. Մասլուոնի՝ մարդու համար անհրաժեշտ է զգալ իր ուժեղությունը, կոմպետենտությունը, նրան անհրաժեշտ է ինքնավստահություն, անկախություն և ազատության զգացում¹¹⁰:

Դ. Չիգլերը, ներկայացնելով անձի տեսությունը, նշում է, որ Ա. Մասլուոնի մշակած հարցարանի երկրորդ հիմնական սանդղակը կոչվում է «Կոմպետենտությունը ժամանակի մեջ»¹¹¹: Կոմպետենտությունը ժամանակի մեջ արտացոլում է, թե որքանով է մարդն ապրում ներկայում, որքանով է կենտրոնանում անցյալի և ապագայի վրա: Ենթադրվում է, որ իրագրելի ժամանակի մեջ կարող են մտածել այն մասին, թե ինչպես է անցյալը հարաբերակցվում ներկայի հետ, և երկարաժամկետ պլանները կարող են իրատեսություն կապել ընթացիկ խնդիրներին հետ: Նրանք կարողանում են ընկալել ժամանակի այդ երեք ասպեկտներին անընդհատությունը: Եվ ընդհակառակը, ոչ իրագրել

¹¹⁰ Маслоу А., Мотивация и личность, Пер. с англ., СПб., Евразия, 1999, 479 с.

¹¹¹ Хьел Л., Зиглер Д., Теории личности, Мастера психологии, Питер, 2006, 607с.

մարդիկ ժամանակի մեջ իրենց անցյալն ու ապագան բաժանում են ներկայից: Ներկայում նրանց կյանքը հիմնված է անցյալի հետ կապված փսոսանքի կամ վիրավորանքի զգացումի և ապագային միտված իդեալականացված նպատակների կամ վախերի վրա: Նրանք նույնպես բարդ ու թյուր են ներքին հանդիպում անցյալում իրենց ձեռքբերումներն ապագայի սպասելիքների հետ համադրելիս ¹¹²: Յեղիսակները պնդում են, որ ինքնակտուալացված մարդը հիմնականում իրազեկ է ժամանակի մեջ: Ժամանակի մեջ իրազեկ ու թյուր են զնահատում է մարդու՝ ներկայում ապրելու, ոչ թե անցյալի և ապագայի վրա կենտրոնանալու միտումը:

Մասնագիտակա կոմպետենտ ու թյան ծնվավորման օրինաչափ ու թյան միանշանակ պայմանավորված է հոգեբանական գործոններով, որոնք դրտարկվում են անձի տես ու թյուր ու ներում: ¹¹³ Կոմպետենտ ու թյան խնդիրը դրտարկվում է նաև կոգնիտիվ հոգեբան ու թյան մեջ, որը հասկաց ու թյուր են թնարկում է ճանաչողական հմտ ու թյուր ու ներքին ձեռքբերման շրջանակներում: Այս տես ու թյան հետևորդներ Ֆիտսը և Պոզները առաջարկել են մոդել, որը բաղկացած է կոգնիտիվ հմտ ու թյուր ու ներքին զարգացման երեք փուլից: Առաջինը նախնական կամ ճանաչողական փուլն է, որի ժամանակ տեղի է ունենում խնդրի ըմբռնում և ու շար ու թյան կենտրոնացում անհրաժեշտ տեղեկ ու թյան վրա: Յաջորդը միջանկյալ կամ ասոցիատիվ փուլն է, երբ փորձ է արվում կիրառել ու այնպիսի հնարքներ, որոնք թ ու յլ են տալիս արագ ըմբռնել ու մտապահել տեղեկ ու թյուր ու ներ, վերացնել սխալները և մեծացնել կատարման արագ ու թյուր ու ներ:

¹¹² **Хьел Л., Зиглер Д.**, Теории личности, Мастера психологии, Питер, 2006, 607с.

¹¹³ **Евтихов О.В.** Формирование профессиональной компетентности курсантов в образовательной среде вуза правоохранительных органов : монография. М. : ИНФРА-М, 2016. 181 с.

Վերջին՝ ինքնուրույն փուլի դեպքում ճիշտ պատասխանները դառնում են ինքնաբերական, բարձրանում է արագություն և խնդիրն անսխալ կատարելումակարգակը ¹¹⁴:

Ըստ կոգնիտիվ հոգեբանական ուղղության՝ նոր գիտելիքների ձեռքբերումը և նոր տեղեկատվության ուսումնասիրումն ընթանում են վերոհիշյալ ալգորիթմով: Նրանց բնութագրամբ, կոմպետենտությունը «ճանաչողական հմտությունների զարգացման բարձրագույն մակարդակն է, որը կարևոր տեղ է զբաղեցնում կոգնիտիվ հոգեբանության մեջ»¹¹⁵:

Կոգնիտիվ հոգեբանության կողմնակիցների կարծիքով, կոմպետենտության հիմքում ընկած է մասնագիտական և համակարգված գիտելիքների մեծ պաշար կուտակելու ձգտումը: Այդ գիտելիքները վերաբերում են կոնկրետ բնագավառի և իրացվում են որոշակի սկզբունքների կիրառման շնորհիվ: Չամաձայն այդ տեսակետի՝ գիտելիքները դասակարգված են փոխկապակցված խմբերում, ինչը հեշտացնում է տեղեկության մտապահումը: Չիշողության պահուստից հանված գիտելիքները կարող են կիրառվել տարբեր կերպ՝ կախված մասնագիտացման ոլորտից և իրավիճակից: Մասնագետներն իրենք են որոշում՝ խնդիրն իրենց գիտելիքների շրջանակներում է, թե անհրաժեշտ է կիրառել մերձ բնագավառների սկզբունքները ¹¹⁶:

Չետաքրքիր է նաև Է. Ֆ. Չեյերի մոտեցումը «կոմպետենտություն» հասկացությանը: Մասնագիտական կոմպետենտությունը, ըստ նրա, «մասնագիտական գիտելիքների, կարողությունների, ինչպես նաև մասնագիտական

¹¹⁴ Гейвин Х., Когнитивная психология, СПб., Питер, 2003, 272 с., с. 170, ил. (серия «Концентрированная психология»).

¹¹⁵ Гейвин Х., Когнитивная психология, СПб., Питер, 2003, 272 с.

¹¹⁶ Андерсон Дж.Р., Когнитивная психология. СПб., 2002, 496с.

գործունեությունը իրականացնելու եղանակներին ամբողջականությունն է»¹¹⁷: Մասնագիտական գործունեության տեսանկյունից նկարագրելով անձի կերտվածքը՝ հեղինակը տարանջատում է այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «մասնագիտական իրազեկությունը» և «մասնագիտորեն անհրաժեշտ հատկանիշները», որոնք անձի գործունեության արդյունավետությունը, արտադրողականությունը, որակը բնորոշող անձի հոգեբանական հատկանիշներն են ¹¹⁸:

Այսպիսով, իրազեկությունը, ըստ Է. Ֆ. Չեյերի, գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ գիտելիքներին, կարողություններին և միջացներին տիրապետելու ամբողջականությունն է, իսկ մասնագիտական որակները անձի հոգեբանական հատկանիշներն են, որոնք ազդում են գործունեության արդյունավետության վրա:

Ծարունակելով «կոմպետենցիա» հասկացության վերաբերյալ տեսական ուսումնասիրությունները՝ անդրադառնանք Ա. Կ. Մարկովայի մեկնաբանություններին: Նա իր «Պրոֆեսիոնալիզմի հոգեբանություն» գրքում գրում է, որ կոմպետենտությունը մասնագիտության պահանջներին համապատասխանության աստիճանի բնութագիրն է: Հեղինակն այս հասկացությունը դիտում է որպես հոգեկան հատկանիշների համադրություն, հոգեվիճակ, որը թույլ է տալիս ինքնուրույն տիրապետել որևէ հմտության կամ կարողության ¹¹⁹: Նա առաջարկում է դատողություն անել կոմպետենտության անկայության մասին՝ ըստ մարդու աշխատանքի արդյունքի: Հեղինակի

¹¹⁷ **Зеев Э. Ф.**, Психология профессий: Учебное пособие для студентов вузов. 2-е изд., перераб., доп., М., Академический Проект, Екатеринбург, Деловая книга, 2003, 336 с.

¹¹⁸ **Зеев Э. Ф.**, Психология профессий: Учебное пособие для студентов вузов. 2-е изд., перераб., доп., М., Академический Проект, Екатеринбург, Деловая книга, 2003, 336 с.

¹¹⁹ **Маркова А. К.**, Психология профессионализма. МГФ «Знание», М., 1996, 308 с.

կարծիքով, յուրաքանչյուր աշխատող կոմպետենտ է այնքան, որքան նրա կատարած աշխատանքը համապատասխանում է տվյալ մասնագիտական գործունեության վերջնական արդյունքին ներկայացվող պահանջներին, իսկ վերջնական արդյունքի գնահատումը կամ փոփոխությունը իրագրելության մասին դատելու միակ գիտական եղանակն է, ինչն ընկած է նաև ժամանակակից կրթական համակարգի պահանջների հիմքում¹²⁰: Ա. Կ. Մարկովան ուշադրություն է դարձնում նաև «կոմպետենտություն» և «իրավասություն» հասկացությունների բովանդակությանը: Իրավասությունը որոշակի ոլորտին առնչվող հարցերի շրջանակն է, որոնք մարդը կոչված է լուծելու: Կոմպետենտությունը հակասում է իրավասությանը և գերկոմպետենտությանը: Դա այն է, երբ մասնագետը տիրապետում է տվյալ աշխատանքը ընդունվածից ավելի լավ կատարելու եղանակի: Մարդու կոմպետենտությունը, Ա. Կ. Մարկովայի կարծիքով, արդեն իսկ նրա պրոֆեսիոնալիզմն է. իր գործունեության ոլորտում մարդը կարող է պրոֆեսիոնալ լինել, սակայն մասնագիտական բոլոր հարցերը լուծելու իրավասություն չունենալ¹²¹:

Ֆ. Ս. Իսմագիլովան կոմպետենտությունը համարում է մասնագիտական փորձի արդյունք, որը ձեռք է բերվում ժամանակի ընթացքում: Նրա կարծիքով, մասնագիտական գործունեության ընթացքում կուտակված փորձն ապահովում է կատարվող աշխատանքի երկրան, նպատակներին հասնելու եղանակներին և միջոցներին հիմնավոր ու խոր իմացություն, ձևավորված մասնագիտական իրավիճակը ճիշտ գնահատելու և անհրաժեշտ որոշում կայացնելու ընդունակություն: Ֆ. Ս.

¹²⁰ **Маркова А. К.**, Психология профессионализма. МГФ «Знание», М., 1996, 308 с.

¹²¹ **Маркова А. К.**, Психология профессионализма. МГФ «Знание», М., 1996, 308 с.

Ի ս մ ա գ ի լ ո վ ա ն «կ ո մ պ ե տ ե ն տ ու լ թ յ ու ն »
 հ ա ս կ ա գ ու լ թ յ ու ն ը ք ն ու լ թ ա գ թ ու մ է ո թ պ ե ս ս ե փ ա կ ա ն
 մ ա ս ն ա գ ի տ ա կ ա ն գ ո թ ծ ու ն ե ու լ թ յ ա ն մ ե ջ մ ա ս ն ա գ ե տ ի
 տ ե ղ ե կ ա գ վ ա ծ ու լ թ յ ա ն մ ա կ ա թ դ ա կ : Յ ե ղ ի ն ա կ ն ա յ ն
 տ ե ս ա կ ե տ ի կ ո ղ մ ն ա կ ի ց ն է , ո թ մ ա ս ն ա գ ի տ ա կ ա ն փ ո թ ծ ը
 ս ե թ տ ո թ ե ն պ ա յ մ ա ն ա վ ո թ վ ա ծ է մ ա ս ն ա գ ե տ ի
 ի թ ա գ ե կ ու լ թ յ ա մ ք և ո թ ա կ ա վ ո թ մ ա մ ք : Ը ս տ ն թ ա`
 ի թ ա գ ե կ ու լ թ յ ու ն ը գ ի տ ե լ ի ք ն ե թ ի , փ ո թ ծ ի ,
 կ ա թ ո ղ ու լ թ յ ու ն ն ե թ ի , հ մ տ ու լ թ յ ու ն ն ե թ ի ,
 մ ա ս ն ա գ ի տ ա կ ա ն ի ն տ ու լ ի ց ի ա յ ի , մ ա ս ն ա գ ի տ ա կ ա ն
 կ ու լ տ ու թ ա յ ի և ա ն հ ա տ ա կ ա ն հ ա տ կ ա ն ի շ ն ե թ ի
 ա մ ք ո ղ ջ ու լ թ յ ու ն ն է ¹²²:

Ա. Ա. Դ ե թ կ ա չ ը «կ ո մ պ ե տ ե ն տ ու լ թ յ ու ն »
 հ ա ս կ ա գ ու լ թ յ ու ն ն ու ս ու մ ն ա ս ի թ ե լ է
 ա կ մ ե ո լ ո գ ի ա յ ի շ թ ջ ա ն ա կ ն ե թ ու մ : Յ ա յ տ ն ի է , ո թ
 ա կ մ ե ո լ ո գ ի ա յ ի ու ս ու մ ն ա ս ի թ ու լ թ յ ա ն ա ռ ա թ կ ա ն
 մ ա թ դ ու զ ա թ գ ա գ ու մ ն է ո ղ ջ կ յ ա ն ք ի ը ն թ ա գ ք ու մ ,
 հ ա տ կ ա պ ե ս հ ա ս ու ն ու լ թ յ ա ն շ թ ջ ա ն ու մ , ի ն չ ա պ ե ս ն ա ն
 ա յ ն օ թ յ ե կ տ ի վ և ս ու թ յ ե կ տ ի վ պ ա յ մ ա ն ն ե թ ը , ո թ ո ն ց
 ա գ դ ե ց ու լ թ յ ա մ ք մ ա թ դ ը կ ա յ ա ն ու մ է ո թ պ ե ս
 ս ո ց ի ա լ ա պ ե ս ա կ տ ի վ ա ն հ ա տ և ք ա թ ծ թ ա կ ա թ գ մ ա ս ն ա գ ե տ :
 Ի ս կ ա յ ն ա փ ս ի հ ա ս կ ա գ ու լ թ յ ու ն ն ե թ ը , ի ն չ ա փ ս ի ք ե ն
 «պ թ ո Ֆ ե ս ի ո ն ա լ ի գ մ ը », «վ ա թ պ ե տ ու լ թ յ ու ն ը » և
 «կ ո մ պ ե տ ե ն տ ու լ թ յ ու ն ը », գ ո թ ծ ու ն ե ու լ թ յ ա ն
 ս ու թ յ ե կ տ ի կ ա թ ո ղ ո թ ա գ ու յ ն ս ու թ յ ե կ տ-ա ն ձ ն ա յ ի ն
 հ ա տ կ ա ն ի շ ն ե թ ն : Գ ո թ ծ ու ն ե ու լ թ յ ա ն
 պ թ ո Ֆ ե ս ի ո ն ա լ ի գ մ ի ե ն թ ա հ ա մ ա կ ա թ գ ը ք ա թ ծ թ
 մ ա ս ն ա գ ի տ ա կ ա ն ի թ ա գ ե կ ու լ թ յ ա ն , մ ա ս ն ա գ ի տ ա կ ա ն
 հ մ տ ու լ թ յ ու ն ն ե թ ի ու կ ա թ ո ղ ու լ թ յ ու ն ն ե թ ի
 ն ե թ դ ա շ ն ա կ հ ա մ ա դ թ ու լ թ յ ու ն ի ց ք խ ո ղ
 մ ա ս ն ա գ ի տ ա կ ա ն վ ա թ պ ե տ ու լ թ յ ու ն ն է : Մ ա ս ն ա գ ի տ ա կ ա ն
 կ ո մ պ ե տ ե ն տ ու լ թ յ ա ն և ն թ ա տ ա թ ք ե թ տ ե ս ա կ ն ե թ ի
 գ ա թ գ ա գ մ ա ն ի ն դ ի թ ն ե թ ի ու ս ու մ ն ա ս ի թ ու լ թ յ ու ն ը

¹²² **Փ. Ս. Исмагилова**, К проблеме психологического анализа профессионального опыта, Вестник Московского Университета. Сер. Психология, 2000, № 2, с. 16-26.

հատուկ տեղ է զբաղեցնում ակմեոլոգիայում, քանի որ մասնագիտական կոմպետենտությունը անձի և նրա գործունեության պրոֆեսիոնալիզմի գլխավոր բաղադրիչն է, պրոֆեսիոնալի կայացման կարևոր պայմանը: Իսկ իրազեկության մակարդակի բարձրացումն ինքնին խթան է նոր հմտությունների և կարողությունների ձևավորման, այսինքն՝ մասնագիտական վարպետության աճի: Իրազեկության զարգացումը դրական ազդեցություն է թողնում անհատական և մասնագիտական ձեռքբերումների մոտիվացիայի վրա¹²³:

Մասնագիտական կոմպետենտությունը գործունեության պրոֆեսիոնալիզմի ենթահամակարգի առաջնային կոզնիտիվ բաղադրիչներից մեկն է, մասնագիտական գործունեության ոլորտ, անընդհատ ընդլայնվող գիտելիքների համակարգ, որը թույլ է տալիս մասնագիտական գործունեության իրականացնել բարձրարդյունավետություն¹²⁴:

Կարևու է նշել, որ կոմպետենտությունը հատկանիշ է, որը բնութագրում է անձի մասնագիտական որակների համախումբը և դրանց դրսևորումը: Ակմեոբանական մոտեցումը կոմպետենտության մասին պատկերացման մեջ ներառում է նաև գործունեության բարդ պայմաններում ազատ կողմնորոշվելու, նրա օբյեկտիվ և սուբյեկտիվ բաղադրիչների հետ աշխատելու, գործունեության իրականացման նոր եղանակներ ու տեխնոլոգիաներ ներմուծելու կարողությունը¹²⁵: Կառավարչական և կատարողական գործունեության արդյունավետությունը, պայմանավորված է ոչ միայն մասնագետի

¹²³ Акмеология: Учебное пособие (А. Деркач, В. Зазыкин). СПб.: Питер, 2003, 256 с.

¹²⁴ **Деркач А. А., Зазыкин В. Г., Маркова А. К.**, Психология развития профессионала: Учебное пособие, М., Издательство РАГС, 2000, 124 с.

¹²⁵ Акмеология: Учебник, Под общ. ред. А. А. Деркача, М., Изд-во РАГС, 2002, 650 с.

իր ազգեկոլթյան աստիճանով, այլև նրա վարպետությունը, ստեղծագործական ներուժով, ամենակարևորը՝ անհատական նախաձեռնողականությունը և նրա մասնագիտական գիտակցությունը ակտիվությունը: Յետևաբար ակմեոլոգիան ու շարժումը կենտրոնացնում է մասնագիտական իր ազգեկոլթյան և ստեղծագործական ունակությունների ուսումնասիրման ու զարգացման վրա՝ որպես մարդկային գործունի հիմնական ասպեկտներ, մինչդեռ հոգեբանությունը կենտրոնանում է նրա այնպիսի բաղադրիչների վրա, ինչպիսիք են հոգեկան գործընթացները և վիճակները ¹²⁶: Նկարագրելով «իր ազգեկոլթյան խնդրի ակմեոլոգիական ասպեկտը»՝ Վ. Չազիկինը «մասնագիտական իր ազգեկոլթյան» հասկացությունը մեջ առանձնացնում է անձի այդ հատկանիշի որակական բնութագրերը՝ պայմանավորված միջարք փոխկապակցված առանձնահատկություններով ¹²⁷:

Առաջինը գնոստիկական կամ ճանաչողական բնութագիրն է, որն արտացոլում է անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների առկայությունը: Երկրորդը կարգավորման բնութագիրն է, որը դրսևորվում է կանխատեսման և արդյունավետ որոշումներ կայացնելու ընդունակությունը: Յաջորդը ռեֆլեքսիվ-կարգավիճակային բնութագիրն է, որը որոշակիորեն գործելու իրավունք է տալիս: Չորրորդը սահմանում է լիազորությունների շրջանակը, մասնագիտական ղեկավարման ընթացքը: Յինգերորդը հաղորդակցական բնութագիրն է, քանի որ պրակտիկ

¹²⁶ Акмеология: Учебник, Под общ. ред. А. А. Деркача, М., Изд-во РАГС, 2004, 299 с., с.13-14
¹²⁷ Акмеология: Учебник, Под общ. ред. А. А. Деркача, М., Изд-во РАГС, 2002, 650 с.

գործունեությունը միշտ իրականացվում է շփման միջոցով ¹²⁸:

Ի. Ա. Չիմնայան, հիմնվելով արտասահմանյան հեղինակների հետազոտությունների վրա, ոչ միայն դիտարկում է բնութագրում է «կոմպետենտություն» և «իրավասություն» հասկացությունները, այլև դրանք համեմատելով միմյանց հետ՝ առանձնացնում է հիմնական իրազեկությունների խմբեր, որոնք ներառում են տարբեր իրավասություններ: Ըստ Ի. Չիմնայայի՝ իրավասությունը ներքին, թաքնված հոգեբանական և որպեսզի անհատը ինքնուրույն կարողանա գիտել իքները, պատկերացումները, գործողությունների, արժեքների և հարաբերությունների համակարգերի ալգորիթմները, որոնք այնուհետև դրսևորվում են մարդու իրազեկության տիրույթում ¹²⁹:

Այսպիսով, տեսական ուսումնասիրությունները թույլ են տալիս եզրակացնել, որ «կոմպետենտություն» հասկացության բովանդակությունը որոշելու փորձեր կատարվել են տարբեր հեղինակների կողմից, սակայն միասնական մոտեցում հոգեբանության մեջ այդպես էլ չի մշակվել: Այս հասկացությունը բացատրելու համար յուրաքանչյուր հեղինակ առաջարկում է իր տեսակետն ու հիմնավորումները:

Մասնագիտական կոմպետենտության բովանդակությունն ու բնույթն առավել համակողմանի մեկնաբանում են մենեջմենթի և իրավիճակային մոտեցման հոգեբանները: Երևույթի ուսումնասիրման հարցում հարելով էկլեկտիկ մոտեցմանը և հիմնվելով վերը նշված ուղղությունների վրա՝ կարող ենք ասել, որ

¹²⁸ Акмеология: Учебник, Под общ. ред. А. А. Деркача, М., Изд-во РАГС, 2002, 650 с.

¹²⁹ И. А. Зимняя, Ключевые концепции – новая парадигма результата образования, Высшее образование сегодня, 2003, № 5, с. 3-12.

մասնագիտական կոմպետենտությունը ինտեգրալային անհատական կրթությունն է, որը ներառում է մասնագիտորեն կարևոր գիտելիքներ, հմտություններ և մասնագետի գործունեությանն առնչվող հատուկ իրավասություն:

Մասնագիտական կոմպետենտության ձևավորման հիմնական բաղադրիչներն են գիտելիքները, անձնային որակները և զարգացման ենթակա հոգեբանական որակները, և այն չի կարելի շփոտել պրոֆեսիոնալ իզմի հետ¹³⁰: Կարևոր նշանակություն ունի անձի ինքնությունը հետևյալ բաղադրիչներով՝ սեփական անձ, սոցիալական անձ և քաղաքական անձ:

«Մասնագիտական կոմպետենտություն» հասկացությունը մեկնաբանելու համար անհրաժեշտ է դիտարկել այս հասկացության կառուցվածքը: Մասնագիտական կոմպետենտությանը տարբեր մեկնաբանություններ են տրվել նաև մանկավարժների և այլ մասնագետների կողմից: Քանի որ մասնագիտական կողմնորոշման հարցերը բազմիցս քննարկվում են մանկավարժության բնագավառում, այդ իսկ պատճառով անդրադառնանք Ն. Վ. Կուզմինայի մեկնաբանությանը, ով բազմաթիվ տեսակներից առանձնացնում է հատկապես հոգեբանական կոմպետենտությունը: Յեղիևակի ելակետը հետևյալն է. հոգեբանական կոմպետենտությունը մարդու՝ որպես անհատական կամ համատեղ գործունեության մեջ ընդգրկված, մասնագիտական կամ այլ փոխազդեցություններ իրականացնող անհատի, անհատականության, աշխատանքի սուբյեկտի և անձի մասին գիտելիքների

¹³⁰ **Евтихов О.В.** Формирование профессиональной компетентности курсантов в образовательной среде вуза правоохранительных органов : монография. М. : ИНФРА-М, 2016. с.7-9

կառուցվածքային համակարգ է ¹³¹: Նրա կարծիքով, հոգեբանական կոմպետենտությունը բաղկացած է մի քանի փոխկապակցված ենթահամակարգերից: Դրանք են՝

- ✓ սոցիալ-պեդագոգիկ կոմպետենտություն, որը ներառում է հասարակության մասին գիտելիքներ և այնպիսի տեղեկություն, որը կուտակվում է իմացության համար մատչելի փաստերի համադրությամբ.
- ✓ սոցիալ-հոգեբանական կոմպետենտություն, որը ենթադրում է որոշակի վարքային դրսևորումներ խմբային գործունեության մեջ.
- ✓ առտո-հոգեբանական կոմպետենտություն, որի հիմքում ինքնավերահսկողությունն է, սեփական վիճակն ու աշխատունակությունը կառավարելու ընդունակությունը, ինքնարդյունավետության կառավարումը.
- ✓ հաղորդակցական կոմպետենտություն, ինչը ենթադրում է արդյունավետ և դյուրին շփման վերաբերյալ գիտելիքներ ու հմտություններ.
- ✓ հոգեբանամանկավարժական կոմպետենտություն, որը ենթադրում է այլ մարդկանց ինչ-որ բան սովորեցնելու և նրանց վարքի ու մտածողության վրա ազդելու կարողություն:

Ն. Կուլգմիևան հանգում է այն եզրակացության, որ հոգեբանական կոմպետենտության բարձր մակարդակն ապահովում է «մարդկային բաղադրիչի» կառավարման հոգեբանական մեթոդների հաջողյունը ¹³²:

Ռուս հետազոտող Ա. Կ. Մարկովայի կարծիքով, կոմպետենտության տեսակները բնութագրում են

¹³¹ Кузьмина Н. В., Профессионализм личности преподавателя и мастера производственного обучения. М., 1990, 305 с.
¹³² Кузьмина Н. В., Профессионализм личности преподавателя и мастера производственного обучения. М., 1990, 305 с.

մասնագիտական գործունեության, անձի՝ որպես սպորտֆեուիստի կայացման և նրա մասնագիտական հասունության աստիճանը:

Ա. Մարկովան առանձնացնում է մասնագիտական կոմպետենտության մի քանի տեսակ: Դրանցից մեկը հատուկ կոմպետենտությունն է՝ բուն մասնագիտական գործունեությանը բարձր մակարդակով տիրապետելը, սեփական մասնագիտական զարգացման ընթացքը նախագծելու ընդունակությունը: Հատուկ կոմպետենտությունը արտադրական գործընթացները պլանավորելու, համակարգիչ, օրգանական տեխնիկա կիրառելու, տեխնիկական փաստաթղթեր ընթերցելու ընդունակությունն է¹³³:

Մասնագիտական կոմպետենտության տեսակ է սոցիալական կոմպետենտությունը, որը մասնագիտական համատեղ (խմբային, կոոպերատիվ) գործունեություն և համագործակցություն է: Օ.Եվտիխովը նշում է, որ այն սկսում է ձևավորվել մասնագիտական կրթության գործընթացում:

Անձնային կոմպետենտությունը անձի ինքնարտահայտման և ինքնազարգացման հնարքներին, մասնագիտական դեֆորմացիային դիմակայելու եղանակներին տիրապետելն է: Այն ներառում է սեփական աշխատանքային գործունեությունը պլանավորելու, վերահսկելու և կարգավորելու, ինքնուրույն ոչ ստանդարտ որոշումներ կայացնելու ընդունակությունը, տեսական և գործնական ճկուն մտածողությունը, հիմնախնդիրը տեսնելու կարողությունը, նոր գիտելիքներ և կարողություններ ինքնուրույն ձեռք բերելու ընդունակությունը:

¹³³ **Маркова А. К.**, Психология профессионализма. МГФ «Знание», М., 1996, 308 с.; **Евтихов О.В.** Формирование профессиональной компетентности курсантов в образовательной среде вуза правоохранительных органов: монография. М.: ИНФРА-М, 2016. 181 с.

Անհատական կոմպետենտությունը մասնագիտության շրջանակներում ինքնաիրացման և անհատականության զարգացման հնարքներ ի տիրապետումն է, մասնագիտական աճի պատրաստակամությունը, անհատական ինքնապահպանման ընդունակությունը, սեփական աշխատանքն արդյունավետ կազմակերպելու կարողությունը՝ առանց ավելորդ ժամանակ և ծեր վատնելու և առանց հոգնելու: Անհատական կոմպետենտությունը ներառում է նաև միջմասնագիտական այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են նվաճելու մոտիվացիան, հաջողության ռեսուրսը, սեփական աշխատանքի որակը բարձրացնելու ձգտումը, ինքնամոտիվացման ընդունակությունը, ինքնավստահությունը, լավատեսությունը¹³⁴:

Ա. Մարկովայի մեկնաբանությամբ՝ կոմպետենտության տեսակներից յուրաքանչյուրը ներառում է ընդհանուր միջմասնագիտական բաղադրիչներ: Նա հիշատակում է նաև կոմպետենտության այնպիսի տեսակի մասին, ինչպիսին արտակարգ իրավիճակներում գործելու մասնագիտական իրազեկությունն է, երբ մարդը պատրաստ է արդյունավետ կատարելու իր աշխատանքը անսպասելի առաջացած իրավիճակներում:

Դիտարկենք սույն հարցի վերաբերյալ Ա. Ա. Դերկաչի մոտեցումը, ըստ որի՝ Նա համաձայն է Ե. Ա. Կլիմովի այն կարծիքին, որ հոգեբանական կոմպետենտությունը հատուկ տեղ է զբաղեցնում մասնագիտական իրավասության համակարգում, եթե գործունեությունը պատկանում է «մարդ-մարդ», «մարդ-խումբ կամ կոլեկտիվ» և «մարդ-մեծ սոցիալական խմբեր» դասերին¹³⁵: Ընդ որում,

¹³⁴ **Маркова А. К.**, Психология профессионализма. МГФ «Знание», М., 1996, 308 с.

¹³⁵ **Акмеология: Учебное пособие.** А. Деркач, В. Зазыкин. СПб.: Питер, 2003, 125с., с.55

հոգեբանական իրազեկությունը թույլ է տալիս արդյունավետորեն փոխազդել և ղեկավարել կառավարման ենթակա համակարգերի «մարդկային բաղադրիչը»: Դիտարկելով զբաղվածություն ծառայություն մասնագետ-խորհրդատուների մասնագիտական գործունեության կառուցվածքը՝ Ա. Դերկաչն առանձնացնում է մասնագիտական կոմպետենտություն հետևյալ հիմնական բաղադրիչները.

- ✓ մասնագիտական-իրավական կոմպետենտություն (իրահանման փաստաթղթերի, մասնագիտական խորհրդատվության վերաբերյալ մեթոդական նյութերի նյութի մագնություն),
- ✓ մասնագիտական կոմպետենտություն (մասնագիտական զարգացման գործունեության, անձի մասնագիտական ձևախախտման և այլնի մասին գիտելիքների համակարգ),
- ✓ սոցիալ-պեդոգոգիկ կոմպետենտություն (մարդու կողմից մարդուն ընկալելու և ըմբռնելու, վարքագծի ու հարաբերությունների բնութագրիչների վերաբերյալ գիտելիքների համակարգ),
- ✓ հաղորդակցական կոմպետենտություն (միջանձնային շփման տարբեր ձևերի, բովանդակություն, հոգեբանական ազդեցությունների մեթոդների, դրանց կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիքներ)¹³⁶:


Այսպիսով, մասնագիտական կոմպետենտության կառուցվածքը և բովանդակությունը ակմեոբանական մոտեցման տեսանկյունից մեծ մասամբ պայմանավորված են կատարվող

¹³⁶ Акмеология: Учебное пособие. А. Деркач, В. Зазыкин. СПб.: Питер, 2003, 125 с., с.74

մասնագիտական գործունեության բնույթով և որոշակի տիպերին դրա պատկանելությամբ:

Կոմպետենտության ուսումնասիրությանը մեծ տեղ է հատկացրել նաև Ա. Ա. Բոդալյովը: Յեղիսկան առանձնացնում է մասնագիտական կոմպետենտության երեք խումբ՝ կոմպետենտություն և մասնագիտական գործունեության պարագայում, կոմպետենտություն և մասնագիտական հաղորդակցման պարագայում և կոմպետենտություն և մասնագետի անձինքնիրացման պարագայում¹³⁷:

Այնուհետև նա խմբերից յուրաքանչյուրին ներսում առանձնացնում է մասնագիտական կոմպետենտության տեսակներ (նկար 1):



Ն կ ա ր

1. Մասնագիտական կոմպետենտությունները ըստ Ա. Ա. Բոդալյովի

Ա. Ա. Բոդալյովը մասնագիտական գործունեության մեջ կոմպետենտությունը բաժանում է հետևյալ տեսակների.

- ✓ սոցիալական

¹³⁷ Анастаси А., Психологическое тестирование. В 2х т., М., Педагогика, 1982, 524 с.

- ✓ տեխնոլոգիական
 - ✓ սուբյեկտիվ
 - ✓ մասնագիտական
 - ✓ իրավական
 - ✓ տնտեսական:
 - ✓ Մասնագիտական 2 փման դեպքում կոմպետենտությունը լինում է՝
 - ✓ հաղորդակցական
 - ✓ սոցիալ-պերցեպտիվ
 - ✓ դիֆերենցիալ-հոգեբանական
 - ✓ գնահատողական (այլ մարդուն նուսումնասիրելու ընդունականություն)
 - ✓ բարոյագիտական
 - ✓ ապրումակցող
 - ✓ միջմշակութային, այլ մշակույթի հանդեպ հանդուրժողականությունը
 - ✓ կոնֆլիկտային:
 - Մասնագիտական աճի կոմպետենտությունը լինում է՝
 - ✓ հոգեբանական
 - ✓ անհատական
 - ✓ մշակութային
 - ✓ ռեֆլեքսիվ (արտացոլող)¹³⁸:
- Ինչպես երևում է տարբեր հետազոտողների մեկնաբանություններին, կոմպետենտությունը պարունակում է փոխկապակցված տարբեր բաղադրիչներ, սակայն դրամասնագիտական առանցքը հոգեբանական կոմպետենտությունն է, որը ներառում է սոցիալ-պերցեպտիվ, սոցիալ-հոգեբանական, անձնային, հաղորդակցական, հոգեբանամանկավարժական կոմպետենտությունները:

¹³⁸ **Бодалев А. А.**, Вершина в развитии взрослого человека. Характеристики и условия достижения. М., Флинта: Наука, 1998, 453 с.

Ա. Ա. Բ ո դ ա լ յ ո վ ը , վ ե ռ լ ու ծ ե լ ո վ
կ ո մ պ ե տ ե ն տ ու թ յ ա ն տ ե ս ա կ ն ե ը , պ ն դ ու մ է , ո թ
դ ը ր ա ն ց ի ց յ ու ը ր ա ք ա ն չ յ ու ը ը պ ա թ ու լ ն ա կ ու մ է ա ն ձ ի մ ի
շ ա թ ք ո թ ո շ ա կ ի հ ա տ կ ու թ յ ու լ ն ն ե թ և
կ ա թ ո ղ ու թ յ ու լ ն ն ե թ : Ա յ ս պ ե ս , ս ո ց ի ա լ -պ ե թ ց ե պ տ ի վ
կ ո մ պ ե տ ե ն տ ու թ յ ա ն հ ի մ ք ու մ ը ն կ ա ծ ե ն ա յ ն պ ի ս ի
հ ա վ ա ք ա կ ա ն հ ա տ կ ա ն ի շ ն ե թ ու կ ա թ ո ղ ու թ յ ու լ ն ն ե թ ,
ի ն չ պ ի ս ի ք ե ն խ ո թ ա թ ա փ ա ն ց ու թ յ ու լ ն ն ու
դ ի տ ո ղ ա կ ա ն ու թ յ ու լ ն ը : Ա ու տ ո կ ա մ ի ն ք ն ա -
հ ո գ ե ք ա ն ա կ ա ն կ ո մ պ ե տ ե ն տ ու թ յ ա ն մ ա կ ա թ դ ա կ ը
ք ն ո թ ո շ ու մ է ա յ ն պ ի ս ի հ ա տ կ ա ն ի շ ն ե թ ի գ ա թ գ ա ց ու մ ը ,
ի ն չ պ ի ս ի ք ե ն ի ն ք ն ա վ ե ռ լ ու ծ ու թ յ ա ն
ու լ ն ա կ ու թ յ ու լ ն ը , հ ա մ ա թ ժ ե ք ի ն ք ն ա գ ն ա հ ա տ ա կ ա ն ը ,
ի ն ք ն ա կ ա թ գ ա վ ո թ մ ա ն մ ա կ ա թ դ ա կ ը ,
ի ն ք ն ա թ դ յ ու լ ն ա վ ե տ ու թ յ ու լ ն ը և ա յ լ կ ա թ և ո թ ա գ ու յ ն
հ ա տ կ ա ն ի շ ն ե թ ¹³⁹:

Յ ե տ ա գ ո տ ո ղ ն ե թ ն առ ա ն ձ ն ա ց ն ու մ ե ն ն ա ն
կ ո մ պ ե տ ե ն տ ու թ յ ա ն ռ ե \$ լ ե ք ս ի վ տ ե ս ա կ ը : Ա յ ն
մ ե կ ն ա ք ա ն վ ու մ է ո թ պ ե ս ռ ե \$ լ ե ք ս ի վ
ը ն դ ու լ ն ա կ ու թ յ ու լ ն ն ե թ ի ի թ ա ց մ ա ն և մ տ ա ծ ո ղ ու թ յ ա ն
կ ա թ ծ ը ա տ ի պ ե թ ի հ ա ղ թ ա հ ա թ մ ա ն , ի ն չ պ ե ս ն ա ն
ի ն ո վ ա ց ի ո ն ք ո վ ա ն դ ա կ ու թ յ ա ն ձ և ա վ ո թ մ ա ն
կ ո մ պ ե տ ե ն տ ու թ յ ու լ ն ¹⁴⁰:

Մ ա ս ն ա գ ի տ ա կ ա ն կ ո մ պ ե տ ե ն տ ու թ յ ա ն խ ն դ ի թ ը
ք ն ն ա թ կ ե լ ի ս հ ե տ ա գ ո տ ո ղ ն ե թ ն ա ն դ ը ա դ ա թ ձ ե լ ե ն
ա շ խ ա տ ա ն ք ա յ ի ն գ ո թ ծ ու լ ն ե ու թ յ ա ն հ ա մ ա թ կ ա թ և ո թ մ ի
կ ա թ ո ղ ու թ յ ա ն և ս : Խ ո ս ք ը վ ե թ ա ք ե թ ու մ է
կ ո ն \$ լ ի կ տ ա յ ի ն ի թ ա վ ի ճ ա կ ն ե թ ի կ առ ա վ ա թ մ ա ն
կ ո մ պ ե տ ե ն ց ի ա յ ի ն , ի ն չ ի հ ի մ ք ու մ ը ն կ ա ծ է
կ ո ն \$ լ ի կ տ ն ե թ ը լ ու ծ ե լ ու և դ ը ա ն ք կ առ ա վ ա թ ե լ ու
ը ն դ ու լ ն ա կ ու թ յ ու լ ն ը : Ը ս տ է ու թ յ ա ն , կ ո ն \$ լ ի կ տ ն
ա ն խ ու ս ա փ ե լ ի ո թ ե ն կ ա պ վ ա ծ է տ ա թ ա ք ն ու յ թ

¹³⁹ **Бодалев А. А.,** Вершина в развитии взрослого человека. Характеристики и условия достижения. М., Флинта: Наука, 1998, 453 с.


Акмеология: Учебное пособие. А. Деркач, В. Зазыкин. СПб., Питер, 2003, 125 с., с.76

¹⁴⁰ Акмеология: Учебное пособие. А. Деркач, В. Зазыкин. СПб., Питер, 2003, 125 с., с.77

հիմնախնդիրները հետ, որոնք առաջանում են ցանկացած կազմակերպության գործունեության ընթացքում, ինչպես նաև այն լարվածության հետ, որն ընդամենը խանգարում է այս կամ այն հիմնահարցի լուծմանը ¹⁴¹:

Ակմեոբանության շրջանակներում հիմնահարցի վերաբերյալ կատարված հետազոտությունները թույլ են տվել առանձնացնել կակմեոբանական նոր կատեգորիա՝ «ակմեոլոգիական կոմպետենտություն»։ Ընդհանուր առմամբ այն դիտվում է որպես կակմեոլոգի պրոֆեսիոնալիզմի կոգնիտիվ բաղադրիչ։ Նրա մասնագիտական վարքի ոլորտը ներառում է հասուն անձի և նրա պրոֆեսիոնալիզմի զարգացման սկզբունքների ու օրինաչափությունների մասին կակմեոլոգիական գիտելիքները ¹⁴²:

Այս առումով ուշագրավ է Պ. Յա. Տոլչովի մոտեցումը կառավարիչների կոմպետենտությանը .
նա



առաջարկում է կոմպետենտության տարբեր մակարդակներ (նկար 2):

¹⁴¹ Աղ ու զ ու մ գ յ ա ն Ռ. Վ., Լ ո թ յ ա ն Ա. Բ., Պ ե տր ո ս յ ա ն Լ. Յ., Կ ո ն Ֆ լ ի կ տի կ առ ա վ ար ու մ ը կ ազ մ ա կ եր պ ու թ յ ու ն ն եր ու մ, Երևան, «Պետական ծառայություն» հրատ., 2012, 76 էջ :

¹⁴² Акмеология: Учебное пособие. А. Деркач, В. Зазыкин. СПб., Питер, 2003, 256 с.

Նկար 2. Մենեջերի կոմպետենտությունների մակարդակները՝ ըստՊ.Տոլչոկայի

Չգիտակցված ոչ կոմպետենտ (չիրազեկված կառավարիչ) - Դա այն դեպքն է, երբ կառավարիչը տեղյակ չէ կառավարման եղանակների և մեթոդների բազմազանության մասին, չի ցանկանում ուսումնասիրել, առավել ևս՝ ընդունել դրանք: Մարդկանց հետ աշխատում է այնպես, ինչպես սովոր է: Նա հանգիստ կարող է հայտարարել, որ եթե իր ենթականերին ձեռնտու չէ իր հետ աշխատելը, ապա կարող են ազատվել աշխատանքից:

Գիտակցված ոչ կոմպետենտ (զարգացող կառավարիչ) - Այս դեպքում սովորաբար ասում են, որ դեկավարը հասկացել է, որ զարգացումն անհրաժեշտ է, որ ոչել է զարգացման սահմանները (դրանք հետագայում կարող են ընդլայնվել) և սկսել է սովորել: Այդպիսի կառավարիչները սովորելու նպատակով փորձում են գործնականում կիրառել ձեռք բերած գիտելիքները:

Գիտակցված կոմպետենտ (իրազեկված կառավարիչ) - Այս կառավարիչն անանձնանում է ցանկացած բարդ իրավիճակից ելք գտնելու կարողությամբ: Կառավարման բարձրագույն օղակի իրազեկ կառավարիչները, որպես կանոն, միշտ ուշադրություն կենտրոնանում են և բավականին

հայտնի է ն հասարակությանն ու պրոֆեսիոնալներին¹⁴³:

Չգիտակցված կոմպետենտ (իմաստուն կառավարիչ) - Սակառավարչի այն տեսակն է, որը չի հայտնվում այնպիսի բարդ իրավիճակներում, որոնցից պետք է ելք որոնել: Շատ հաճախ այս կառավարիչները գիտեն օպտիմալ լուծումը, սակայն չեն կարող այն տրամաբանորեն բացատրել ուրիշներին: Երբեմն նրանք շատ կրթված չեն և առերևույթ շատ խելացի մարդու տպավորություն չեն թողնում: Բարդ իրավիճակները նրանց համար հաջող ելք են ունենում, կարծես խնդիրներն իրենք իրենց են լուծվում: Չնայած այն հանգամանքին, որ նրանցից շատերը բարձր օղակի կառավարիչներ են, սակայն նրանց բացառիկությունը հաճախ տեսանելի չէ հասարակության շերտերի համար¹⁴⁴:

Այս մակարդակների հիման վրա հեղինակը կառուցել է կոմպետենտության մոդել, որը հիմնվում է արևմտյան առաջատար երկրների կառավարիչների կոմպետենտության չափանիշների վրա:


Կառավարիչների կոմպետենտության համալիր մոդելը մշակելիս Պ. Տոլշովան հիմնվել է հետևյալ սկզբունքների վրա.

1. Ղեկավարի՝ կառավարման ցածր օղակներից դեպի ազելի բարձր օղակներ տեղափոխվելու և գույքընթաց՝ նրանից պահանջվում է համընդհանուր օրենքների ազելի լայն իրազեկություն և համամարդկային բարձր որակներ, քան ավանդական իրազեկությունն է, որը սովորեցնում են բիզնես-դպրոցներում:

¹⁴³ **Тушов П. Я.**, Необходимый уровень управленческой компетентности-обязательное условие успешного внедрения сложных изменений. VI Международной конференции «Развитие через качество - теория и практика». Тольятти. 2001, <http://www.ou-link.ru/publ/region/tol-2001doklad.html>.

¹⁴⁴ **А. С. Родиков**, Понятие об осознанной и неосознанной компетентности руководителя в европейских образовательных моделях. Известия Российского государственного педагогического университета им. А. И. Герцена, № 125, 2010, с. 217-226.

2. Կառավարման յուրաքանչյուր մակարդակում կարևոր է իրագրելության բաղադրիչների ներդաշնակ համամասնությունը:
3. Մոդելն արտացոլում է իրագրելության առանձին բաղադրիչների հարաբերակցության առավելապես որակական, քան քանակական գնահատականը



Նկար 3.4 Կառավարիչների իրագրելության համալիր մոդելը

Նկարից երևում է, որ կառավարչի իրագրելության մակարդակը պայմանավորված է այն բանով, թե որ օղակում է նագտնվում՝ բարձրագույնը, միջինը, թե ցածրը: Ցանկացած օղակի կառավարչի համար առանցքային բաղադրիչ է կոմպետենտությունը, որը որոշվում է արևմտյան առաջատար երկրների չափանիշներով: Ընդ որում, որքան բարձր օղակում է գտնվում մենեջերը, այնքան ավելի լայն և ամբողջական պետք է ներկայացվեն համընդհանուր օրենքների մասին նրա գիտելիքները, որոնք մասնագիտական կոմպետենտության անհրաժեշտ պայման են:

Վերոնշյալից հետևում է, որ կառավարչի գրադեցրած պաշտոնի մակարդակը պայմանավորված է նրա մասնագիտական գիտելիքների ընդգրկունությամբ և նրա մասնագիտական կոմպետենտության սահմաններով:

Ա. Վ. Ռաստյանսկիովը, ուսումնասիրելով կոմպետենտությանը ստեղծագործական ոլորտում, առանձնացրել է իրազեկության երկու տեսակ՝ սուբյեկտի՝ ստեղծագործական խնդիրներ լուծելու իրազեկությունը և սոցիալ-հոգեբանական իրազեկությունը, որոնք միջանձնային հարաբերությունների համակարգում շրջապատի մարդկանց հետ արդյունավետ փոխազդելու անհատի ընդունակությունն են: Սոցիալ-հոգեբանական իրազեկությունը բնութագրելիս հեղինակը մատնանշում է այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են սոցիալական իրավիճակներում կողմնորոշվելու, այլ մարդկանց անհատական առանձնահատկություններն ու հոլզական վիճակները ճիշտ որոշելու, մարդկանց հետ շփվելու համարժեք եղանակներ ընտրելու և փոխազդեցության ընթացքում այդ եղանակներն իրացնելու կարողությունները¹⁴⁵:

Ի. Ա. Չիմնայան, իր հոդվածներից մեկում քննարկելով կոմպետենտության խնդիրը կրթական համակարգում, այն մեկնաբանում է՝ հիմնվելով հոգեբանների ձևակերպած դրոլյթների վրա (Բ. Գ. Անանև, Վ. Ն. Մյասիշչև, Ն. Վ. Կոլզմիևա, Ա. Ա. Դերկաչ, Ա. Կ. Մարկովա): Նա առանձնացնում է կոմպետենտության հետևյալ տեսակները՝ անձի, կենսագործունեության սուբյեկտի հետ կապված կոմպետենտություններ, այլ անձանց

¹⁴⁵ **Растяников А. В.**, Рефлексивное развитие компетентности в совместном творчестве А. В. Растяников, С. Ю. Степанов, Д. В. Ушаков. М., ПЭРСЭ, 2002.

փոխազդեցության հետ կապված կոմպետենտություններ, ինչպես նաև մարդու գործունեության հետ առնչվող կոմպետենտություններ, որոնք դրսևորվում են դրա բոլոր տիպերում ու ձևերում ¹⁴⁶:

Այսպիսով, կոմպետենտության յոլերաքանչյուր խումբ ներառում է տեսակներ՝ դրանով իսկ ձևավորելով տասը հիմնական կոմպետենտությունները: Դրանք են՝

1. առողջությունն ապահպանման կոմպետենտությունը,
2. աշխարհում արժեքաիմաստային ուղղորդվածության կոմպետենտությունը,
3. ինտեգրման կոմպետենտությունը՝ գիտելիքների կառուցվածքայնություն, ձեռքբերված գիտելիքների ընդլայնում,
4. քաղաքացիության կոմպետենտությունը՝ քաղաքացու իրավունքների և պարտականությունների իմացությունն ու ապահպանում,
5. ինքնակատարելագործման, ինքնազարգացման, ինքնակարգավորման, անհատական և առարկայական ռեֆլեքսիայի կոմպետենտությունը՝ կյանքի իմաստը և մասնագիտական զարգացում,
6. սոցիալական փոխազդեցության կոմպետենտությունը,
7. հաղորդակցության կոմպետենտությունը,
8. ճանաչողական գործունեության կոմպետենտությունը՝ ճանաչողական խնդիրների առաջադրում ու լուծում, մտավոր գործունեություն,

¹⁴⁶ Зимняя И. А., Ключевые концепции – новая парадигма результата образования, Высшее образование сегодня, 2003, № 5, с. 34-42.

9. գործունեության կոմպետենտությունը՝
պլանավորում, նախագծում, մոդելավորում,
կանխատեսում, հետազոտական
գործունեություն,

10. տեղեկատվական տեխնոլոգիաների
կոմպետենտությունը:

Նշենք, որ առաջին հինգ հիմնական տեսակները վերաբերում են անձին՝ որպես անհատի գործունեության նշված սուբյեկտի: Վեցերորդն ու յոթերորդն առնչվում են մարդու սոցիալական փոխազդեցությանն ու սոցիալական լիորոտին, իսկ ութերորդից տասներորդը մարդու գործունեությանն առնչվող կոմպետենտություններն են: Այսպիսի նմանատիպ խմբավորում նկարագրված է նաև մի շարք հեղևակներով մոտ¹⁴⁷:

Փաստենք, որ Է. Ֆ. Չեբրև առանձնացնում է մասնագիտական կոմպետենտության հետևյալ բաղադրիչները՝ սոցիալ-իրավական, հատուկ, անհատական, առևտրային կոմպետենտություն¹⁴⁸:

Վերը նշվածից պարզ է, որ «մասնագիտական կոմպետենտություն» հասկացությունը մեկնաբանելիս անհրաժեշտ է որոշել դրահիմնական բաղադրիչները, որոնց հիման վրա էլ կատարվում է երևույթի դասակարգումը: Նման դասակարգմամբ զբաղվել են նաև արտասահմանյան շատ հեղինակներ, ինչը վկայում է մասնագիտական կոմպետենտության խնդրի ուսումնասիրության հրատապության և կարևորության մասին:

Այսպիսով, բազմաթիվ աղբյուրներով վերլուծությունից պարզվում է, որ մասնագիտական

¹⁴⁷ Зимняя И. А. Ключевые компетенции – новая парадигма результата современного образования/Интернет-журнал «Эйдос»/ <http://www.eidos.ru/journal/2006/0505.htm>; Хуторский А.В. Дидактическая эвристика. Теория и технология креативного обучения. – М.: Изд-во МГУ, 2003. –416с.

¹⁴⁸ Зеер Э. Ф., Психология профессий: Учебное пособие для студентов вузов. 2-е изд., перераб., доп., М., Академический Проект, Екатеринбург, Деловая книга, 2003, 336 с.

կոմպետենտությունը բաղկացած է մի քանի հատուկ կոմպետենտություններից, որոնք որոշում են մասնագիտական գործունեության կատարման հաջողությունը և մասնագետի անձի անքակտելի մասն են: Սակայն մասնագիտական կոմպետենցիաների բաղադրիչները միշտ էլ, որ կրթության արդյունք են. դրանք հաճախ անձնային հատկությունների և յուրացրած գիտելիքների համալիր ցուցիչներ են: Յետաքրքրական է կոմպետենցիաների մասնագիտական բնորոշումը. դրանք չեն կարող լինել ստանդարտ, քանի որ աշխատանքային գործունեության ընթացքում առավելագույն արդյունքի հասնելու միջոց են: Իսկ դրան հասնելու համար տարբեր մասնագետներ կիրառում են տարբեր կոմպետենցիաներ, որոնք չեն կարող նույնական լինել մաթեմատիկական ճշգրտությամբ: Թերևս այդ է պատճառը, որ տարբեր հեղինակներ մասնագիտական կոմպետենցիաների տարբեր բաղադրիչներ են առաջարկում: Այսուհանդերձ անհերքելի է, որ մասնագիտական կոմպետենցիաները պարունակում են անձնային մասնագիտական և սոցիալական բաղադրիչներ:

2.2. Հանրային ծառայողի մասնագիտական գործունեության ուսումնասիրման ակմեաբանական մոտեցումը

Հանրային ծառայողի մասնագիտական գործունեության ուսումնասիրությունը թույլ է տալիս անդրադառնալ մասնագիտական և անձնային լիարժեքության խնդրին: Մասնագիտական թերարժեքությունը բուրք բնագավառներում հանգեցնում է անարդյունավետ գործունեության: Պրոֆեսիոնալիզացիան հայեցակարգը մշակելիս ելակետ են հանդիսացել «պրոֆեսիոնալ», «անձի պրոֆեսիոնալիզմ», «անհատական-մասնագիտական զարգացում» հասկացությունները մասին ակմեոլոգիական պատկերացումները, անձի զարգացման դիտարկումը ակտիվության և սուբյեկտիվության տեսանկյունից, որոնք արտացոլում են անձի ինքնակազմակերպման ձգտումը, ինչը թույլ է տալիս գերակա նախասկզբի դեր խաղալ սեփական ակտիվության և զարգացման գործում, լուծել հնարավորություններ և առկա պահանջմունքներ իմիջև գոյություն ունեցող հակասությունները¹⁴⁹:

Անձի բարձր պրոֆեսիոնալիզմը պայմանավորված է ոչ միայն նրա ընդունակությունների զարգացմամբ, այլև տվյալ գործունեության ոլորտում ունեցած հարուստ գիտելիքների առկայությամբ: Իհարկե, բարձր պրոֆեսիոնալիզմը միշտ ուղեկցվում է ուժեղ և կայուն մոտիվացիոն, հոգևոր և լիցքերով՝ տվյալ գործունեությունն իրականացնելու և դրանում յուրօրինակ

¹⁴⁹ Акмеология: Учебное пособие. А. Деркач, В. Зызыкин. СПб., Питер, 2003, 125 с., с.54

արդյունքի հասնելու համար: Բարձր պրոֆեսիոնալիզմը ենթադրում է հատուկ կարողությունների զարգացում, որին հասնելու կարևոր պայման է ընդհանուր կարողությունների և համամարդկային արժեքների զարգացումը:

Մասնագիտական պրոֆեսիոնալիզմի զարգացման և դրա տարբեր տեսակների հետազոտությունները ակմեաբանության մեջ ուրույն տեղ են զբաղեցնում, քանի որ մասնագիտական կոմպետենտությունն անձի պրոֆեսիոնալիզմի և գործունեության գլխավոր բաղադրիչն է, ինչպես նաև մասնագետի կայացման և ինքնադրսևորման կարևորագույն պայման: Անձի հասունության աստիճանը և, այսպես կոչված, հասունության գագաթնակետը (ակմե) անձի բազմակողմանիորեն զարգացած լինելն է¹⁵⁰: Չնայած ժամանակային առումով այն ընդգրկում է մարդու կյանքի տևողության զգալի մասը և ցույց է տալիս, թե որքանով է նա կայացել որպես բաղաբացի, որպես մասնագետ համապատասխան գործունեության ոլորտում, որպես ծնող և որպես ամուսին/կին: Հասունության գագաթնակետը կայուն կրթության հետևանք է, ընդհակառակը՝ նրան բնորոշ է փոփոխականությունը:

Անձի ֆիզիկական բաղադրիչը, որպես կանոն, ներառում է անձի ֆիզիկական առողջության հատկանիշները և ենթարկվում է համապատասխան վերափոխման՝ հասունության չափանիշներին գուցա հենց: Վերափոխումն իր կոնկրետ բովանդակությամբ և ձևով մարդու մեջ առաջանում է հասունության այն փուլում, երբ մարդն իրեն դրսևորում է որպես անձ, որպես գործունեության սուբյեկտ, որպես ամուսին/կին և որպես ծնող:

¹⁵⁰ Акмеология: Учебное пособие. А. Деркач, В. Зазыкин. СПб., Питер, 2003, 125 с.

Արդի ժամանակաշրջանի տեսաբաններ Վ. Պ. Բրանսկու, Վ. Վ. Իլյինի, Ս. Դ. Պոժարսկու և Ա. Ա. Դերկաչի ակմեոլոգիական հետազոտություններում հիմնավորված են ակմեոլոգիայի պատմափիլիսոփայական հիմքերը: Ակմեոլոգիան սերտորեն կապված է մշակութաբանության, փիլիսոփայական մարդաբանության և գիտության այլ ոլորտների հետ: Այն որպես գիտություն չի սահմանափակվում միայն հոգեբանական հիմքերով, այլ անձի զարգացումը դիտարկում է անձին վերաբերող գիտությունների համադրությամբ: Օրինակ՝ Վ. Պ. Բրանսկին և Ս. Դ. Պոժարսկին ակմեոլոգիան դիտարկում են սոցիալական սիներգետիկայի պրիզմայով: Գիտելիքների նստեգրման շնորհիվ այդ գիտական ուղղությունների համատեքստում ձևավորվեց նոր բնագավառ՝ սիներգետիկ ակմեոլոգիան՝ որպես «ցանկացած սոցիալական համակարգի (մասնավորապես՝ առանձին մարդու կողմից) ինքնակազմակերպման միջոցով առավել կատարելագործման հասնելու» օրինաչափությունների մասին գիտություն¹⁵¹:

Ակմեաբանները պնդում են, որ ինքնակազմակերպման տեսության տեսանկյունից մարդը դիտվում է որպես ցրված կառույց, որը գոյություն ունի շրջակա միջավայրի հետևյալով, էներգիայի և տեղեկության անընդհատ փոխանակման հաշվին: Ցանկացած ցրված կառույցի նպատակը հնարավորինս առավելագույն կայուն վիճակի հասնելն է միջավայրի այն պայմանների համատեքստում, որոնցում այն գտնվում է: Ինչպես տեսնում ենք, ինքնակազմակերպումը «ակմե»-ի ճանապարհին բազմափուլ գործընթաց է: Ընդհանուր

¹⁵¹ Акмеология: Учебник, Под общ. ред. А. А. Деркача, М., Изд-во РАГС, 2002, 650 с.

ուղղորդիչ ներքին համակարգ, սկսվում է
ինքնահիտացման գործընթացը, որը կարծես
միջանկյալ օղակ է սոցիալական փորձի ձեռքբերման
և փոխանցման միջև: Յետաքրքրական է այն փաստը, որ
ինքնահիտացումը դառնում է անհնարին, եթե
բացակայում է կենսափորձը:

Ինքնահիտացումը նույնպես երկբաղադրիչ է և
ներառում է ինքնարտահայտման ու
ինքնահաստատման փուլերը: Ինքնարտահայտումը
հաջորդական շարժումն է դեպի մասնագիտական
վարպետության գագաթ: Այդ փուլում մարդը
դրսևորվում է որպես իր համար կարևոր արժեքներ
ստեղծող: Ինքնահաստատման փուլում մարդու
գործունեության արդյունքներն արժանանում են
սոցիումի գնահատականին (թե արդյոք կարևոր են
այդ արդյունքները հասարակության համար)¹⁵³: Ըստ
այդ գնահատականի՝ անձն ինքն է գնահատում իրեն:
Իդեալականն այն է, երբ առավելագույն
ինքնարտահայտումը (պրոֆեսիոնալ ալմե)
համապատասխանում է առավելագույն
ինքնահաստատմանը (սոցիալական ալմե):
Ենթադրվում է, որ բարձր պրոֆեսիոնալ իզմը պետք է
ըստ արժանվույն գնահատվի, սակայն այդ
գնահատականը երկու կողմ ունի. ինչպես է
գնահատում իրեն պրոֆեսիոնալը, և ինչպես են նրան
գնահատում ուրիշները: Այս երկու
գնահատականների անհամապատասխանությունը
հանգեցնում է զարգացման խոչընդոտների: Այս
տեսանկյունից դիտարկելով հանրային
ծառայողներին գործունեությունը՝ հանդիպում
ենք որոշակի բարդությունների, քանի որ
հանրային ծառայությունը գործունեության

¹⁵³ Акмеология: Учебник, Под общ. ред. А. А. Деркача, М., Изд-во РАГС, 2002, 650 с.
Акмеология: Учебное пособие. А. Деркач, В. Зазыкин. СПб.: Питер, 2003, 256 с.

ոլորտէ, որը մշտապես գտնվում է հասարակության գնահատման տիրույթում:

Այսպիսով, ակմեոլոգիայի շրջանակներում սինթետիկ մոտեցման կիրառումը հանրային ծառայողների նկատմամբ հնարավորություն է տալիս պատասխանելու հետևյալ հարցերին. ինչպե՞ս է տեղի ունենում հանրային ծառայողի ինքնակազմակերպումը, ինչպիսի՞ մեխանիզմով է այն ընթանում, և ինչպե՞ս հասնել ճանաչման գագաթնակետին: Դա իր հերթին թույլ է տալիս կառուցել հանրային ծառայողի ինքնակազմակերպման և կենսական ուղու իդեալական մոդել, որի խոհեմ իրացումը հանգեցնում է հաջողության¹⁵⁴:

Կառավարման համակարգում կադրերի պատրաստման հարցերը լուսաբանվում են նաև ակմեոլոգիական տեսանկյունից, ինչն էլ կառավարման ակմեոլոգիական ուղղության զարգացման հիմք է հանդիսացել: Այս ուղղությամբ կառավարման հոգեբանությունում կատարվել են գիտական, այդ թվում՝ ակմեոլոգիական հետազոտություններ, սակայն դրանք կոնկրետ կիրառական, ոչ թե ընդհանրացնող բնույթ ունեն: Կառավարման ակմեոլոգիան վերջերս է մտել հոգեբանական հետազոտությունների դաշտ, սակայն արագորեն զարգանում է, քանի որ ժամանակակից հասարակությունն ամեն կերպ փորձում է հասկանալ կառավարման հոգեբանական կողմերը և դրանում անձի զարգացման օրինաչափություններն ու խնդիրները:

Մշակվող կառավարման ակմեոլոգիան՝ որպես կիրառական ակմեոլոգիայի ուղղություն, ունի այնպիսի գիտական հիմքեր, ինչպիսիք են ընդհանուր ակմեոլոգիան, կառավարման

¹⁵⁴ **Анисимов О.С.**, Основы общей и управленческой акмеологии. Учебное пособие, М., РАГС, 1995, 264 с.

հոգեբանությունը, մենեջմենթի տեսությունը: Եվ չնայած կառավարման հոգեբանության և մենեջմենթի տեսության շրջանակներում չեն դիտարկվել ղեկավարների ու կառավարչական կադրերի պրոֆեսիոնալիզմի խնդիրները և նրանց անձի զարգացման հնարավորությունները՝ որպես կառավարման սուբյեկտի, սակայն բավական հետաքրքիր և արդյունավետ հետազոտություններ են կատարվել արդյունավետ կառավարման հոգեբանական առանձնահատկությունների բացահայտման ուղղությամբ:

Ներկայումս կառավարման ակմեոլոգիան գիտելիքների մի այնպիսի բնագավառ է, որի շնորհիվ կառավարչական գործունեության մեջ հնարավոր է հասնել պրոֆեսիոնալիզմի բարձրագույն մակարդակի¹⁵⁵: Այդ պատճառով էլ կառավարման ակմեոլոգիայում առանցքային խնդիր է ղեկավարի՝ որպես կառավարչական գործունեության սուբյեկտի (անձի կամ գործունեության) պրոֆեսիոնալիզմը:

Կառավարչական գործունեությունը մասնագիտական գործունեության տեսակների բազմազանության մեջ իր բովանդակությամբ ամենաբարդերից մեկն է: Այն կառավարչական գործունեության սուբյեկտից պահանջում է տարբեր ընդունակությունների առկայություն, հատուկ որակների և կարողությունների բարձր մակարդակ, որոնք ինտեգրված են բարդ համակարգային մակարդակում: Այս առումով կառավարչական ակմեոլոգիայի օբյեկտն ինքնին բավական բարդ է: Կառավարչական կադրերը, որոնց նպատակը անհատական-մասնագիտական զարգացման, պրոֆեսիոնալիզմի բարձր մակարդակի հասնելն է,

¹⁵⁵ Держач А. А., Зазыкин В. Г., Маркова А. К., Психология развития профессионала: Учебное пособие, М., Издательство РАГС, 2000, 124 с.

սովորաբար իրենց պլաններն իրականացնում են մասնագիտական կարիերայի ընթացքում: Իսկ այն տարբեր հետազոտեր ունի, այդ թվում՝ այնպիսիք, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ վարքի և հարաբերությունների կարգավորման համար ընտրված մասնագիտական ստանդարտների և բարոյահոգեբանական համակարգի վրա:

Կառավարչական ակմեոլոգիայում կառավարչական աշխատանքի սուբյեկտների պրոֆեսիոնալիզմը բացահայտվում է տարբեր տեսանկյուններից: Դրանցից մեկը կառավարիչ-պրոֆեսիոնալի «Ես» կոնցեպցիայի ձևավորումն է, որն արդյունավետ գործունեություն ծավալելու հնարավորություն կտա: Հաջորդը նրա ստեղծագործական ներուժի իրացումն է հատկապես կառավարչական որոշումներ ընդունելու ժամանակ: Այնուհետև՝ բարձր արդյունավետություն ունեցող կառավարչական գործունեության հոգեբանական պատրաստականության ձևավորումը, այդ թվում՝ նաև ծայրահեղ ճգնաժամային իրավիճակներում: Կարևոր է նաև ակմեոլոգիական իրազեկությունը կառավարչական թիմ ձևավորելու և կադրային աշխատանք վարելու ժամանակ¹⁵⁶:

Անհրաժեշտ է կառավարչական գործունեության մեջ ձևավորել ոչ միայն մասնագիտական ձեռքբերումներին մոտիվացիա, այլ նաև կառավարման ոճակագրական բնութագրերի, արտակարգ իրավիճակներում կառավարման ժամանակ գործառական հնարավորությունների պահուստների համակարգ¹⁵⁷: Հատուկ ուշադրություն է արժանանում կառավարչի անհատական-գործնական և մասնագիտական կարևոր որակների զարգացումը,

¹⁵⁶ Акмеология: Учебник, Под общ. ред. А. А. Деркача, М., Изд-во РАГС, 2004, 299 с.

¹⁵⁷ Акмеология: Учебное пособие. А. Деркач, В. Зазыкин. СПб., Питер, 2003, 256 с.

հատկապես նրա ինքնարդյունավետությունը և պատասխանատվությունը: Արդի ժամանակներում հիմնավորապես ձևավորվել է կառավարչական գործունեության սուբյեկտների պրոֆեսիոնալիզմի զարգացման ակմեոլոգիական կառուցակարգը:

Չարկ է նշել, որ այդ ամենով հանդերձ՝ կառավարչական ակմեոլոգիան բավական դժվարություններ է հանդիպում: Դրանցից մեկը ակմեոլոգներին միակարծության բացակայությունն է կառավարչական գործունեության ոլորտում պրոֆեսիոնալիզմի անձնավորված չափանիշների վերաբերյալ: Կառավարչական ակմեոլոգիայի շրջանակներում վերջին տարիներին իրականացվում են բավական արդյունավետ և կառուցվածքային հետազոտություններ հանրային ծառայողների մասնագիտական գործունեության համակարգային խնդիրների վերաբերյալ, քանի որ բազմաթիվ հանրային ծառայողներ իրականացնում են կառավարչական համալիր գործունեություն, որը կարելի է համարել կիրառական ակմեոլոգիայի այս ուղղության հատուկ ոլորտ:

Գիտություններն այս արդյունավետ համակցումը թույլ է տալիս ևս արձանագրել.

1. պետական ծառայության կադրերի մասնագիտական նախապատրաստումը (ներառյալ ուսումը, գործնականությունը և հոգեբանական նախապատրաստվածությունը, բարձր արդյունավետությունամբ գործունեությունը).
2. հոգեբանական ակմեոլոգիական ախտորոշումը, որը որոշում է պետական ծառայողների ընտրած մասնագիտություն, անձի մասնագիտական տիպի և զարգացման ուղեգծի համապատասխանությունը

(ըստ արժեքային, մոտիվացիոն և այլ տվյալների ամբողջականության) .

3. մասնագիտության մեջ արդյունավետ ուղղորդվածության աջակցությունը և զարգացումը (մասնագիտական որակավորում) .
4. պետական ծառայողի մասնագիտական գործունեության արդյունավետ կազմակերպման մոդելների և ալգորիթմների մշակումը նրատարբերտիպերի, մակարդակների, փուլերի համար .
5. հոգեբանական ակմեոլոգիական աջակցության իրականացումը (վարժանք, խորհրդատվություն և այլն) պետական ծառայողների մասնագիտական գործունեության ընթացքում .
6. այս մասնագիտական գործունեության ուղղությունների ամբողջական մշակումը հոգեբանական-մասնագիտական տիպական և ստեղծագործական խնդիրների կարգեր ստեղծելու համար .
7. պետական ծառայողի «ես» կոնցեպցիայի արժեքային-անհատական դիմագծի ուղղություն մշակումը .
8. պետական ծառայողների մասնագիտական կարիերայի անհատական ուղեգծերի մշակումը .
9. պետական ծառայողների անհատական-մասնագիտական զարգացմանը միտված ծրագրերի և ակմեոլոգիական մշակումը ¹⁵⁸: Այսպիսով, կառավարչական ակմեոլոգիայի շրջանակներում ստեղծվել է հասկացությունների համակարգ, որը թույլ է տալիս միավորել պրոֆեսիոնալիզմի և սոցիալական համակարգերի կազմակերպման ու օպտիմալացման խնդիրները, իսկ վարպետության և պրոֆեսիոնալիզմի անձնային

¹⁵⁸ Акмеология: Учебное пособие. А. Деркач, В. Зазыкин. СПб., Питер, 2003, 125 с., с.70

դ Ե տ Ե ր մ ի ն ան տ ն Ե ր ը , Բ ն ո Լ թ ա գ ր ի չ ն Ե ր ը
մ ի ա վ ո ր Ե Լ ար ժ Ե ք ա յ ի ն հ ո գ Ե ք ա ն ա կ ա ն
ո Լ ղ ղ ո ր դ ի չ ն Ե ր ի հ Ե տ , ո ր ո ն ք ք ար Ե Լ ա վ ո Լ մ Ե ն
գ ո ր ծ ո Լ ն Ե ո Լ թ յ ո Լ ն ը : Ա յ ս ամ Ե ն ը
հ ն ար ա վ ո ր ո Լ թ յ ո Լ ն կ ը ն ձ Ե ո ն ի ն ա ն կ ա պ Ե ր
հ ա ս տ ա տ Ե Լ ո Լ ա կ մ Ե ո Լ ո գ ի ա կ ա ն , հ ո գ Ե ք ա ն ա կ ա ն ,
մ ա ն կ ա վ ար ժ ա կ ա ն , ս ո ց ի ա Լ ա կ ա ն , մ ա ս ն ա գ ի տ ա կ ա ն -
կ ա դ ր ա յ ի ն խ ն դ ի ր ն Ե ր ի և գ ո ր ծ ո Լ ն Ե ո Լ թ յ ա ն
ար դ յ ո Լ ն ա վ Ե տ կ ա գ մ ա կ Ե ր պ մ ա ն , ա Լ գ ո ր ի թ մ Ե ր ի
մ ի ջ և ¹⁵⁹:

Ա կ մ Ե ո Լ ո գ ն Ե ր ը , ո ր ո ն ք մ ա ս ն ա գ ի տ ա ն ո Լ մ Ե ն
կ ա ռ ա վ ար չ ա կ ա ն ա կ մ Ե ո Լ ո գ ի ա յ ի ո Լ ղ ղ ո Լ թ յ ամ ք ,
ն Ե ր գ ր ա վ վ ա ծ հ ո գ Ե ք ա ն ն Ե ր ի , ք ժ ի շ կ ն Ե ր ի ,
մ ա ն կ ա վ ար ժ ն Ե ր ի , ս ո ց ի ո Լ ո գ ն Ե ր ի և ա յ Լ
մ ա ս ն ա գ Ե տ ն Ե ր ի հ Ե տ ա ռ ա ն ձ ն ա ց ր Ե Լ Ե ն ա յ ն պ ի ս ի
տ Ե ս ա կ ա ն -օ պ Ե ր ա ց ի ո ն տ ար ք Ե ր ա կ ն Ե ր , ո ր ո ն ք
ա կ մ Ե ո Լ ո գ ի ա կ ա ն գ ի տ ո Լ թ յ ա ն և ն ր ա կ ի ր ա ռ ա կ ա ն
ո Լ ղ ղ ո Լ թ յ ո Լ ն ն Ե ր ի հ ի մ ք ն Ե ն և թ ո Լ յ Լ Ե ն տ ա Լ ի ս
Լ ո Լ ծ Ե Լ գ ի տ ա գ ո ր ծ ն ա կ ա ն ա յ ն պ ի ս ի խ ն դ ի ր ն Ե ր , ո ր ո ն ք
կ ա պ վ ա ծ Ե ն պ Ե տ ա կ ա ն ծ ա ռ ա յ ո ղ ն Ե ր ի մ ա ս ն ա գ ի տ ա կ ա ն
կ ա յ ա ց մ ա ն , մ ա ս ն ա գ ի տ ա կ ա ն գ ո ր ծ ո Լ ն Ե ո Լ թ յ ա ն
օ պ տ ի մ ա Լ ա ց մ ա ն և պ ր ո Ֆ Ե ս ի ո ն ա Լ ի գ մ ի ք ար ձ ր ա ց մ ա ն
հ Ե տ :

Ժ ա մ ա ն ա կ ա կ ի ց գ ի տ ո Լ թ յ ա ն մ Ե ջ ար դ Ե ն մ շ ա կ վ Ե Լ Ե
ա կ մ Ե ո Լ ո գ ի ա կ ա ն , հ ո գ Ե ք ա ն ա կ ա ն մ Ե թ ո դ ն Ե ր ի
հ ա մ ա Լ ի ր ` պ Ե տ ա կ ա ն ծ ա ռ ա յ ո ղ ն Ե ր ի ա ն ձ ի
մ ա ս ն ա գ ի տ ա կ ա ն կ ար և ո ր ո ր ա կ ն Ե ր ը հ ա յ տ ն ա ք Ե ր Ե Լ ո Լ ,
ձ և ա վ ո ր Ե Լ ո Լ և շ տ կ Ե Լ ո Լ հ ա մ ար : Յ ա յ տ ն ի և
յ ո Լ ր ա հ ա տ ո Լ կ մ Ե թ ո դ ն Ե ր ի հ ա մ ա դ ր ո Լ թ յ ամ ք
ս տ ա ց վ Ե Լ Ե ն գ ի տ ա կ ա ն ն ո ր Ե գ ր ա հ ա ն գ ո Լ մ ն Ե ր , ո ր ո ն ք
ը ն դ Լ ա յ ն ո Լ մ Ե ն պ Ե տ ա կ ա ն ծ ա ռ ա յ ո ղ ն Ե ր ի ո Լ ս ո Լ ց մ ա ն
օ ր ի ն ա չ ա փ ո Լ թ յ ո Լ ն ն Ե ր ի և հ ո գ Ե ք ա ն ա կ ա ն ո Լ
ա կ մ Ե ո Լ ո գ ի ա կ ա ն ն ո ր մ ա տ ի վ ն Ե ր ի մ ա ս ի ն
պ ա տ կ Ե ր ա ց ո Լ մ ն Ե ր ը , ց ո Լ յ ց Ե ն տ ա Լ ի ս պ Ե տ ա կ ա ն

¹⁵⁹ Акмеология: Учебное пособие. А. Деркач, В. Зазыкин. СПб., Питер, 2003, 125 с., с.71

ծառայողներին մասնագիտական ուսուցման, նախապատրաստման և կայացման ակմեոլոգիական հայեցակարգի հեռանկարայնությամբ ու իրավաչափությամբ:

Այս համալիր մեթոդներին կիրառումը թույլ է տալիս իրականացնել մասնագիտական և անձնային որակներին հոգեբանական ակմեոլոգիական ընտրությամբ, ձևավորել կառավարչական թիմ, մշակել հանրային ծառայողներին միջանձնային հարաբերությամբ կարգավորմանը միտված հոգեբանական մեխանիզմներ, ձևավորել հանրային ծառայողներին իմիջը, ինչպես նաև մշակել հանրային ծառայողներին անձնային-մասնագիտական զարգացման հեռանկարները:

Այս ամենից զատ՝ հանրային ծառայողներին հոգեբանական խնդիրներին լուծման ժամանակ իրականացվում է նաև հոգեբանական աջակցությամբ՝ նրանց անձնային-մասնագիտական առաջընթացն արագացնելու նպատակով: Որոշվել են պետական ծառայողներին տարբեր կատեգորիաների պրոֆեսիոնալիզմի ակմեոլոգիական մոդելները, բացահայտվել են հատուկ ակմեոլոգիական ինվարիանտները, ստեղծվել են մասնագիտական կարևոր հատկանիշների զարգացման ակմեոլոգիական տեխնոլոգիաներ: Մշակվել են պետական ծառայողների համակարգում ակմեոլոգիական ծառայողական գիտական հիմունքներն ու հայեցակարգը:

Ակմեոլոգիայի առանցքային խնդիր են դարձել սուբյեկտի՝ աշխատանքից մինչև պրոֆեսիոնալ մակարդակի զարգացման օրինաչափությամբ, մեխանիզմներին և գործունեության որոնումն ու բնութագրումը¹⁶⁰: Ակմեոլոգիական այդ գործնական խնդիրներից է ակմեոլոգիական պայմանների և

¹⁶⁰ Акмеология: Учебник, Под общ. ред. А. А. Деркача, М., Изд-во РАГС, 2002, 650 с.

գործունեների առաջնային վերլուծությունը, ինչը նպաստում է անհատական-մասնագիտական զարգացմանը: Կանխատեսվում են (ակմեոլոգիական) պրոֆեսիոնալիզմի մակարդակի զարգացման հնարավորությունները և հեռանկարները: Մշակվում են ակմեոլոգիական նկարագրությունները ընդհանուր և հատուկ ակմեոլոգիական գիտելիքների և անհատական ակմեոգրամաների մակարդակում, ինչպես նաև անձնային անհատական-մասնագիտական զարգացման, այդ թվում նաև մասնագիտական կարիերայի ծրագրերը, որոնց իրականացման համար ընտրվում են համապատասխան մեթոդներ և ակմեոլոգիական տեխնոլոգիաներ ¹⁶¹:

Ինչպես երևում է, ակմեոլոգիական խնդիրները խմբավորված են այնպես, որ դրանց ամբողջությունն իրենից ներկայացնում է անհատական-մասնագիտական զարգացման նպատակառնչված ալգորիթմ: Դրա հաջորդական իրականացումը պրոֆեսիոնալիզմի անհրաժեշտ հիմք կստեղծի: Սակայն այս ալգորիթմը կարող է հաջողությունների անցվել միայն այն դեպքում, երբ առկա ինչպես պրոֆեսիոնալիզմի որոշակի չափորոշիչային մոդելներ, որոնք ուղղորդիչ կամ համակարգաստեղծ դեր կխաղան անհատական-մասնագիտական զարգացման գործում ¹⁶²: Այդ պատճառով էլ ցանկացած ակմեոլոգիական հետազոտության և գործնական աշխատանքի կարևոր բաղադրիչը պրոֆեսիոնալիզմի կամ պրոֆեսիոնալիզմի զարգացման հայեցակարգերի մշակումն է՝ որպես միասնական, փաստարկված այնպիսի տեսակետերի համակարգ, որոնք հաստատվել են փորձարարական հետազոտություններով և պրակտիկայով: Ինչպես արդեն նշվել է,

¹⁶¹ Акмеология: Учебное пособие. А. Деркач, В. Зазыкин. СПб., Питер, 2003, 256 с.
¹⁶² Акмеология: Учебник, Под общ. ред. А. А. Деркача, М., Изд-во РАГС, 2002, 650 с.

ակմեոլոգիական բազմաթիվ ընդհանրացնող հետազոտություններ առաջին հերթին տարբերվում են իրենց հայեցակարգային բնույթով, ինչը թույլ տվեց կարճ ժամանակում մշակել ակմեոլոգիայի տեսական-մեթոդաբանական հիմունքները: Ասվածի պատկերավոր օրինակ է մասնագետների գործունեության պրոֆեսիոնալիզմի հոգեբանական ակմեոլոգիական հայեցակարգի հակիրճ շարադրանքը արտակարգ իրավիճակներում:

Այս հայեցակարգը ձևավորվել է հատուկ և արտակարգ պայմաններում իրականացվող գործունեության հոգեբանական էություն վերլուծության արդյունքում: Այդ պայմանները տարբեր արտակարգ գործունեության պատճառով աշխատանքի սուբյեկտների մեջ առաջացնում են բացասական գործառական վիճակներ, որոնք խախտում են գործունեության կարգը և նվազեցնում դրա արդյունավետությունը և հուսալիությունը: Առաջին հայացքից թվում է, թե ստեղծված իրավիճակից էլ քչ արտակարգ գործունեության արտաքին կարգավորումն ու մասնագիտական ընտրություններ: Սակայն բազմաթիվ արտակարգ գործունեության օբյեկտիվ բնույթի են և ուղղակի վերահսկման չեն ենթարկվում, իսկ մասնագիտական ընտրությունը սահմանափակ արդյունքներ է տալիս: Խնդրի ակմեոլոգիական վերլուծությունը թույլ է տվել առաջարկել կառուցողական էլք, որը աշխատանքի սուբյեկտի մեջ փոխհատուցող տիպի գործառական պահուստային հնարավորությունների (նախևառաջ՝ մտավոր, գործնական և հուզակամային) ձևավորումն է. հնարավորություններ, որոնք դրսևորվում են մասնագիտորեն կարևոր տարբեր համընդհանուր և նպատակաուղղված որակների ու հմտությունների տեսքով: Այս պահուստային հնարավորություններն ի հայտ են գալիս արտակարգ գործունեության

գործողությունն սկզբից՝ որպես դրանց փոխհատուցում, թեև միևնույն ժամանակ բարդացնում են գործունեությունը: Սակայն դրանց զարգացածությունը բարձր մակարդակը հիմնական գործունեությանը թույլ է տալիս ընթացքում անփոփոխ մնալ՝ որակի և հոսսալիություն կայուն բարձր ցուցանիշներով շնորհիվ: Ակմենոլոգիայում այսպես է ձևակերպվել ընթացքում անփոփոխ մնալու սկզբունքը, որը պրոֆեսիոնալիզմի տեսությունում հիմնարար սկզբունքներից մեկն է ¹⁶³: Պրոֆեսիոնալիզմի ընդհանուր և հատուկ ակմենոլոգիական ինվարիանտները հիմնավորվում են այս սկզբունքի վրա:

Ակմենոլոգիայում մշակվել են անձի բարոյական և հոգևոր զարգացման, մտածողության կոլլտուրայի, մասնագիտական ստեղծագործության, նպատակային ուղղվածության, տեխնոլոգիական զարգացման, պետական ծառայողների մասնագիտական կայացման, անձի ռեֆլեքսիվ մշակույթի զարգացման, անձի հոգեբանական անվտանգության և այլ հայեցակարգեր: Դրանցից մի քանիսի հիման վրա են ձևավորվել ակմենոլոգիայի կիրառական ուղղությունները:

Ակմենոլոգիայի և նրան մերձ այլ գիտություններում, որոնց հետաքրքրում է պրոֆեսիոնալիզմի խնդիրը, ներկայումս, ինչպես բազմիցս ընդգծել ենք, գերակայում են մասնագիտական վարպետության վերաբերյալ հետազոտությունները: Կառավարման

հոգեբանությունում մեջ, հատկապես Յայաստանում զգալիորեն քիչ են անձի պրոֆեսիոնալիզմին և մասնագիտական հմտություններին վերաբերող աշխատությունները: Չափազանց քիչ են նաև արհեստավարժ աշխատանքի սուբյեկտի զարգացման

¹⁶³ Акмеология: Учебное пособие. А. Деркач, В. Зазыкин. СПб., Питер, 2003, 256 с.

նւսումնասիրութեանն առնչվող
աշխատութեանն ներքո: Այլ կերպ ասած՝ գերակայում
են խնդրին վերաբերող աշխատութեանն ներքո
հետազոտութեանն ներքո, որոնցում բացակայում է
անձի և գործունեութեան միասնականութեան
մեթոդաբանական սկզբունքը, որի կարևորութեանը
բազմիցս նշվել է մասնագիտական գրականութեան
մեջ: Ակմեոլոգիական հետազոտութեանն ներքում
կարելի է հանդիպել «անձնագործունեական»
ուղղութեան տեսական հիմունքների կարևոր
բաղադրիչի՝ անհատի զարգացման ուսումնասիրման
օրինակների: Հասուն անհատի առաջընթաց
զարգացմանն առնչվող հետազոտութեանն ներքում
քննարկված ընդհանուր խնդիրների մեջ հատուկ տեղ
ունի բուն անհատական-մասնագիտական զարգացման
խնդիրը ընդհուպ մինչև պրոֆեսիոնալիզմի
մակարդակը: Բացի այդ, անձը զարգանում է
գործունեութեան մեջ, իսկ գործունեութեան
տեսակների մեծ մասը մասնագիտական է: Կայուն կապ
է հայտնաբերվել անհատական և մասնագիտական
զարգացման միջև. մի կողմից աշխատանքի
սուբյեկտի՝ անձի առանձնահատկութեանն ներքո
զգալի ազդեցութեանն ունենում մասնագիտական
գործունեութեան ընթացքի և արդյունքների վրա,
մյուս կողմից՝ անձի զարգացումն ինքնին տեղի է
ունենում մասնագիտական գործունեութեան
առանձնահատկութեանն ներքո ազդեցությամբ:
Գիտութեան մեջ առկա բազմաթիվ փաստեր վկայում
են, որ աշխատանքի սուբյեկտի կողմից
իրականացվող մասնագիտական գործունեութեանը
անառարկելիորեն հանգեցնում է նրա անհատական
հատկանիշների և որակների նմանութեան, ազդում է
անձի հարաբերութեանն ներքո համակարգի, նրա
դիրքորոշումների, հետաքրքրութեանն ներքո,
վարքի կարգավորման նորմերի և նրա կենսակերպի վրա:

Նման մոտեցումներն հիման վրա ձևավորվեց «անձի մասնագիտական տիպ» հասկացությունը, ինչն էլ թույլ տվեց պրոֆեսիոնալիզացիայի զարգացման ակմեոլոգիական հայեցակարգը դիտարկել «անձի մասնագիտական տիպ» հոգեբանական երևույթի առարկայական դաշտում¹⁶⁴: Նշված հանգամանքները բացատրում են պրոֆեսիոնալ մակարդակի աշխատանքի սուբյեկտի ձևավորման և զարգացման խնդիրը:

Հարկ է նշել, որ անձի փոխադարձ կապը մասնագիտական գործունեության հետ նախկինում ուսումնասիրվել է գործունեությանը անձի հարմարվողականության, նրա մասնագիտական պիտանելիության, մասնագիտական շահադրժման և աշխատանքից բավարարված լինելու տեսանկյունից, հանգամանքներ, որոնցով պայմանավորված էր աշխատանքի արդյունավետությունը: Սակայն փորձը ցույց է տալիս, որ մասնագիտական զարգացումը պարտադիր կերպով ուղեկցվում է մասնագիտական ապակառուցողական գործունեությամբ (դեստրուկցիաներ), որոնք բացասական ազդեցություն են ունենում զարգացմանը նթացքի և անձի պրոֆիլի վրա, ինչը հանգեցնում է մարդու կարիերայի փոփոխության: Այս առումով Վ.Ե.Օրելը, վերլուծելով բազմաթիվ հոգեբանների հետազոտությունները, նշում է, որ հայտնաբերվել է շփմանն առնչվող մասնագիտական սթրեսի յուրահատուկ տեսակ, որի համադրությունն այլ մասնագիտական սթրեսների հետ հանգեցնում է, այսպես կոչված, «հուզական այրման» երևույթի առաջացմանը¹⁶⁵:

¹⁶⁴ Акмеология: Учебное пособие. А. Деркач, В. Зазыкин. СПб., Питер, 2003, 256 с.

Акмеология: Учебник, Под общ. ред. А. А. Деркача, М., Изд-во РАГС, 2002, 650 с.

Анисимов О. С., Деркач А. А., Основы общей и управленческой акмеологии. М., РАГС, 1995, 272с.

¹⁶⁵ **Орёл В. Е.**, Феномен «психического выгорания»: теория, проблемы, диагностика, Структурно-функциональная организация и генезис психического выгорания: Автореф. ... д-ра пс.н., В. Е. Орел, Ярославль, 2005, 51 с.

Ժամանակակից դեկավարներին և կառավարչական կադրերին գործունեության մեջ շատ հակասություններ կան, որոնք զգալիորեն բարդացնում են նրանց գործունեությունը՝ նվազեցնելով դրա արդյունավետությունը: Առաջին հերթին պետք է նշել ժամանակակից հասարակության պահանջներին և կառավարչական կադրերի մասնագիտական զարգացման մակարդակի միջև առկա անջրպետը: Հասարակության պահանջները հաճախ գտնվում են կառավարչական գործունեության սուբյեկտների հնարավորությունների սահմանին կամ գերազանցում են դրանք: Մեծ են ժամանակակից դեկավարի մտավոր, հոլգական և կամային որակների նկատմամբ պահանջները, ինչը հանգեցնում է բացասական հոգեկան վիճակների առաջացման, լարվածության, նվազեցնում է աշխատունակությունը և գործունեության արդյունավետությունը: Այդ վիճակների առաջացումը պայմանավորված է մի շարք փոխկապակցված գործոններով, ինչպիսիք են, օրինակ, անսպասելի տարբեր գործոնների (տնտեսական, կազմակերպական, հոգեբանական, սոցիալական, էկոլոգիական և այլն) ազդեցությունը, ինչպես նաև կառավարչական իրավիճակների անսպասելի ընթացքը, որոնք զգալիորեն բարդացնում են կառավարչական գործունեությունը և բարձր պահանջներ են ներկայացնում կառավարչական աշխատանքի սուբյեկտին, նախ և առաջ՝ նրա մասնագիտական և հոգեբանական որակների տեսանկյունից¹⁶⁶:

Առկա հակասությունների հետևանքով ժամանակակից կառավարչական գործունեությունը հիմնականում համարվում է բարդ պայմաններում իրականացվող մասնագիտական գործունեություն:

¹⁶⁶ Акмеология: Учебник, Под общ. ред. А. А. Деркача, М., Изд-во РАГС, 2002, 650 с.

Այս պիսոնով, կառավարչական գործունեությունը գործունեության բարդ տեսակ է և հիերարխիկ հարաբերություններում՝ բազմազան: Այն ստեղծագործական բնույթի գործունեություն է՝ պայմանավորված ոչ ստանդարտ իրավիճակների գերակայությամբ, և ուղեկցվում է բարձր հոգեկան լարվածությամբ ու այլ բացասական հոգեկան վիճակներով:

Կառավարչական գործունեությունը պահանջում է հոգեբանական մեծ ռեսուրսներ և բարդ իրավիճակներում պատասխանատու որոշումներ կայացնելու ունակություն: Ժամանակակից հասարակությունը բարդ պահանջներ է ներկայացնում գործունեության սուբյեկտի անհատական-մասնագիտական որակներին և պրոֆեսիոնալիզմին, իսկ նոր ժամանակների մարտահրավերները՝ կառավարչական գործունեությանը և մասնավորապես կառավարչի անձնային և մասնագիտական որակներին:

Սակայն ներկայումս բավականաչափ ուսումնասիրված չէ հատուկ պայմաններում գործունեություն իրականացնող ղեկավարների պրոֆեսիոնալիզմը, հատկապես՝ ղեկավարի անձը: Դրա պատճառը հավանաբար այն է, որ նախկինում ուշադրության կենտրոնում հիմնականում գործունեության ասպեկտն էր:

Գիտական գրականությունում առկա ակմետոլոգիական հետազոտությունների շրջանակներում մշակված է գործունեության հատուկ պայմաններում ղեկավարների անձի պրոֆեսիոնալիզմի մոդելը¹⁶⁷: Յոգեբանական-

¹⁶⁷ Семенов С. В., Акмеологический подход в изучении профессионализма кадров управления в особых условиях деятельности. М., МААН, 2001.

հ ար մ ար վ ո ղ ա կ ա ն ու թ յ ու ն ը : Ա յ ս տ ի պ ի լր ա ց ու ց ի չ
բ ն ու թ ա գ թ ո ղ հ ա տ կ ա ն ի շ ը կ պ չ ու ն ու թ յ ու ն ն է :

Ձ ա խ ո ա ց ի ո ն ա լ ն եր ը ն եր կ այ ա ց ն ու մ ե ն ս թր ե ս ն
ար գ ե լ ա կ ո ղ ս ո ց ի ա լ ա կ ա ն տ ի պ ը : Նր ա ն ք ը ն դ ու ն ա կ ե ն
դ ի մ ա կ այ ե լ ու ս թր ե ս ի ն բ ա վ ա կ ա ն եր կ ար ժ ա մ ա ն ա կ ,
ս ա կ այ ն ս թր ե ս առ ա ջ ա ց ն ո ղ յ ու թ ա ք ա ն չ յ ու թ ա լ ի ք ի
դ ե պ ք ու մ նր ա ն ց ու ժ եր ը ս պ առ վ ու մ ե ն , և նր ա ն ք
փ ո խ ու մ ե ն հ ա կ ա գ դ ե լ ու ի թ ե ն ց
մ ար տ ա վ ար ու թ յ ու ն ը՝ ճ ն շ ե լ ո վ ս ե փ ա կ ա ն
ա պր ու մ ն եր ը : Նր ա ն ց ո ա ց ի ո ն ա լ խ առ ն վ ա ծ ք ի
լր ա ց ու ց ի չ բ ա ղ ա դ թ ի չ ը ք յ ու թ ե ղ ա յ ն ու թ յ ու ն ն է :

Ա ջ ո ա ց ի ո ն ա լ ն եր ը դ ա ս վ ու մ ե ն ո չ ս թր ե ս ա կ այ ու ն
ս ո ց ի ա լ ա կ ա ն խ մ ք ի ն : Նր ա ն ք բ ո լ ո թ ի ց վ ա տ ե ն տ ա ն ու մ
ս թր ե ս ն եր ը , հ ա տ կ ա պ ե ս՝ հ ա ն կ ար ծ ա կ ի բ ն ու յ թ ի :
Չ ն ա յ ա ծ ար տ ա ք ի ն ա մր ա կ ա մ ու թ յ ա ն ը (ս տ ո ց ի գ մ)՝
մ ի շ տ ու ն ե ն ու մ ե ն վ ա տ պ ա շ տ պ ա ն վ ա ծ , խ ո ց ե լ ի կ ե տ ,

ի ն չ պ ե ս ն ա ն ո տ ք ե թ ի տ ա կ ամ ու ր հ ո ղ ու ն ե ն ա լ ու պ ա հ ա ն ջ , հ ա ն կ ա թ ճ ա կ ի ու թ յ ու ն ը գ ր կ ու մ է ն ր ա ն ց դ ի մ ա դ թ ե լ ու կ ա թ ո ղ ու թ յ ու ն ի ց : Ս թ թ ե ս ա յ ի ն ի թ ա դ թ ու թ յ ու ն ն ե թ ու մ հ ա յ տ ն վ ե լ ի ս ա ջ ռ ա ց ի ո ն ա լ ի ս տ ն ե թ ի ն ա ն հ ա ն գ ս տ ա ց ն ու մ ե ն ծ ա ն թ կ ա ս կ ա ծ ն ե թ ը , ո թ ո ն ք ի վ ե թ ջ ո հ ա ն գ ե ց ն ու մ ե ն ն ե թ ք ի ն ը ն կ ճ վ ա ծ ու թ յ ա ն : Ն ր ա ն ց ռ ա ց ի ո ն ա լ խ ա ռ ն վ ա ծ ք ու մ ա ռ կ ա է ա յ ն պ ի ս ի ք ա ղ ա դ թ ի չ , ի ն չ պ ի ս ի ն է մ ի ա ձ ու լ ու թ յ ու ն ը ²⁰⁶:

Ա յ ս չ ո թ ս տ ի պ ե թ ի ց յ ու ր ա ք ա ն չ յ ու ր ը յ ու ր ո վ ի է դ ի մ ա կ ա յ ու մ ս թ թ ե ս ի ն ` ա մ ե ն ա ն գ ա մ ք ա թ ճ ր ա ց ն ե լ ո վ դ ի մ ա դ թ ո ղ ա կ ա ն ու թ յ ա ն մ ա կ ա թ դ ա կ ը :

Ս թ թ ե ս ի ա մ ե ն ա տ ա թ ա ծ վ ա ծ տ ե ս ա կ ն ե թ ի ց մ ե կ ը ա ջ խ ա տ ա ն ք ա յ ի ն ս թ թ ե ս ն է : Ա ն ձ ի ա ջ խ ա տ ա ն ք ա յ ի ն գ ո թ ճ ու ն ե ու թ յ ա ն ք ն ու յ թ ը ա ն ձ ի ա ն վ տ ա ն գ ու թ յ ու ն ն ա պ ա հ ո վ ո ղ կ ա թ ու թ պ ա յ մ ա ն է : Գ ո թ ճ ու ն ե ու թ յ ա ն ո թ ո շ տ ե ս ա կ ն ե թ ու մ , օ թ ի ն ա կ ` ա ն վ տ ա ն գ ու թ յ ա ն , ռ ա գ մ ա կ ա ն հ ա մ ա կ ա թ գ ե թ ու մ , ա յ ս հ ա ն գ ա մ ա ն ք ը հ ա շ վ ի է ա ռ ն վ ու մ և կ ի թ ա ռ վ ու մ է հ ա մ ա պ ա տ ա ս խ ա ն մ ո տ ե ց ու մ : Ս ա կ ա յ ն կ ա ն գ ո թ ճ ու ն ե ու թ յ ա ն ո թ ո շ տ ե ս ա կ ն ե թ , ո թ տ ե ղ մ ա ս ն ա գ ի տ ա կ ա ն ս թ թ ե ս ն ա ն ը ն դ ի հ ա տ ա ռ կ ա է , ք ա յ ց ք ա ն ի ո թ ա յ ն ու ժ ե ղ չ ի ա թ տ ա հ ա յ տ վ ու մ և ա ն ն կ ա տ ե լ ի է , ա յ դ պ ա տ ճ ա ռ ո վ ա ն տ ե ս վ ու մ է :

Ք ա ն ի ո թ հ ա ն թ ա յ ի ն ծ ա ռ ա յ ու թ յ ա ն հ ա մ ա կ ա թ գ ը ե ն թ ա դ թ ու մ է «մ ա թ դ -մ ա թ դ » փ ո խ հ ա թ ա թ ե թ ու թ յ ու ն , ա յ ն հ ա ն թ ա յ ի ն ծ ա ռ ա յ ո ղ ի ց պ ա հ ա ն ջ ու մ է հ ու գ ա կ ա ն ու թ յ ա ն ք ա թ ճ ր ա ս տ ի ճ ա ն , հ ե տ ն ա թ ա թ ե ն թ ա դ թ ու մ է ս թ թ ե ս ա յ ի ն ի թ ա վ ի ճ ա կ ն ե թ ի ա ռ կ ա յ ու թ յ ու ն : Ա ջ խ ա տ ա ն ք ա յ ի ն ս թ թ ե ս ` ռ ե ա կ ց ի ա ն ե թ կ ա մ հ ա կ ա գ դ ու մ ն ե թ ի գ ա թ գ ա ց ու մ , հ ա ն դ ի պ ու մ է ն ու յ ն ի ս կ ա ռ ա ջ ա դ ե մ , լ ա վ կ ա ռ ա վ ա թ թ ո ղ հ ա մ ա կ ա թ գ ե թ ու մ , ի ն չ ը պ ա յ մ ա ն ա վ ո թ թ վ ա ծ է ո չ մ ի ա յ ն

²⁰⁶ Гуленко В. В., Менеджмент слаженной команды. Соционика для руководителей, АСТ., 2-е изд., 2003, с. 58.

կառուցվածքակազմակերպչական

յուրահատկություններով, այլև աշխատանքի
բնույթով, աշխատակիցներին հետմիջանձնային
փոխհարաբերություններով և այլն:

Ըստ բազմաթիվ հետազոտությունների՝
մասնագիտական սթրեսը բավականաչափ բարդ
հասկացություն է: Աշխատանքի հետկապված սթրեսն
ամբողջությամբ իր ազդեցությունն է ունենում
մարդու վրա: Մասնագիտական սթրեսի առաջացման
պատճառ կարող են լինել աշխատանքային
բարդությունները, հիերարխիկ համակարգում
զբաղեցրած տեղը, մասնագիտական զարգացման
անձի հնարավորություններին
անհամապատասխանությունը, աշխատանքի
վերահսկողությունը, աշխատանքային սոցիալ-
հոգեբանական մթնոլորտը, աշխատաժամանակի
բաշխումը, աշխատանքի գնահատումը,
գերծանրաբեռնվածությունը և այլն²⁰⁷:

Աշխատանքային սթրեսներին դիմակայելու
հարցում մեծ դեր ունեն տազնապայնություն,
նյարդայնություն մակարդակը, անորոշության
հանդեպ հանդուրժողականությունը: Կարելի է նաև
դիտարկել այն սթրեսը, որն աշխատավայրից դուրս է
ծագում՝ ճգնաժամեր, ընտանեկան, ֆինանսական
խնդիրներ և այլն:

Ընդհանրացնելով պատկերը և համադրելով անձի
կյանքի տարբեր բնագավառները՝ աշխատանք,
ընտանիք, սոցիալական միջավայր, կարելի է ասել, որ
սթրեսորները բազմաթիվ են, էական ազդեցություն
են ունենում առողջության վրա և կարող են լուրջ
մարմնական և հոգեկան հիվանդություններին
առաջացման պատճառ դառնալ: Սթրեսի մակարդակը
տարբեր մարդկանց մոտ կարող է տարբեր լինել՝

²⁰⁷ **Бодров В.А.**, Психологический стресс: развитие и преодоление»: ПЕР СЭ; Москва; 2006, 528с.

կախված աշխատավայրից, տարբեր մասնագիտության տերանձանց մոտտագնապայնության, անորոշության նկատմամբ հանդուրժողականության մակարդակից: Աշխատանքային սթրեսի դրսևորումների համալիր ուսումնասիրության արդյունքում Ջ. Գրինբերգն առանձնացրել է դրանց աղբյուրները, անհատական քննադրերը և Ֆիզիոլոգիական առանձնահատկությունները (Дж. Гринберг, 2002), որոնք համակարգված ներկայացնելու նպատակով մշակվել և կազմվել է համապատասխան գծանկար (աղյուսակ 2):

Աղյուսակ 2.

Աշխատանքային սթրեսածին գործոններ և դրսևորումներ

<p align="center">Մասնագիտական սթրեսի աղբյուրները</p>	<p align="center">Սթրեսի նպաստող անհատական քննադրեր</p>	<p align="center">Ֆիզիոլոգիական դրսևորումներ</p>
<p>Աշխատանքային քարդոնություն</p> <ul style="list-style-type: none"> ✓ Աշխատանքային անբարենպաստ պայմաններ ✓ Յրատապ որոշումներ կայացնելու անհրաժեշտություն ✓ Անձի և աշխատանքային շահերի 	<p>Տագնապայնության մակարդակ ներդրող գործոններ</p> <p>մակարդակ</p> <p>Անորոշ իրավիճակներում</p> <p>հանդուրժողականություն</p>	<p>Աշխատունակություն Արյան ճնշման բարձրացում Արյան մեջ խոլեստերինի մակարդակի բարձրացում Սրտխփոցների հաճախականություն Ծխախոտամոլություն</p>

<p>բախու լ մ</p>		<p>Դեպրեսիվ տրամադրություն Ալկոհոլիզ կախվածություն Անբավարարվածություն աշխատանքից Շնչառական խնդիրներ</p>
<p>Յիերարխիկ համակարգում զբաղեցրած տեղը</p> <ul style="list-style-type: none"> ✓ Դերի անորոշություն ✓ Դերային կոնֆլիկտներ ✓ Պատասխանատվություն ենթակաների համար ✓ Կոնֆլիկտների կանխատեսում կանխարգելում 	<p><i>Ընտանեկան խնդիրներ Տարիքային ճգնաժամեր Նյութական դժվարություններ Կենցաղային խնդիրներ</i></p>	
<p>Մասնագիտական աճի և անձի հնարավորությունների անհամապատասխանությունը</p> <ul style="list-style-type: none"> ✓ Առաջխաղացման 	<p><i>Բարձր կամ ցածր ինքնագնահատական Տաղանապայ նյութ Անվստահություն</i></p>	

<p>խաթար ու մ ն ե ր ✓ (ար ա գ և դ ան դ ա դ) ✓ Ա ն վ տ ա ն գ ու թ յ ա ն գ գ ա ց մ ա ն ա ն կ ու մ ✓ Մ ա ս ն ա գ ի տ ա կ ա ն ը ն դ հ ա ր ու մ ն ե ր</p>	<p><i>Դ ե մ ո տ ի վ ա ց ի ա</i></p>	
<p><i>Ա շ խ ա տ ա ն ք ի վ ե ր ա հ ս կ ո ղ ու թ յ ա ն ա ն ո թ ո շ ու թ յ ու ն Պ ա տ ա ս խ ա ն ա տ վ ու թ յ ու ն ու ն ե ն ա լ ու դ ժ վ ա ր ու թ յ ու ն ն ե ր</i></p>	<p><i>Պ ա տ ա ս խ ա ն ա տ վ ո ւ թ յ ու ն ի ց և ա ն հ ա ջ ո ղ ու թ յ ո ւ ն ն ե ր ի ց խ ու ս ա փ ու մ</i></p>	
<p><i>Ա շ խ ա տ ա ն ք ա յ ի ն ս ո ց ի ա լ - հ ո գ ե ք ա ն ա կ ա ն մ թ ն ո լ ո թ տ ը ո չ ք ա վ ա ր ա ր մ ա ս ն ա կ ց ու թ յ ու ն ո թ ո շ ու մ ն ե ր ի ը ն դ ու ն մ ա ն ը Ս ա հ մ ա ն ա փ ա կ ու մ ն ե ր վ ա ր ք ու մ Կ ա գ մ ա կ ե ր պ ա կ ա ն ք ա դ ա ք ա կ ա ն ու թ յ ու ն Ղ ե կ ա վ ա ր ն ե ր ի , ե ն թ ա կ ա ն ե ր ի կ ա մ գ ո թ ը ն կ ե ր ն ե ր ի հ ե տ փ ո խ հ ա ր ա ք ե ր ու թ</i></p>	<p><i>Չ ա ղ ո թ դ ա կ ց մ ա ն հ մ տ ու թ յ ու ն ն ե ր Չ ա վ ա կ ն ու թ յ ու ն ն ե ր ի մ ա կ ա ր դ ա կ Ն վ ա ճ ու մ ն ե ր ի ձ գ տ ու մ Ս ո ց ի ա լ ա կ ա ն դ ե ր ի ը ն կ ա լ ու մ</i></p>	

յ ու ն ն ե թ ի ան ն ե թ դ ա շ ն ա կ ու թ յ ու ն		
Ա շ խ ա տ ա ն ք ա յ ի ն Ժ ա մ ա ն ա կ ի կ առ ա վ ար ու մ	Ժ ա մ ա ն ա կ ի ը ն կ ա լ ու մ , գ ն ա հ ա տ ու մ ն կ առ ա վ ար մ ա ն հ մ տ ու թ յ ու ն ն ե ր	
Ա շ խ ա տ ա ն ք ի ար դ յ ու ն ք ի գ ն ա հ ա տ ու մ	Չ ա վ ա կ ն ու թ յ ու ն ն ե թ ի ա ս տ ի ճ ա ն , ք ն ն ա դ ա տ ա կ ա ն մ տ ա ծ ո դ ու թ յ ու ն	
Ա շ խ ա տ ա ն ք ա յ ի ն Ժ ա ն ր ա բ ե ո ն վ ա ծ ո ւ թ յ ու ն	Ա շ խ ա տ ու ն ա կ ու թ յ ու ն	Չ ո գ ե կ ա ն ա շ խ ա տ ու ն ա կ ո ւ թ յ ու ն

Աղյուսակում ներկայացված աշխատանքային սթրեսածին գործոններն ու դրսևորումները պայմանավորված են կազմակերպչությունների գործունեության բնույթով, դրա չափերով և աշխատանքի ծավալով, աշխատակազմի պատրաստվածություն աստիճանով ու բազմաթիվ այլ պատճառներով և դրանց ազդեցությունը էլ կարող են փոփոխվել: Այսպես, օրինակ, նշվում է, որ աշխատանքային սթրեսորները այն ևարվածություններն ու ճնշումներն են, որոնք զգում ենք աշխատանքային գործունեության ժամանակ: Ղեկավարից աշխատավարձի բարձրացում խնդրելը, խիստ վերջնաժամկետները, վրիպումները բացատրելն ու արդարացնելը աշխատանքային սթրեսորներն են: Ինչպես սոցիալական սթրեսորները, աշխատանքային աթրեսորները նույնպես տարբերանհատներին մեջտարբերկերպ են դրսևորվում: Ոմանք կարող են շատ ևավ աշխատել խիստ վերջնաժամկետների ճնշման պայմաններում, և դանդաղ գործընթացները ձանձրալի և ավելի սթրեսային կթվան: Այլ աշխատակիցներ գուցե խուճապի մատնվեն և սթրեսի ենթարկվեն վերջնաժամկետի և պարտավորվածություն չափը ծայրահեղացնելու դեպքում²⁰⁸:

Ջ. Իվանցևիչը և Մ. Մաթսոնը աշխատանքային սթրեսառաջացնող հիմնական գործոնները բաժանել են անձնային, միջանձնային, կազմակերպչական, աշխատանքային տեսակների²⁰⁹:

Անձնային գործոնների շարքում նրանք առաջ են քաշում մարդկանց Աստիպի բաժանելու գաղափարը: Ըստ դրա՝ Աստիպի մեջ ընդգրկվում են հատկապես սթրեսային հակվածություն ունեցող անձինք: Որպես կանոն՝ նրանք անհամբեր են, մրցունակ,

²⁰⁸ Edward A. , Chalesworth and Ronald G. Nathan – Stress management, Atheneum New York, 1984, p. 328, pp. 25-26.

²⁰⁹ Ivancevich J. M., R. L. Konopaske, M. T. Matteson, Organizational Behavior and Management. Wiley. 2008.

զգուժմ են, որ մշտապես գտնվում են ժամանակի ճնշման տակ: Իսկ Բ տիպի մարդիկ համեմատաբար ավելի մեղմ շարժուն ձև ունեն, ավելի քիչ հավակնոտ են և ավելի արդյունավետ են աշխատում: Յետևաբար, որքան մարդն իր գործում ավելի մեծ քարձուկներ է հասնում, այնքան ավելի պետք է ձգտի հրաժարվել Ա տիպի վարքից և անցնի Բ տիպի վարքագծի:

Միջանձնային գործունեության թվում Ջ.Իվանցևիչը և Մ. Մաթսունը նշում են խանդը և նախանձը, որոնք համարվում են հզոր բացասական հոլյոգեր: Աշխատակիցների նախանձը շատ հաճախ շփոթում են խանդի հետ: Աշխատանքում նախանձի զգացումը, որպես կանոն, դիտվում է որպես չնչին մի բան և վկայում է բավականաչափ հասուն ու կայացած չլինելու մասին, իսկ խանդի զգացումը սոցիալապես ավելի ընդունված է: Աշխատանքում նախանձի և խանդի ուժեղ զգացումը կարող է հանգեցնել դժանուրյան: Այդ զգացումները հիմնականում բնորոշ են ցածր ինքնագնահատական ունեցող աշխատակիցներին:

Յանրային ծառայության ոլորտում աշխատանքի արդյունավետության գործունեության մեկն էլ համագործակցությունն է, որին հնարավոր է հասնել սթրեսային գործունեության բացառելով: Խոսքը վերաբերում է դեկավարի կողմից ստեղծվող իրավիճակներին: Նման իրավիճակներում գերակշռող կարող են լինել աշխատողի ինքնագնահատականի իջեցումը, քննադատությունները և այլն: Խանդն ու նախանձը հիմնականում համարվում են հոլյոգեր, ոչ թե սթրես, սակայն իրականում դրանք սթրեսներ են, քանի որ առաջանում են աշխատանքային միջավայրում սպառնալիք զգալու հետևանքով:

Կազմակերպչական գործունեության հատկանշական է պատասխանատվությունը մյուսների համար: Մեծ

պատասխանատվությունն ընդհանուր առմամբ կարող է հանգեցնել սթրեսի: Պատասխանատվությունը սթրես է պարուկակում, եթե դա գումար է սույն թե ինքն թեզ համար, այլ մյուսների կամ ձեռնարկության: Այն կառավարիչները, ովքեր աշխատում են մարդկանց հետևյալ պատասխանատու են նրանց համար, ավելի շատ են ենթարկվում սթրեսի, քան նրանք, ովքեր հիմնականում գործունենում են առարկաների կամ գաղափարների հետ:

Սթրեսածին կարող են լինել անբարենպաստ աշխատանքային պայմանները: Աղմուկը, ցուրտը, տհաճ հոտերը աշխատավայրում նույնպես սթրես են առաջացնում²¹⁰: Մասնագիտական ինստիտուտները կազմել են սթրեսին առավելագույն և նվազագույն հակվածություն ունեցող մասնագիտությունների ցանկ: Սթրեսի առավելագույն հակվածություն ունեցող մասնագիտությունների թվին են պատկանում քարտուղարի, բժշկական լաբորատորիայի աշխատակցի, գրասենյակի ղեկավարի, մենեջերի, մատուցողի, հանքագործի մասնագիտությունները:

Սթրեսի նկատմամբ նվազագույն հակվածություն ունեն դերձակը, հսկիչը, պահեստապետը, երեխայի խնամքով զբաղվողը, ուսուցիչը կամ դասախոսը, կադրերի բաժնի աշխատողը և այլն²¹¹:

Վերը թվարկվածներից բացի՝ աշխատանքային սթրեսի պատճառ է աշխատամոլությունը, որն էլ հանգեցնում է «մասնագիտական այրման» («հոլդապան այրման սինդրոմ» երևույթը (անգլիալեզու գրականության մեջ այն անվանվում է «burnout») լայնորեն ուսումնասիրվում է Արևմուտքում):

Դիտարկված առանձնահատկությունները վերաբերում են նաև հանրային ծառայության

²¹⁰ R. Vecchio, Organizational behavior, Sout - western, CENGAGE Learning, 2006, p. 432, pp. 257-262.
²¹¹ A. Edward, Chalesworth and Ronald G. Nathan - Stress management, Atheneum New York, 1984, p. 328, pp. 25-26.

ն լ ո թ տ ի կ ա զ մ ա կ ե ր պ ու թ յ ու ն ն ե թ ի ն և
ան դ ր ա դ առ ն ու մ ե ն ա յ դ հ ա մ ա կ ա ր գ ու մ ն ե թ գ ր ա վ վ ա ծ
ա շ խ ա տ ա կ ի ց ն ե թ ի մ ա ս ն ա գ ի տ ա կ ա ն
ար դ յ ու ն ա վ ե տ ու թ յ ա ն վ ր ա :

Ա յ ս պ ի ս ո վ , ու ս ու մ ն ա ս ի թ ե լ ո վ ս թ թ ե ս ա ծ ի ն
գ ո թ ծ ո ն ն ե թ ի հ ո գ ե ք ա ն ա կ ա ն և \$ ի գ ի ո լ ո գ ի ա կ ա ն
հ ի մ ք ե թ ը , կ ա թ ո ղ ե ն ք փ ա ս տ ե լ , ո թ դ ր ա ն ք
ան դ ր ա դ առ ն ու մ ե ն ա շ խ ա տ ա ն ք ա յ ի ն
գ ո թ ծ ու ն ե ու թ յ ա ն ար դ յ ու ն ա վ ե տ ու թ յ ա ն վ ր ա , ի ս կ
ս թ թ ե ս ա կ ա յ ու ն ու թ յ ու ն ը մ ա ս ն ա գ ի տ ա կ ա ն
ար դ յ ու ն ա վ ե տ գ ո թ ծ ու ն ե ու թ յ ա ն կ ա թ ո թ
ն ա խ ա պ ա յ մ ա ն է : Յ ա ն թ ա յ ի ն ծ առ ա յ ու թ յ ա ն հ ա մ ա կ ա ր գ ը
հ ա գ ե ց ա ծ է հ ո գ ե ք ա ն ա կ ա ն լ ա թ վ ա ծ ու թ յ ու ն
առ ա ջ ա ց ն ո ղ տ ա թ ա ք ն ու յ թ ի թ ա վ ի ճ ա կ ն ե թ ո վ , չ ն ա յ ա ծ
ա յ ն առ ա վ ե լ ս թ թ ե ս ա յ ի ն մ ա ս ն ա գ ի տ ու թ յ ու ն ն ե թ ի
ց ա ն կ ու մ չ է : Ս ա կ ա յ ն ա յ ս տ ի պ ի ծ առ ա յ ու թ յ ա ն
գ ո թ ծ առ ու յ թ ն ե թ ը վ ե թ լ ու ծ ե լ ի ս ա կ ն հ ա յ տ է
դ առ ն ու մ ս թ թ ե ս ն ե թ ի հ ա մ ա տ ա թ ա ծ առ կ ա յ ու թ յ ու ն ը ,
ի ն չ ը մ ա ս ն ա գ ի տ ա կ ա ն պ ա տ թ ա ս տ ու թ յ ա ն և
վ ե թ ա պ ա տ թ ա ս տ մ ա ն հ ա մ ա կ ա ր գ ը վ ե թ ա փ ո խ ե լ ու
պ ա հ ա ն ջ է առ ա ջ ա ց ն ու մ :

**3.2. «Մասնագիտական այրում» համախտանիշի
բնութագրման և բացահայտման հիմնահարցը
կառավարման համակարգում**

Ա յ ս ո թ մ ե թ ե թ կ թ ու մ ո թ ը ս տ ո թ ե ը ն դ լ ա յ ն վ ու մ ե ն
մ ա թ դ ու մ ա ս ն ա գ ի տ ա կ ա ն գ ո թ ծ ու ն ե ու թ յ ա ն
ն լ ո թ տ ն ե թ ը , առ ա ջ ե ն գ ա լ ի ս ն ո թ
մ ա ս ն ա գ ի տ ու թ յ ու ն ն ե թ , և ձ ա վ ո թ վ ու մ է

մասնագիտական փոխհարաբերություններին հատուկ ժամանակակից մթնոլորտ: Շուկայական տնտեսություն զարգացման միտումներով թելադրված՝ աշխատանքային գործունեության բոլոր բնագավառներում նկատվում է մրցակցության մեծ աճ, որը խիստ պահանջներ է ներկայացնում կառավարման և տնտեսավարման դաշտում գտնվող կազմակերպություններին, դրանց ենթակառուցվածքներին և աշխատանքի բուս սուբյեկտին՝ մարդուն: Նման մրցավազքի պայմաններում, երբ անհրաժեշտ է սեղմ ժամկետներում իրականացնել որևէ կարևոր մասնագիտական գործառնություն, հնարավոր է, որ այդ գործառնություններն իրականացնող անձի մոտի հայտ գան հոգեկան գործընթացների խաթարում, հոգեֆիզիոլոգիական փոփոխություններ և այլ տեղաշարժեր, որոնք անմիջականորեն անդրադառնում են աշխատանքի արդյունավետության վրա:

Աշխատանքի արդյունքում անհատի մոտ կատարվում են որոշակի փոփոխություններ, որոնք արտահայտվում են ոչ միայն մասնագիտական զարգացման մեջ, այլև նրա հոգեկանում: Յոգեբանական գրականության մեջ այդ փոփոխություններն անվանում են «մասնագիտական շեղում» կամ «այրում»: Այսօր Յայաստանում սոցիալ-տնտեսական բարեփոխումների, աշխատաշուկայում տիրող իրավիճակի, աշխատատեղերի սղություն պայմաններում մեծ կարևորություն են ձեռք բերում մասնագետների հոգեբանական կայունություն, սթրեսադիմացկունություն, «հոլգական այրման» և հյուսվածություն ուսումնասիրությունները, ախտորոշումն ու կանխարգելումը: Բազմաթիվ են հիմնահարցի

այ ժմ եականոթյունը
հետազոտությունները:

փաստող


Կառավարման և աշխատանքի հոգեբանությունում
ընդունված է, որ «մարդ-մարդ» համակարգի
մասնագիտություններ ունեցող անձանց մոտ
հոգեական այրման և մասնագիտական սթրեսի
հիմնախնդիրները խիստ արդիական են: Տեսական
վերլուծությունից պարզ է դառնում, որ «հոգեական
այրում» (emotional burn-out) եզրույթն առաջին անգամ
օգտագործել է ամերիկացի հոգեբան Ջ.
Ֆրեդենբերգը 1974 թվականին: Նա այդ
հասկացությունը մեկնաբանում է որպես մարդկանց
հետ անմիջականորեն շփվող մասնագետների
առանձնահատուկ հոգեվիճակ: Իսկաբանե այդ խմբին
էին դասվում ճգնաժամային կենտրոններում և
հոգեբուժական կլինիկաներում աշխատողները:
Յետագայում դրա մեջ ընդգրկվեցին «մարդ-մարդ»
համակարգի բոլոր այն մասնագիտությունները,
որոնք ենթադրում են մշտական միջանձնային
շփումներ (А. Ф. Бурлачук, 2001)²¹²:

«Այրման» սահմանումները բազմաթիվ են, սակայն
այդ երևույթն առավելապես դիտարկվում է որպես
հաճախակի դրսևորվող սթրեսային հակազդում, որն
առաջ է եկել միջին ինտենսիվությունների կարատև
մասնագիտական սթրեսների արդյունքում: Այս
առումով «այրման» համախտանիշը մի շարք
հեղինակներ համարում են «մասնագիտական այրում»,
ինչը թույլ է տալիս երևույթը դիտարկել որպես
մասնագետի տևական աշխատանքային
գործունեության հետևանքով առաջացող
անձնային դեֆորմացիա: Ընդ որում, այս
համախտանիշը հատուկ է այն
մասնագիտությունների

²¹² H. Freudenberg,
experienced burnc

burn-out. Journal of Social Issues. 1974, 266 p., Maslach, C. and Jackson, S. E., The measurement of
Journal of Occupational Behaviour, 2, 99-113, 1981.

ն երկայացուցիչներին, որոնք աշխատանքի ընթացքում իրականացնում են բազմաբնույթ շփումներ (Ю. Александровский, 1976, Ф. Е. Василюк, 1984)²¹³: «Այրման» համախտանիշն առավել վառ է դրսևորվում այն դեպքում, երբ մասնագետի հաղորդակցումը հագեցած է հուզականությամբ, և պահանջվում է հաղորդակցման բանիմացություն և խոր գիտելիքներ: Նշյալ համախտանիշի առաջացման հավանականությունը մեծացնում է ապակառուցողական շփումների թիվը: Հետևաբար «այրումը» հարաբերակցվում է այն շփումների թվի և որակի հետ, որոնք տվյալ մասնագետն ունեցել է աշխատանքային գործունեության ընթացքում (Նկար 4):



Նկար 4. «Այրման» համախտանիշի ենթաափմոդելը.

«այրման» համախտանիշն աշխատավայրում

Հայտնի են «այրման» երեք մոդել և դրանց գնահատման համապատասխան մեթոդաբանությունը:

²¹³ В. Е. Орел, «Феномен «выгорания» в зарубежной психологии: эмпирические исследования», Психологический журнал. 2001, Т. 22, № 1, с. 12-17.

Судаков К. В., Системные механизмы эмоционального стресса. М., Медицина, 1982, 232 с.

Համաձայն առաջին միաչափ մոդելի՝ «այրուժը» ֆիզիկական, հոգեկան և հոլզական հյուժվածություն վիճակ է, որի պատճառը երկար ժամանակ հոլզականորեն գերհագեցած շփման իրադրություններում գտնվելն է: Համաձայն այս մեկնաբանության՝ «այրման» համախտանիշը դիտվում է որպես «խրոնիկ հոգնածություն»: Միաչափ մոտեցման կողմնակիցները «այրուժը» չեն վերագրում որոշակի մասնագիտական խմբերի. նրանք երևույթը մեկնաբանում են ավելի լայն իմաստով:

Երկրորդ մոդելն առաջարկել են հոլանդացի հետազոտողները, որոնք «այրուժը» դիտում են որպես երկչափ կառույց՝ նրա բաղկացուցիչ մասեր համարելով հոլզական հյուժվածությունը և ապաանհատականացումը (դեպերսոնալիզացիա). վերջինս դրսևորվում է գործընկերների և ենթակաների հետ հարաբերությունների վատթարացմամբ, ընկերական և ընտանեկան շփումների սահմանափակմամբ, երբեմն էլ՝ սեփական անձի հանդեպ վերաբերմունքի փոփոխությամբ:

Կառավարման հոգեբանությունում առավել տարածված է «այրման» համախտանիշի եռաչափ մոդելը: Ըստ այս մոդելի՝ «այրուժը» հոլզական հյուժվածություն, ապաանհատականացման (դեպերսոնալիզացիա) և սեփական անձնային ձեռքբերումների ռեդուկցիայի համախտանիշ է (A. Macloy, 1999): Հոլզական հյուժվածությունը դիտվում է որպես «այրման» հիմնական բաղկացուցիչ և դրսևորվում է անտարբերությամբ կամ ծայրահեղ հոլզականությամբ: Երկրորդ բաղկացուցիչը՝ ապաանհատականացումը, արտահայտվում է մարդկանց հանդեպ վերաբերմունքի փոփոխությամբ: «Այրման» երրորդ բաղկացուցիչը՝ անձնային ձեռքբերումների ռեդուկցիան, կարող է արտահայտվել սեփական անձը, մասնագիտական

որակները և հաջողությունները թերագնահատելու միտման մեջ, գործնական ձեռքբերումների և հնարավորությունների հանդեպ բացասական վերաբերմունքի կամ սեփական արժանապատվության ռեդուկցիայի, հնարավորությունների և այլ անձանց հանդեպ ունեցած պարտավորությունների սահմանափակմամբ ²¹⁴:

Այսպիսով, ակնհայտ է, որ մասնագիտական գործունեության ոլորտում «այրման» համախտանիշի հոգեբանական ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է աշխատանքային գործունեության արդյունավետության բարելավման պահանջով, փորձառու և բանիմաց մասնագետների պրոֆեսիոնալ որակների և կայուն հոգեբանական վիճակի պահպանման անհրաժեշտությամբ: Բազմաթիվ հետազոտություններում ապացուցված է, որ մասնագիտական գործունեության ոլորտում սթրեսածին գործոնների առկայությունը մեծապես ազդում է աշխատանքի արդյունավետության վրա, ապակայունացնում է աշխատանքային խմբի ներքին սոցիալ-հոգեբանական մթնոլորտը, խաթարում է աշխատանքային գործընթացի բնականունությունը, լարվածություն է առաջացնում միջանձնային հարաբերությունների և շփումների դաշտում և, վերջապես, բացասաբար է անդրադառնում գործունեության սուբյեկտի ընդհանուր ֆիզիկական և նյարդահոգեկան վիճակի վրա:

Յոգեբանության տեսանկյունից անհրաժեշտ է նաև հաշվի առնել անհատական առանձնահատկությունները և այն խմբի յուրահատկությունները, որտեղ իրականանում է հարմարվելու գործընթացը: Յոգեբանական հարմարման արդյունավետությունն ուղղակիորեն

²¹⁴ Никишина В. Б., Василенко Т. Д., Психодиагностика в системе социальной работы, М., 2004, 208с.

կախված է մի կրոնոցիալական փոխազդեցության կազմակերպումից, որն իրականացնում է այդ խմբի կառավարիչը: Աշխատանքային միջավայրում կոնֆլիկտային իրավիճակի առկայությունը պետք է նկատվում են ոչ ձևական շփումներ հաստատելու դժվարություններ, հարմարվելու խանգարումներ, որոնք առավելապես դրսևորվում են աշխատանքից դուրս շփումներում, բայց նաև պես ազդում են մթնոլորտի վրա: Հարմարվելու հետևանքով առկայան որևէ կապված են միջավայրի և շրջապատի մարդկանց հոգեբանական յուրահատկությունները: Այսպիսով, տեսնում ենք, որ արդյունավետ հոգեբանական հարմարումը բարենպաստ մասնագիտական գործունեության և աշխատակցի հոգեբանական կայունության նախադրյալներին է:

Կառավարման մասնագիտություններում սթրեսային իրավիճակներն առաջանում են իրադարձություններին զուգընթաց, բխում են արագ որոշումներ կայացնելու անհրաժեշտությունից, աշխատանքի ռիթմից և բնույթից, ինչպես նաև անձանց անհատական առանձնահատկություններին անհամապատասխանությունից: Աշխատանքի ընթացքում սթրեսային իրավիճակների առաջացման գործոն կարող են լինել տեղեկացվածության պակասը կամ դրահակասականությունը, աշխատանքը կատարելու անհասկանալի հրահանգներն ու պահանջները, ճգնաժամային պայմանները, որոշում կայացնելու ժամանակ ռիսկի դիմելու գործոնը և այլն: Մասնագիտական այրման պատճառով մարդն իր աշխատանքային օրվա մեծ մասն անցկացնում է անիմաստ, վտանգում է իր կարիերան և աշխատանքի արդյունավետությունը, գրադված լինելով՝ իրականում պարապ է: Դա նկատելի է հատկապես իդեալիստներին և էնտուզիաստներին մոտ, որոնք

աշխատանքում սահմանում են իրենց համար չափազանց բարձր նշած ողեր, ինչպես նաև այն մասնագետներին մոտ, ովքեր աշխատանքի բերումով շատ են շփվում տարբեր մարդկանց հետ: Որոշ ժամանակ անց այդ մարդկանց համակում է բացասական գգացում՝ անհուսուլթյուն, հիասթափուլթյուն, թուլլուլթյուն և այլն: «Ես» կոնցեպցիան համապատասխանաբար ստանում է բացասական երանգավորում, ձևավորվում է ապակառուցողական դիրքորոշում դեպի աշխատանքը, գործընկերները և կյանքը առհասարակ:

Մարդու հոգեկանի վրա մասնագիտական գործունեության ազդեցության տարբերաստիճաններն ու մակարդակները նկարագրելու համար գրականության մեջ շրջանառվում են մի խումբ եզրույթներ. օրինակ՝ մասնագիտական դեֆորմացիա՝ շեղում, մասնագիտական պիտանիություն կամ ոչ պիտանիություն, խրոնիկական հոգնածություն, մասնագիտական սթրես, մասնագիտական այրում և այլն (Յ. Մ. Ավանեսյան, 2010թ., Ա. Փ. Бурлачук, 2001, Ю. Турачев, Б. Иовлев, 1976)²¹⁵: Դրանցից յուրաքանչյուրն արտացոլում է այն տեսանկյունը, որով տարբեր հետազոտողներ մեկնաբանում են անձի՝ մասնագիտական լարված և տևական գործունեության համատեքստում առաջ եկող հոգեկան և ֆունկցիոնալ վիճակը: Դավկայում է, որ գրականության մեջ հանդիպող բազմազան տերմիններն ու սահմանումները, ըստ էության, բնութագրում են նույն երևույթի տարբեր կողմերը կամ դրսևորումները:

²¹⁵ **Ռ. Վ. Աղունգումցյան**, Յոգեբանական անվտանգությունը կազմակերպություններում, «Անձի գարգացման հիմնախնդիրները» միջազգային գիտաժողովին յուլի 2009, ԵՊՀ հրատ., Երևան, 2009, էջ 10-12:

В. Е. Орел, «Феномен «выгорания» в зарубежной психологии: эмпирические исследования», Психологический журнал. 2001, Т.22, № 1, с. 12-17.

«Մասնագիտական այրում» գաղափարի մյուս «կնքահայրը» սոցիալական հոգեբան Կ.Մասլաչն է: Նա այդ հասկացությունը սահմանել է իբրև ֆիզիկական և հոլոգրաֆիկ հյուսվածությունների համախտանիշ, որի դեպքում անձի մեջ ձևավորվում է ցածր ինքնագնահատական, բացասական վերաբերմունք աշխատանքի նկատմամբ, ապրումակցման կորուստ գործընկերների հանդեպ: Ինչպես ցույց է տալիս համապատասխան գրական աղբյուրների ուսումնասիրությունը, «մասնագիտական այրում» և «հոլոգրաֆիկ այրում» հասկացությունների մաստային և բովանդակային շրջանակները համընկնում են, ուստի հարմար ենք գտնում նույնացնել դրանք (Ю. Турачев, Б. Иовлев и др., 1976)²¹⁶: Մասնագիտական և աշխատանքային ոլորտում ձևավորվող «այրման» երևույթներն ունեն բարդ ծագումնաբանություն և լուրջ հետք են թողնում մարդու հոգեկերտվածքի վրա, ինչը թույլ է տալիս այրման բազմաբնույթ նշանները, դրսևորումներն ու տարբերակները խմբավորել «համախտանիշ» հասկացության ներքո:

Այսպիսով, մասնագիտական կամ հոլոգրաֆիկ այրման համախտանիշը (ՅԱՅ) հոլոգրաֆիկ, հոգեկան և ֆիզիկական հյուսվածությունների այն վիճակն է, որը զարգանում է իբրև աշխատավայրում ծավալվող չհանգուցալուծված խրոնիկական սթրեսի արդյունք: Այն հատուկ է աշխատանքին անմնացորդ նվիրված և այլ մարդկանց հանդեպ հոգածություն պահանջող մասնագիտություն ունեցող անձանց:

Հոլոգրաֆիկ այրման համախտանիշի էությունը վերծանելու համար անհրաժեշտ է դիտարկել այն առաջ բերող ներքին և արտաքին գործոնները²¹⁷:

²¹⁶ **Т. В. Форманюк**, Синдром профессионального сгорания как показатель профессиональной дезадаптации учителя, Вопросы психологии, 1994, 4, с. 24-29.

²¹⁷ **Бахур В.**, На нервной почве, М., Информационно-издательский дом «Филинь», 1996, 154 с.
Бурлачук А. Ф., Морозов С. М., Словарь-справочник по психодиагностике. СПб., Питер, 2001, 528с.

Արտաքին գործունեությունն շարունակաբար լարված հոգեհոլզակալ գործունեություն, գործունեություն կազմակերպման ապակայունացում, կատարվող գործառնությունները և գործողությունները համար պատասխանատվության բարձրաստիճան, մասնագիտական գործունեություն ծավալելու համար հոգեբանական մթնոլորտ (կոնֆլիկտայնություն և ուղղահայաց հարթությունում՝ «դեկավար-ենթակա» համակարգում, և հորիզոնական հարթությունում՝ գործընկերների միջև), հոգեբանորեն բարդ կոնտինգենտ, որի հետգործունեի մասնագետը:

ՀԱՀ-ի առաջացման ներքին գործունեությունն հոլզակալ ուղիղություն հակվածություն, մասնագիտական գործունեության իրադրություն ինտենսիվ ներքնայնացում (ընկալում և վերապրում) և մասնագիտական գործունեության մեջ հոլզակալ հակազդման ցածր մոտիվացիա²¹⁸:

Հոլզակալ այրման համար ներքին և արտաքին նպաստավոր գործունեությունը պարարտ հող է մասնագիտական այրման համախտանիշի ձևավորման համար: Ցանկացած համախտանիշ, այդ թվում նաև մասնագիտական գործունեության արդյունքում հանդես եկող հոլզակալ այրման համախտանիշը մի խումբ նշանները և ախտանիշները դիտարկել, բայց միևնույն ժամանակ կոլեամբոզություն է: ՀԱՀ-ը վերլուծող տեսաբանների և պրակտիկ հոգեբանների աշխատանքներում նկարագրվում են ամենատարբեր ախտանիշներ, բայց, այնուամենայնիվ, այդ խճանկարից կարելի է առանձնացնել առավել ցայտուն դրսևորվող և հաճախ հանդիպող մի շարք նշաններ:

Առանձին խումբ են կազմում հոլզակալ այրման համախտանիշի հիմնական ախտանիշները՝

²¹⁸ Бойко В., Энергия эмоций в общении: взгляд на себя и других, М., Филинь, 1996, 472с.

հարաբերություններին վատթարացում
գործընկերներին և հարազատներին հետ,
գործընկերներին նկատմամբ բացասական
վերաբերմունքի աճ, կոֆեինի, նիկոտինի, ալկոհոլի
չարաշահում, հոլմորի զգացման կորուստ,
անհաջողակություն և մեղքի մշտական զգացում,
բարձր գրգռվողականություն աշխատանքի վայրում
ուտանը, տագնապի և մշտական վտանգի
զգացողությունն առկա է:

Հետազոտությունները ամփոփումը ցույց տվեց,
որ այրման համախտանիշ ունեցող մարդկանց մեջ
սովորաբար նկատվում են հոգեախտաբանական,
հոգեմարմնական, մարմնական ախտանիշների
համադրություն և սոցիալական դիսֆունկցիայի
հատկանիշներ: Հոգեբանական այրման
համախտանիշով տառապող մարդկանց մեջ հաճախ
առանց պատճառի նկատվում է հոգնածություն,
աշխատանքի նկատմամբ բացասական վերաբերմունք,
ուշադրություն, հիշողություն և քնի
խանգարումներ: Հնարավոր են տագնապային,
դեպրեսիվ խանգարումներ, փսիխոակտիվ նյութերից
կախվածություն առաջացում:

Իբրև հոլմորի այրման առանցքային նշաններ՝ S.
Վ. Ֆորմանյուկն իր հետազոտությունում
առանձնացրել է՝

1. մարդու՝ հյուսիսում դիմակայելու հոլմորի
«Ես»-ի կարողություններին վերջնակետը,
անհատական սահմանը.
2. ներքին հոգեբանական փորձը, որը ներառում է
զգացմունքները, դիրքորոշումները,
դրդապատճառները, սպասումները և այլն.
3. անհատական բացասական փորձը՝ կուտակված
հիմնախնդիրները, դիսթրեսը, դիսկոմֆորտը,

դիսֆունկցիաները և դրանց բացասական հետևանքները ²¹⁹:

Ընդհանրացնելով տարբեր մոտեցումներն ու դասակարգումները՝ նշենք հոլզական այրման հիմնական ախտանիշները ²²⁰.

- ◊ ակտիվ մասնագիտական աշխատանքից բխող հոգնածոլթյուն, հյուսվածոլթյուն, սպառում.
- ◊ հոգեմարմնական խնդիրներ (արյան ճնշման տատանումներ, գլխացավեր, մարսողական և սրտանոթային համակարգերի ախտահարում, ներոլոգիական խանգարումներ).
- ◊ անքնոլթյուն.
- ◊ բացասական վերաբերմունք այցելուների, հաճախորդների հանդեպ՝ նախկինում եղած դրական, բարյացակամ հարաբերոլթյունների փոխարեն.
- ◊ բացասական տրամադրվածոլթյուն կատարվող աշխատանքի հանդեպ.
- ◊ անձնային դիրքորոշոլմների կարծրացում, շփման և գործոլնեոլթյան մեքենայացում, գիտելիքների պատրաստի ձևերի յոլրացում, աշխատանքային գործողոլթյունների ցանկի կրճատում, մտածական գործողոլթյունների ռիզիդոլթյուն.
- ◊ ագրեսիվ միտումներ (ցասում և գրգռվածոլթյուն գործընկերների և այցելուների հետ շփվելիս).
- ◊ ֆունկցիոնալ, բացասական վերաբերմունք սեփական անձի նկատմամբ.
- ◊ տագնապալի վիճակներ.

²¹⁹ Т. В. Форманюк, Синдром профессионального сгорания как показатель профессиональной дезадаптации учителя, Вопросы психологии, 1994, 4, с. 24-29.

²²⁰ Международная классификация болезней (МКБ-Х). Рубрика Z73, «Стресс, связанный с трудностями поддержания нормального образа жизни», 17, с. 51.

◊ հոռետեսական տրամադրվածություն, դեպրեսիա, ծավալվող իրադարձությունների անիմաստ լինելու զգացողություն.

◊ մեղքի զգացում:

Ինչպես երևում է, ՅԱՅ-ը սերտորեն առնչվում է խրոնիկական հոգնածության համախտանիշի հետ (ԽՅՅ). այդ երկու համախտանիշները կազմում են մասնագիտական դեֆորմացիայի (շեղման) բովանդակային բնութագիրը, և չնայած ախտանիշների նմանությանը՝ դրանք ունեն զգալի տարբերություններ: ԽՅՅ-ը կապված է աշխարհիկայի մարդկանց մասին գիտելիքների պատրաստի ձևերի ընդունման հետ: Օրինակ՝ այն դրսևորվում է բժիշկների մոտ, որոնց գիտակցությունը «կարծրանում է», և ձևավորվում է գործառական մոտեցում ընդհանրապես մարդկանց և հատկապես հիվանդների նկատմամբ²²¹:

Ինչվերաբերում է ՅԱՅ-ին, ապահանկատվում է այն մասնագետների մոտ, որոնք իսկզբանե օժտված են ստեղծագործական մեծ ներուժով, մարդկանց հանդեպ ունեն ջերմ վերաբերմունք, նվիրված են իրենց գործին: ՅԱՅ-ը անձի կողմից մշակված հոգեբանական պաշտպանության մեխանիզմ է՝ ի պատասխան հոգետրավմատիկ ներգործության, հոլյզերի մասնակի կամ լրիվ բացառման, դրանց էներգետիկայի նվազման:

ՅԱՅ-ը հուզական, իսկ ամենից հաճախ՝ մասնագիտական գործունեության ձեռքբերովի կարծրատիպ է: Այրումը մասամբ գործառական կարծրատիպ է, քանի որ թույլ է տալիս մարդուն չափավորել և խնայողաբար ծախսել իր էներգետիկ պաշարները: Միևնույն ժամանակ կարող են ի հայտ

²²¹ Александровский Ю., Состояние психической дезадаптации и их компенсация., М., «Наука», 1976, 272с.
Турачев Ю., Иовлев Б. и др., Эмоциональный стресс в условиях нормы и патологии человека, Ред. Турачев Ю., Иовлев Б. и др., М., 1976, 171 с.

գալ դրա դիսֆունկցիոնալ հետևանքները, երբ այրումը բացասաբար է անդրադառնում մասնագիտական գործունեության և գործընկերների միջև հարաբերությունների վրա: ՀԱՀ-ը անձի մասնագիտական շեղման ձև է: Իրականությունը նկատման այդ կարծրատիպը ձևավորվում է մի շարք ներքին և արտաքին գործոնների ազդեցությամբ²²²:

Ինչպես տեսնում ենք, գոյություն ունեն տարբեր տեսակետներ ՀԱՀ-ի առաջացման և զարգացման պատճառների վերաբերյալ: Մի շարք հետազոտողների կարծիքով, դրա զարգացման հիմնական նախադրյալները կազմակերպչական խնդիրների և անհարթությունների մեջ են: Ըստ նրանց՝ համախտանիշի առաջացման պատճառներն են՝ բարձր աշխատանքային ծանրաբեռնվածությունը, իրադրությունը վերահսկելու անբավարար ընդունակությունը, աշխատանքից բավարարված չլինելը, բարոյական և նյութական ոչ բավարար խրախուսանքը և այլն²²³: Մյուս խմբի հեղինակներն ավելի շատ կարևորում են մասնագետների անձնային բնութագրերը՝ ցածր ինքնագնահատական, բարձր ներոտիզմ, տագնապայնություն և այլն:

Հետազոտությունների արդյունքում առանձնացվել են ՀԱՀ-ի նաև ավելի հակված մարդկանց հետևյալ խմբերը՝ «մանրախնդիր՝ պեդանտ», «ցուցադրական», «էմոտիվ»²²⁴: Գոյություն ունեն բնավորություն մի շարք գծեր, որոնք կանխորոշում են հոլոգրամային առաջացումը և մարդուն դարձնում են մասնագիտական այրման պոտենցիալ

²²² Бойко В., Энергия эмоций в общении: взгляд на себя и других, М., Филинь, 1996, 472с.

²²³ Е. Ю. Райкова, Терапия и профилактика профессионального выгорания у представителей помогающих профессий, Молодой ученый. 2011, № 5, т. 2, с. 92-97.

²²⁴ Пономарева М.А., Диагностика и профилактика синдрома эмоционального выгорания. Последипломное образование: достижения и актуальные направления развития: сб. науч. ст. Вып 7. , Минск: Академия последипломного образования, 2010. с. 204-213.

«գ ո հ »: Դրանցից են՝ անվստահությունը սեփական
 ուժերի հանդեպ, անհամբերությունը,
 անհանդուրժողականությունը, ավանդական
 արժեքների պահպանումը կամ
 պահպանողականությունը, վերահսկման և
 խրախուսման մեծ պահանջը: Մի շարք հեղինակներ
 նշում են ծայրաստիճան պարտաճանաչությունը,
 չափազանց մեծ նվիրումը և նվիրվածությունը,
 աշխատանքից վերանալու՝ վերացարկվելու
 անկարողությունը, իդեալիզմը, պերֆեկցիոնիզմը²²⁵:

Աշխատանքի բովանդակության և կառուցվածքի
 առանձնահատկություններից, որոնք կարող են
 հուզական այրման պատճառ դառնալ, առանձնացնում
 են մասնագիտական ոչ բավարար
 ինքնուրույնությունը, դերային կոնֆլիկտները,
 դերային անորոշությունը աշխատակազմում,
 միջանձնային շփումների գերլարվածությունը,
 հանրության կամ մարդկանց լայն զանգվածների հետ
 տարվող լարված աշխատանքը, անձնական
 նվաճումների հասնելու սահմանափակ
 հնարավորությունները, գերբեռնվածությունը և
 այնպիսի արտաքին սթրեսորներ, ինչպիսիք են
 աղմուկը, վատ լուսավորությունը, աշխատանքային
 անբավարար պայմանները և այլն: Մասնագիտական
 այրման ենթարկված աշխատակիցները հաճախ
 դեկավարին են ներկայացնում բողոքներ
 աշխատանքի արդյունքների գնահատման և
 խրախուսման ոչ հստակ համակարգի, անբավարար
 հետադարձ կապի և քանակը ապահովելով՝ որակի
 անկման վերաբերյալ:

Նկատի առնելով սույն հիմնախնդրի կիրառական
 նշանակությունը, երևան հանված խնդիրները և
 վերլուծության արդյունքում բացահայտված
 փաստերը՝ կարելի է կառուցել, կազմել «մարդ-մարդ»

²²⁵ **М. М. Скугаревская**, Синдром эмоционального выгорания. Скугаревская М. М., Медицинские новости. 2002, № 7, с. 3-9.

համակարգում ներգրավված անձանց մասնագիտական պատկերը (պրոֆեսիոգրամա)՝ դրանցում ներառելով այն անձնային առանձնահատկությունները, որոնց առկայությունը «ապահովագրում է» մասնագետին աշխատանքային գործունեության հետևանքով առաջ եկող «մասնագիտական այրման համախտանիշից»:
Նշյալ համախտանիշի ձևավորումը պայմանավորող անձնային առանձնահատկություններին և որակներին հմացությունները թույլ կտա աշխատակազմը համալրել իսկ մասնագիտական ընտրություններ կատարել իսկ շահարկություն դարձնել ոչ միայն մասնագիտական գիտելիքներին, որակներին և հմտություններին, այլև անձի հոգեբանական բնութագրին:

Գ Լ ՈՒ Խ IV

Հ Ա Ն Ի Ա Յ Ի Ն Ն Ա Ռ Ա Յ Ո Ղ Ն Ե Ր Ի Պ Ա Տ Ի Ա Ս Տ Մ Ա Ն Հ Ա Մ Ա Կ Ա Ր Գ Ե Ր Ի Ե Վ Ն Ի Ա Ն Յ Հ Ո Գ Ե Բ Ա Ն Ա Կ Ա Ն Ա Ռ Ա Ն Ձ Ն Ա Հ Ա Տ Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր Ի Հ Ա Մ Ե Մ Ա Տ Ա Կ Ա Ն Վ Ե Ր Լ ՈՒ Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հանրային ծառայողների պատրաստման համակարգի վերաբերյալ միջազգային տվյալների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ արտասահմանյան տարբեր երկրներում գոյություն ունեն տարբեր մոտեցումներ հանրային ծառայողների պատրաստման խնդրին: Հանրային ծառայողների պատրաստման ընդգրկվածությունը կրթական համակարգում ևս տարբեր է: Եթե դիտարկելու լինենք կրթական ծրագրերի թվաքանակը ըստ երկրների, ապա կտեսնենք, որ հանրային ծառայողների պատրաստմանն ուղղված ամենաշատ կրթական ծրագրեր առկա են ԱՄՆ-ում՝ ավելի քան 200 կրթական ծրագիր, որոնցից 17-ը տեղաբաշխված է Կալիֆոռնիայում: Դա թերևս պայմանավորված է ԱՄՆ-ում նահանգների մեծ թվով:

Յե տաքրքրական է Չինաստանի մոտեցումը, որտեղ թեև տարածաշրջանները բազմաթիվ են, սակայն առկա է ընդամենը մեկ ազգային կրթական ծրագիր, ինչը պայմանավորված է նրանց միասնական քաղաքական ռազմավարությամբ: Ճապոնիան նույնպես ունի ընդամենը երկու ազգային խոշոր ծրագիր, իսկ Իսպանիան՝ մեկ ազգային և չորս այլ կրթական ծրագրեր: Դրանք սակաթիվ են նաև Գերմանիայում՝ ընդամենը երեքը: Ֆրանսիան իրականացնում է հանրային ծառայողների պատրաստման տասներեք ծրագիր, Յնդկաստանը՝ յոթ, Իտալիան՝ չորս, Ավստրալիան՝ ութ, Միացյալ Թագավորությունը՝ տասը, Ռուսաստանը՝ չորս և այլն: Ինչպես տեսնում ենք, հանրային ծառայողների պատրաստման կրթական ծրագրերի իրականացումը կախված է ազգաբնակչության թվից, և այդտեղ հնարավոր է որևէ օրինակափոխություն անանցնել:

4.1. Հանրային ծառայողների պատրաստման գործընթացում հոգեբանական քաղաքիչի կիրառման փորձի վերլուծություն

Հանրային ծառայողների պատրաստումը զարգացած և զարգացող երկրների կարևոր խնդիրներից է: Ժամանակակից հետազոտություններում հաճախ են հանդիպում հանրային ծառայողների պատրաստելու տարբեր մոտեցումներ, որոնց նպատակը պետության գործառույթներն իրականացնելու համար հոգեբանորեն, քարոյապես, մասնագիտորեն պատրաստանձ կրթելն է: Հանրային ծառայողի մասնագիտական գործունեությանն են անդրադառնում տարբեր գիտական ուղղություններ, որովհետև հարցը պահանջում է միջգիտական մոտեցում, և որևէ մեկ առանձին գիտության շրջանակներում դրա քննարկումը արդյունավետ չի կարող լինել: Ժամանակակից հասարակությունը հանրային ծառայողի գործունեության խնդիրները շատ հաճախ լուծում է՝ անդրադարձ կատարելով հասարակության զարգացման պատմական հիմքերին: Հանրային ծառայողների պատրաստման վերաբերյալ մոտեցումները հաճախ հիմնվում են առաջավոր երկրների փորձի վրա: Հանրային ծառայության ոլորտում կատարված սոցիալ-հոգեբանական հետազոտությունները որոշիչ են հասարակության կառավարման գործընթացում. դրանք պետական քաղաքականության և պետծառայողների աշխատանքը գնահատելու առումով կարևոր դերակատարություն ունեն: Ինչպես նաև անժխտելի է պետական քաղաքականության դերը պետական ծառայության ոլորտում քարձրորակ ապահովելու գործում:

Հանրային ծառայության ոլորտում տարբեր երկրների հոգեբանական մոտեցումների

համեմատական վերլուծությունից պարզ է դառնում, որ դրա կայացման գործընթացում տարբեր հոգեբանական ունեցողություններով և կատվում են որոշակի ընդհանրություններ: Այս ունեցողությունները դիտարկելիս արտացոլվում է բնակչության գրավածության ցուցանիշներում, ծառայողական փոխհարաբերություններում, արտադրության ծավալում, կադրային քաղաքականության մեջ, աշխատակիցների մասնագիտական բանիմացության մեջ: Հանրային ծառայողների վերապատրաստման և ևրացուցիչ կրթության հոգեբանական տարրերի համալիր հետազոտություններ կատարվում են քանդակարձերի և խնդրի ուսումնասիրություններին և դրա հետ կապված արդիական այլ հարցերի՝ տարբեր երկրների օրինակով:

Օրինակ՝ Ֆրանսիացի հոգեբանների հետազոտություններում նշվում է, որ պետական ծառայության որակի կատարելագործման, ֆինանսական միջոցների խնայման և կառավարման ձևերի մշտական փոփոխությունների անհրաժեշտություն է առաջանում: Պետական կառավարման ունեցողությունները պայմանավորված են պարտականություններով, պետական ծառայողների դրդապատճառներով և հոգեբանական կանխատեսելի գործունեությամբ²²⁶:

Անգլիացի հետազոտողների աշխատանքներում և անդրադարձ է կատարվել հանրային ծառայության ունեցողությունների խնայման և բարձր որակի ծառայություն մատուցելու անհրաժեշտության խնդրին²²⁷: Հեղինակները վերլուծել են տվյալ

²²⁶ S. Castaing, The Effects of Psychological Contract Fulfillment and Public Service Motivation on Organizational Commitment in the French Civil Service/Public Policy and Administration, Spring 2006, vol. 21 no. 1, pp. 84-98.
²²⁷ J. A.-M. Coyle-Shapiro, I. Kessler, The Employment Relationship in the UK Public Sector: A Psychological Contract Perspective)

հարցին վերաբերող բազմաթիվ հետազոտություններ, որտեղ նշվում է հանրային ծառայողներին մասնավոր հատվածի աշխատողներին դրդապատճառներին տարբերություն մասին:

Հանրային ծառայության վերաբերյալ հետազոտություններ կատարել Ջ.Ա.Քոլ-Շապիրոն: 5709 անձանց շրջանում անցկացված հարցման նպատակը կազմակերպության աշխատակիցների և ղեկավարության փոխհարաբերություններին ուսումնասիրումն էր: Արդյունքների մեկնաբանությունը հաստատեց այն վարկածը, որ հանրային ծառայողներն իրենց ղեկավարների հետ պարբերաբար շփվելու պահանջ են զգում²²⁸: Շվեյցարացի հետազոտողները բացահայտեցին հանրային ծառայողների առաջնորդող վարքի վերափոխման և կազմակերպչական վարքի միջև փոխկապվածությունը: 569 մեներջերի հետ իրականացված կառուցվածքային մոդելավորմամբ հաստատվել է այն ենթադրությունը, որ ղեկավարի և աշխատակիցների միջև անուղղակի փոխհարաբերությունները, նրանց լիդերի որակների փոփոխություններն անդրադառնում են պետական հատվածի իրական արժեքների վրա²²⁹:

Հանրային ծառայողների մասնագիտական կատարելագործումը մասամբ պայմանավորված է կրթական և վերապատրաստման մոտեցումներով: Հայաստանում կատարված որոշ հետազոտություններ ևս հաստատում են, որ ամենատարբեր պաշտոնական մակարդակներում անհրաժեշտ է հաշվի առնել հանրային ծառայողներին նպատակաուղղվածությունը,

Journal of Public Administration Research and Theory (2003)13 (2): pp. 213-230.
²²⁸ J. A.-M. Coyle-Shapiro, I. Kessler, The Employment Relationship in the UK Public Sector: A Psychological Contract Perspective)Journal of Public Administration Research and Theory (2003)13 (2): pp. 213-230.
²²⁹ A. Ritz, Giauque D., Varone F., Anderfuhren-Biget S., From Leadership to Citizenship Behavior in Public Organizations) Review of Public Personnel Administration June 2014 vol. 34 no. 2, pp. 128-152.
The Ideal of Public Service. Reflections on the Higher Civil Service in Britain. L., N.Y, 2007.

պարտականությունները, կառավարչական գործունեության փորձը, ուսուցման դրդապատճառը: 2011 թվականից ՀՀ պետական կառավարման ազդեցիկության մագիստրանտների ընդունելության գործընթացում սկսեցին կիրառել նաև հոգեբանական հատկանիշների ուսումնասիրության տվյալները, իսկ 2013 թվականից՝ մշակել հանրային ծառայողների վերապատրաստման կարիքի գնահատման մեթոդաբանությունը, ինչպես նաև դիտարկվեցին նրանց հոգեբանական պատրաստման խնդիրները:

2005 թվականին Ուկրաինայում իրականացված հետազոտությունները ցույց են տվել, որ պետական կառավարման համակարգի պաշտոնյաներն ունեն բարձրագույն կրթական մակարդակ, բայց դա արդի պահանջներին չի բավարարում:

Պարզվում է, որ այսօր կրթության բովանդակությունը հեռու է ցանկալից: Այս բացն անհրաժեշտ է լրացնել տեսական և գործնական հմտություններին ձևավորմամբ: Կրթական վերջնարդյունքները շատ հաճախ խիստ տարբերվում են այն պահանջարկից, որը ներկայացնում է ժամանակակից հասարակությունը մասնագետին: Եվրոպական փորձը ցույց է տվել, որ պետական ծառայողների պրոֆեսիոնալիզմի հիմքում ընկած է հասարակության հետ կապի բովանդակության և բնույթի հիմքերի, դրանց կարգավորման սկզբունքների ու մեթոդների, կառավարման, հաղորդակցման, անձի հոգեբանության իմացությունը: Խորհրդային Միությունում ընդունված էր պետական ծառայողների գործունեության արդյունավետությունը կապել մասնագիտական ընդունակությունների հետ: Դրանց զարգացումն առաջնային էր համարվում յուրաքանչյուր մասնագիտության համար: Այդ

դեպքում մասնագիտական կարևոր որակները բնութագրվում էին որպես հոգեբանական առանձնահատկությունները համակարգ, այլ ոչ թե տվյալ գործունեությունը իրականացնող անձի առանձին բնութագրերի ամբողջությունը:

Ռուսական կառավարման հոգեբանությունը մեջավելի հաճախ նախապատվություն է տրվում այն մոտեցմանը, որ մասնագիտական գործունեության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է այն իրականացնողի անձնային մասնագիտական որակներով: Ռուսաստանում հետազոտություններ են իրականացվել մասնագիտական գործունեության տարբեր ոլորտներում, այդ թվում՝ պետական ծառայության ոլորտում՝ ընտրության, ուսուցման, որակավորման բարձրացման, կադրերի համալրման և մասնագետների մեջ առաջացող տարբեր սթրեսների կանխարգելման նպատակով²³⁰:

Քննարկվող հարցի վերաբերյալ ճապոնիայում կատարված հետազոտություններից մեկի նպատակը երկրի քաղաքացիական ծառայողների՝ աշխատանքի հանդեպ հետևողական լինելու և նրանց հոգեբանական հատկանիշների զարգացման միջև կապի բացահայտումն էր: Մեկ տարվա ընթացքում հեղինակների խումբը դիտումների և թեստավորման միջոցով ուսումնասիրել է հոգեւոցիալական բնութագրերի (սթրեսային իրադրություն, աշխատանքի լարվածություն, հսկողություն) ազդեցությունը աշխատակիցների վրա: Վիճակագրական վերլուծության արդյունքների հիման վրա հետազոտողները հանգել են այն

²³⁰ **Бодров В. А.**, Диагностика и прогнозирование профессиональной мотивации в процессе психологического отбора, В. А. Бодров, Л. Д. Спиркин, Психологический журнал, 2003, № 1, с. 73,

Диагностика, профилактика и коррекция стрессовых расстройств среди сотрудников, Государственной противопожарной службы МВД России: Методические рекомендации. Изд. 2-е, М., 2001, 256 с.

Душков Б. А., Королев А. В., Смирнов Б. А., Психология труда, профессиональной информационной и организационной деятельности, Под ред. Б. А. Душкова, М., 2005, 848 с.

եզրակացու թյան, որ աշխատանքի նկատմամբ հետևողականությունը կարող է նպաստել ծառայողներին բարօրությունը և ավելի հստակ սուբյեկտիվ զգացողություններ առաջացնել²³¹: Մեր կարծիքով, այս երևույթը կարող է պայմանավորված լինել էթնոմշակութային առանձնահատկություններով:

Գիտական աղբյուրների վերլուծությունից պարզ է դառնում, որ այսօր մասնագետների ուշադրությունն ավելի շատ ուղղված է պետական ծառայողի անձի հոգեբանական տարրերին՝ հոգեբանական թեստավորում, հարցում, անձնային զարգացում և այլն: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ մասնագիտական գործունեության արդյունավետության վրա ազդում են ոչ միայն անձի հոգեբանական որակները, այլև նրա հոգեկան վիճակները:

Հիմնահարցի վերաբերյալ մեկ այլ վերլուծություն, որը կատարվել է Բրազիլիայում, վկայում է աշխատանքի վայրում լարվածություն կամ աշխատանքային այլ անբարենպաստ գործոններով պայմանավորված հոգեբանական դիսթրեսի մասին: Ավելի քան 3000 մարդ թեստավորվել է քաղաքացիական ծառայողների աշխատանքային բնութագրերի՝ Karasek մոդելի մոդիֆիկացված տարբերակի և մասնագիտական կարգավիճակի մասին հատուկ մշակված հարցարանի օգնությամբ: Ստացված տվյալները համադրվել են ավելի զարգացած երկրների համանման տվյալների հետ: Բազմամակարդակ վերլուծությունն ապացուցել է,

²³¹ A. Nasermoaddeli, M. Sekine, S. Hamanishi, S. Kagamimori, Associations between sense of coherence and psychological work characteristics with changes in quality of life in Japanese civil servants: a 1-year follow-up study. *Ind Health*. 2003 Jul,41 (3), pp. 236-41.

որ աշխատանքային անբարենպաստ հոգեւոցի ալական միջավայրի պատճառը հոգեբանական դիսթրեսն է ²³²:

Քաղճառայողները մասնագիտական հոգեբանական խնդիրները քննարկվում են նաև առողջապահության ոլորտում: Քաղաքացիական ծառայողները հոգեբանական առանձնահատկությունները դիտարկելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև կյանքի որակի խնդրին, ինչն առանձնահատուկ ազդեցություն է ունենում ծառայողական պարտականությունների կատարման որակի վրա²³³:

Չինացիները ևս անդրադարձել են քաղճառայողները հոգեբանական խնդիրներին: Նրանց հետազոտություններից մեկում գնահատվում են չինացի քաղաքացիական ծառայողները, նրանց կյանքի որակի ցուցանիշները և որոշվում են այն գործոնները, որոնք կարող են ազդեցություն ունենալ նրանց առողջության վրա: Չեղինակները գնահատել են չինացի քաղաքացիական ծառայողները առողջական վիճակի կապը կենսակերպի այնպիսի գործոնների հետ, ինչպիսիք են ծխելը, ալկոհոլ օգտագործելը, նախաճաշելու սովորությունը, քնի տևողությունը, ֆիզիկական վարժությունները, աշխատանքային ժամերը, համակարգչով աշխատելը և նստակյաց կենսակերպը: Չարցման արդյունքների ամփոփումից պարզվել է, որ բարդ խնդիրները, անձնական սթրեսը, ֆիզիկական հոգնածությունը աշխատանքից հետո, սպորտի հանդես հետաքրքրության բացակայությունը և այլ բացասական երևույթներ ազդում են քաղաքացիական ծառայողները աշխատանքում

²³² C. S. Lopes, R. Araya, G. L. Wernick et. Job strain and other work conditions: relationships with psychological distress among civil servants in Rio de Janeiro, Brazil.) Soc. Psychiat Epidemiol, Spriger-Verlag, 2009. pp. 7-8.

²³³ World Health Organization: Report of meeting on quality of life . WHO, Geneva; 1992; WHO: The development of the WHO quality of life assessment instrument, WHO, Geneva; 1993

նախաձեռնողականությունը և ակտիվ մասնակցությունը դրսևորելու վրա: Այդ հետազոտությունը ցույց է տվել, որ ֆիզիկական և հոգեկան խանգարումներ, ընկճվածությունը և այլ հոգեբանական խնդիրներ են նկատվում չինացի այն քաղաքացիական ծառայողների մեջ, ովքեր աշխատում են լարված միջանձնային հարաբերություններին պայմաններում²³⁴:

Կատարված մեկ այլ հետազոտության մեջ կարևորվում է հոգեբանական գործոնների դերը քաղաքացիական ծառայողի կենսաբանական գնահատման հարցում: Բացահայտվել է, որ քաղծառայողների առողջությունը մեծապես պայմանավորված է նրանց հոգեբանական խնդիրներով²³⁵:

Վ. Ն. Կիվայկոն, ուսումնասիրելով քաղաքացիական ծառայողի մասնագիտական գործունեությունը, առանձնացնում է նրա գործունեության առարկայի երկակի բնույթը: Նշվում է, որ այն հանդես է գալիս որպես գործունեության բնույթը պայմանավորող գործոն և որպես գործունեությունն իրականացնողի կողմից այդ գործոնի ընկալում: Յետևաբար քաղաքացիական ծառայողի մասնագիտությունը ընդհանուր որակների, պահանջների հետ մեկտեղ կարող է բարձր պահանջներ առաջադրել այն անձնային որակներին, որոնք մասնագիտորեն կարևոր նշանակություն ունեն գործունեության տվյալ տեսակի համար:

Միաժամանակ քաղաքացիական ծառայության լայն շրջանակը բաղկացած է առանձին

²³⁴ J. Xu , Q. J. Chen, L. Zou, L. Feng, Y. Lu, Q. Wei, J. Zhang. Lifestyle and health-related quality of life: A cross-sectional study among civil servants in China/ BMC Public Health, 2012, pp. 330-308.

Ch. Wu, Chinese civil servants' system. Nankai University Press, Tianjin, 2008, pp. 60-79.

²³⁵ BJ. Zebrack, MA. Chester. A psychometric analysis of the Quality of Life-Cancer Survivors (QOL-CS) in survivors of childhood cancer. Qual. Life Res 2001, 10(4), pp.319-329.

մասնագիտությունը, որոնցում գործունեության հաջողությունը նույնպես կարող է պայմանավորված լինել տվյալ ոլորտի համար կարևոր անձնային որակների առկայությամբ²³⁶:

Քաղաքացիական ծառայողի անձը և նրա գործունեությունը լուսաբանող աշխատություններում տեղ գտած դրույթներից շատերը համապատասխանում են Ե. Պ. Իլյինի «Մասնագիտական գործունեության դիֆերենցիալ հոգեբանություն» գրքում հանգամանալից ներկայացված դրույթներին: Հեղինակը մանրամասն ներկայացրել է մասնագիտական գործունեության դիֆերենցիալ հոգեբանության տեսական և գործնական կողմերը՝ ցույց տալով, թե ինչպես են մարդու անհատական-անձնային և տիպաբանական առանձնահատկություններն ազդում գործունեության տեսակի ընտրության և ծավալած գործունեության արդյունավետության վրա, ինչպես է գործունեության առանձնահատկությունն ազդում մասնագետի անձնային գծերի և վարքի առանձնահատկություններին ձևավորման վրա (մասնագիտական դեֆորմացիա) և այլն²³⁷:

Ա. Մ. Ստոլյարենկոն անդրադարձել է քաղաքացիական ծառայողի հոգեբանությանը՝ շեշտը դնելով քաղաքացիական ծառայողի անձի ուսումնասիրության վրա երկու տեսանկյունից: Առաջինի դեպքում նա դիտարկում է անձի հոգեբանությունը՝ պայմանավորված մասնագիտության առանձնահատկություններով, իսկ երկրորդն անձի անհատական-հոգեբանական և

²³⁶ **Кивайко В. Н.**, Юридическая психология: учебно-методический комплекс, В. Н. Кивайко, О. В. Агейко, Мн.: Акад. упр. При Президенте Респ. Беларусь, 2008, 169 с.

²³⁷ **Ильин Е. П.**, Дифференциальная психология профессиональной деятельности. Спб., Питер, 2008, 432 с.

մասնագիտական որակավորման ախտորոշման
իրականացումն ու մեթոդների մշակումն է՝
ունդղված լուծելու քաղաքացիներին
քաղաքացիական ծառայությունների մրցույթով
ընտրելու, պետական պաշտոնի նշանակելու և
հետագամասնագիտական զարգացման հարցերը:

Քաղաքացիական ծառայողի հոգեբանությունն
ուսումնասիրումը, ինչպես նաև նրա հոգեկան
որակների հոգեբանական վերլուծությունը,
իրավական որակավորումը ենթադրում են տարբեր
անձանց համեմատումը ըստ այն որակների, որոնք
հաստատված են համապատասխան իրավական ակտով:

Ընդհանուր առմամբ, պետական իշխանության
յուրաքանչյուր ճյուղը բանիմաց, չեզոք, ազնիվ
պաշտոնյաների կարիք ունի, որոնք ունակ են
իրականացնելու քաղծառայողի մասնագիտական
գործառույթները:

Սակայն նպատակների անորոշությունը,
ապարատի՝ բազմաթիվ կառույցների
գործողությունները կարգավորելու, գլխավոր
խնդիրներն առանձնացնելու և դրանք լուծելու
համար բոլորի ուժերը կենտրոնացնելու
անկարողությունը հանգեցնում է այն բանին, որ
ընդհանուր, պետական հետաքրքրությունները
փոխարինվում են գերատեսչական, կորպորատիվ-
ապարատային, անձնական, հաճախ շահադիտական
հետաքրքրություններով²³⁸:

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ բազմաթիվ
հետազոտությունների, մոնիտորինգային
հաշվետվությունների և գիտաժողովների
նյութերի վերլուծության արդյունքների հիման
վրա մշակված են քաղաքացիական ծառայողների
ընտրություն և հավաստագրման տարբեր
մոտեցումներ և գիտական հայեցակարգեր: Այդ

²³⁸ Энциклопедия юридической психологии, Под общей ред. проф. А. М. Столяренко, М., ЮНИТИ-ДАНА, 2003, 607 с.

աշխատանքներում հատուկ տեղ է հատկացվում այն հայեցակարգերին, որոնցում բացահայտված են քաղաքացիական ծառայողների մասնագիտական գործունեության արդյունավետության հոգեբանական գործոնները, որոնք նույնպես ազգային յուրահատկությունն և պայմանավորված են երկրի պետական կառուցվածքով և զարգացմամբ:

**4.2. Հանրային ծառայությունների համակարգի կայացման և
զարգացման որոշ օրինակափոխություններ
վերլուծություն**

Տարբեր երկրներում հանրային ծառայությունների համակարգի ուսումնասիրությունը թույլ է տալիս ասել, որ հանրային ծառայությունների հանդեպ ամենուր գոյություն ունեն միմյանցից սկզբունքորեն տարբերվող մոտեցումներ, սակայն գրեթե բոլորին հատուկ է մեկ ընդհանրություն. համակարգը կոչված է ամրապնդել և պետություն-հասարակություն կապը:

Տարբեր երկրներ պատմական զարգացման ընթացքում յուրովի են ապահովել պետություն-հասարակություն կապը: Հետաքրքրական է բրիտանական պետական ապարատի մոտեցումը այս հարցին: Այստեղ պետական ծառայողը համարվում է «Թագի քաղաքացիական ծառայ»՝ ի տարբերություն ռազմական ծառայողների: Թեև այստեղ նախարարությունները ձևավորվել էին դեռ 17-րդ դարում, սակայն դրանց դերն ավելի փոքր էր, քան, օրինակ, Ֆրանսիայում, որտեղ ընդհանրապես գոյություն ունեին կենտրոնական վարչակարգի միասնական համակարգ, և նախարարությունների աշխատակազմը ձևավորվում էր հովանավորչության սկզբունքով: Միացյալ Թագավորությունն այլ երկրներից ավելի երկար է կառավարվել առանց պրոֆեսիոնալ պետական ծառայության: Որքան էլ զավեշտական է, այստեղ պաշտոնները վաճառվում, նվիրվում և նույնիսկ փոխանցվում էին ժառանգաբար, ծառայողներն ունեին սահմանափակ լիազորություններ, և, բնականաբար, դաչերկարող առաջացնել պետական նշանակություն սխալներ: Այսպիսով, նման կառավարությունը կարծես ազնվականների պատվավոր պարտականություն էր,

որը նրանց էր վստահվում գահի և ժողովրդի կողմից: Եվ այդ պարտականությունը կատարում էին նրանք, ովքեր իրենց գերնպատակը համարում էին պետությունը նվիրվելը: Այս գործունեության մոտիվացիան ոչ թե աշխատանքն էր, այլ սկզբունքները և անձի արժեքները, և նրանց համար պետություն կառավարման համակարգում գտնվելը համարվում էր բարձրագույն արժեք: Նույն սկզբունքն էր գործում նաև տեղական ինքնակառավարման մակարդակում: Հատկանշական է, որ Մեծ Բրիտանիան կենտրոնական կառավարում չէր իրականացում: Գործնական խնդիրները լուծվում էին տեղական ինքնակառավարման համակարգում: Տեղական գործերը, դարձյալ առանց վարձատրություն կամ հատուկ պաշտոնի, կառավարում էին հողատերերը կամ հոգևորականությունը ներկայացուցիչները, որոնք համարվում էին ոչ թե Գահի ծառաներ, այլ տեղական հանրության համար հասարակական աշխատանք կատարողներ: Նրանք ենթարկվում էին կենտրոնական իշխանություններին: Այսպիսի աշխատանք կատարելու համար անհրաժեշտ էին որոշ սոցիալ-հոգեբանական որակներ, օրինակ՝ սոցիալական պատասխանատվության զգացում, ինչը, շատ հեղինակների հավաստմամբ, բրիտանական արիստոկրատներին շատավելի էր բնորոշ, քան այլ երկրների՝ Ֆրանսիայի, Ավստրիայի, Պրուսիայի, Ռուսաստանի իշխող դասակարգերին²³⁹: Հետաքրքիր է, որ նման ծառայությունը պահանջում էր անձնային որակների մեծ պաշար, քանի որ այս ոլորտում բազմաթիվ իրավունքներ և պարտականություններ պարզապես սահմանված չէին օրենքով, այլ պայմանավորված էին մարդկային արժանիքներով:

²³⁹ The Ideal of Public Service: Reflections on the Higher Civil Service in Britain Barry O'Toole (Routledge, London) Published in The Australian Journal of Public Administration, vol. 66, N2,2006. pp. 248-259.

Այս պարագայում անձն ինքն էր ծառայողական վերահսկողությունը կատարում՝ հենվելով իր ներքին արժեքներին ու համոզմունքներին վրա: Փոխարենը ժամանակակից կառավարման համակարգերում գնալով ավելանում են կառավարիչների այն գործառնությունները, որոնք վերահսկելի են այլ պետական ծառայողների կողմից: Ստացվում է, որ Անգլիայում պետական ծառայության համակարգում աշխատելու համար կարևորվում էին ոչ այնքան մասնագիտական, որքան հոգեբանական որակները, չնայած վերջիններիս վերահսկողությունն առավել դժվար է:

Անգլիացի գիտնականները նշում են, որ «Նոր հանրային կառավարումը» («New Public Management») ընդգրկում է միջին տարիքի անձանց: 21-րդ դարասկզբում պետական ծառայության նորագույն բարեփոխումները հանգեցրին նրան, որ գիտնականների ուշադրությունը երևույթի նկարագրությունն էր և կանխակալ քննադատությունն էր տեղափոխվեց դեպի անակնկալների և պարադոքսների վերլուծություն: Ըստ այդմ եզրակացնում են, որ նոր պետական կառավարման բարեփոխումների առանձնահատկություններն ուսումնասիրելիս անհրաժեշտ է վերլուծել բոլոր հնարավոր պարադոքսային արդյունքները: Նման մոտեցումը թույլ է տալիս նախապես օգնել կառավարչական գիտությանը՝ հասկանալու պետական հատվածի բարեփոխումների արդյունքը²⁴⁰:


Վ. Գ. Պետերսը Օքսֆորդի համալսարանի ամսագրում հրապարակած իր հոդվածում գրում է, որ ժամանակակից գիտական գրականությունը անկախ է պետական կառավարման խնդիրներից և

²⁴⁰ Christopher Hood, Guy Peters The Middle Aging of New Public Management: Into the Age of Paradox? Journal of Public Administration Research and Theory, 2004, 14 (3), pp. 267-282.

քաղաքականությունը նշում է տվյալ հիմնահարցերը համատեղ դիտարկելու նպատակահարմարությունը, ինչը կարող է ազդել հասարակական կառավարման ոլորտում քաղաքականության իրականացման արդյունավետության վրա: Սույն հոդվածում նախնական կապ է հաստատվում քաղաքականության և կառավարման երկու մոտեցումների միջև: Այն ցույց է տալիս, որ այդ մոտեցումներից յուրաքանչյուրն օգնում է լրացնելու մյուսը, ինչպես նաև օգնում է հասկանալու ժամանակակից բարեփոխումները պետական հատվածում²⁴¹: Մեծ բրիտանացի հետազոտողները պնդում են, որ պետական կառավարման ժամանակակից տեսությունը չի համապատասխանում այսօրվա պահանջներին, քանի որ այն կենտրոնացված է ներկայակերպական գործընթացների վրա, մինչդեռ իրականում պետական ծառայությունն մատուցելու գործընթացը միջկազմակերպական է: Հանրային ծառայողները հիմնվում են կառավարման տեսության վրա և մերժում են պետական ծառայությունը՝ որպես «ծառայություն»: Հեղինակները գտնում են, որ ժամանակակից կառավարումը պետք է հիմնվի օպերատիվ ծառայելու և բնակչությանը ծառայություն մատուցելու տեսության վրա: Նման նորարարական մոտեցումը կարող է դրական ներդրում լինել պետական կառավարման տեսության մեջ «նոր պետական կառավարման» դարաշրջանում²⁴²:

²⁴¹ B. G. Peters, Policy Instruments and Public Management: Bridging the Gaps/ Journal of Public Administration Research and Theory, 2000, 10 (1), pp. 35-47.

²⁴² Stephen P Osborne, Zoe Radnor, Greta Nasi, A New Theory for Public Service Management?



Ն կ ա Ր 5. «Ն ո Ր հ ա ն Ր ա յ ի ն կ ա ճ ա վ ա Ր ու մ»-ան
գ ծ ա պ ա տ կ ե Ր (N.P.A.)

ՎեՐԼՈՒԾԱՔԱՆՆԵՐԸ նշում են, որ նման «տարօրինակ» ստանդարտներ ունեցող համակարգի գոյությունը պայմանավորված է անգլոսաքսոնական պետիրավական ուսմունքի առանձնահատկությամբ (K. Dowding, 1995, E. Kamenka, 1989, A. Marr, 1995): Կառավարման անգլիական համակարգը «իդեալական ռացիոնալ բյուրոկրատիայի» միասնական կենտրոնից կառավարվող և ֆրանսիական տիպիայլընտրանք է, որն ունի հիերարխիկ բնույթ: Այս համակարգում օրինականությունը պահպանվում է ոչ թե միասնական օրենսգրքերի հիման վրա, ոչ թե «վերից վար», այլ ներքևից, այսինքն՝ նախադեպերի՝ որոշակի հայցերի ու գործերի հետ կապված անհատական դատական որոշումների հիման վրա: Ռացիոնալիստական մշակույթին կարող է հակադրվել պրագմատիկ կամ էմպիրիկ մշակույթը, որը բնորոշ է Միացյալ Թագավորությանը և

Հյուսիսային Եվրոպայի զգալի մասին²⁴³, որտեղ ընդհանուր դրույթներն ածանցվում են անհատական որոշումների շարքից: Այդ մշակույթը խոչընդոտում է բյուրոկրատիայի կամ անդեմ որոշումների զարգացումը: Յուրաքանչյուր գործ դիտարկվում է որպես նոր դեպք, և դրա կոնկրետ հատկանիշները կարող են բավարար հիմք հանդիսանալ նույնիսկ անվիճելի ընդհանուր դրույթները վերանայելու համար: Հատկանշական է, որ այստեղ որոշումները սուբյեկտիվ բնույթ են կրում: Անհատականության կամ անձնական իրավունքների կոնցեպցիան էմպիրիկ մշակույթի բաղադրիչ է, որը բարդացնում է բյուրոկրատի աշխատանքը և թույլ չի տալիս ուղղորդել նրան դարձել գործի ընդհանուր բնութագրին: Ինչպես տեսնում ենք, Միացյալ Թագավորությունում մշակույթն ավելի անձնային է, քան զարգացման նույն մակարդակում գտնվող այլ ազգերի մոտ²⁴⁴: Այսպիսով, բրիտանական պետական ծառայության զարգացման ընդհանուր միտումներն ուղղակիորեն հակադրվում են ունիֆիկացված բյուրոկրատական ուղղահայաց հիերարխիայի դեմ:

Անդրադառնալով բրիտանական պետական ծառայության զարգացման պատմությանը՝ քննարկենք վերջին շրջանում տեղի ունեցող փոփոխությունները: Մասնավորապես խոսենք Լեյբորիստների քաղաքական հռչակագրերի մասին: Իշխանության գալով՝ Լեյբորիստները հապաղեցին արմատական փոփոխություններ կատարելու հարցում, չնայած նախընտրական քարոզարշավի ընթացքում տվել էին այդպիսի խոստումներ, և դա

²⁴³ **Оболонский А. В.**, Кризис бюрократического государства Реформы государственной службы: международный опыт и российские реалии, М., 2011.
Perers. G., The Politics of Bureaucracy. N.Y., L., 2004.

²⁴⁴ **Marr A. Ruling Britania.** The Failure and Future of British Democracy. L., Michael Joseph Ltd, 1995

դժգոհություններին տեղիք տվեց: Ամեն դեպքում, պետական կառավարման արդիականացման հարցերով նրանց առաջին ուղերձը՝ «Modernising Government»-ը, կառավարությունը ուղարկվեց ընտրություններում նրանց հաղթանակից երկու տարի անց: Սակայն դրանում քիչ նոր բան կար՝ չհաշված որոշակի տեխնոկրատական շեշտադրումները, որտեղ կարևորվում էր 2008 թվականին քաղաքացիների էլեկտրոնային սպասարկման ծրագրի ներդրման գործընթացի ավարտը: Մեկ այլ կարևոր շեշտադրում էր հանրային ծառայություններին համապատասխանությունը քաղաքացիների պահանջմունքներին: Մասնավորապես քննադատվում էր պահպանողական կառավարության քաղաքականությունը: Նշվում էր, որ պահպանողականները բավական երկար ժամանակ թերագնահատում էին պետական ծառայությունը, քամահրանքով վերաբերվում դրան, սակայն վերջին երկու տասնամյակում քաղաքացիական ծառայության բարեփոխումները նպաստել են մենեջերային մշակույթի զարգացմանը. բարելավվել է կառավարման որակը, սկսել են ավելի շատ ուշադրություն դարձնել աշխատանքային հմտություններին զարգացմանն ու պրոֆեսիոնալիզմի աճին: Ընդ որում, հավաստում էին, որ լեյբորիստները կշարունակեն պահպանողականներին կուրսը պետական ծառայության բարեփոխման ուղորտում, մասնավորապես կընդլայնեն 1994թ. օրենքի գործունեության շրջանակը: Պետական ծառայությանը նվիրված բաժնում պետական ծառայողին ներկայացվում են հատուկ պահանջներ, սակայն այստեղ ևս դժվար է գտնել դրանց պահպանման չափանիշները: Այդ պահանջներում պետական ծառայությունը դիտարկվում է որպես

փոփոխություններն ուղակի, որովհետև ներգրավվում են պետական ծառայության տարբեր սերունդներից լավագույնները: Անհրաժեշտ է իրականացնել պետական ծառայողների շարունակական մասնագիտական վերապատրաստում՝ նրանց համար նախատեսելով առաջխաղացման և վճարման հատուկ պայմաններ: Անհրաժեշտ է նաև կատարելագործել աշխատանքի վճարման համակարգը՝ ըստ աշխատանքի արդյունքների: Պահանջներից է նաև ոչ նյութական խրախուսանքների և աշխատանքային մոտիվացիայի ավելի ճիշտ օգտագործումը, ինչը հնարավորություն կտա պետական ծառայությունը նդգրկելու նոր մարդկանց, ստեղծելու բաց համակարգ (M. Ю. Зенков, 2004):

Նշված պահանջները վերաբերում են այնպիսի հոգեբանական հմտություններին և խնդիրներին, ինչպիսիք են, օրինակ, հաղորդակցման հմտությունները, աշխատանքային մոտիվացիայի բարձրացման հարցը, աշխատանքի հոգեբանական մթնոլորտի խնդիրը: Սակայն չէր խոսվում այդ նպատակներին հասնելու մեխանիզմների մասին:

Ի տարբերություն այդ տարիներին կառավարման միջին մակարդակում վարչական ապակենտրոնացմանը՝ կենտրոնական կառավարման մակարդակում տեղի էր ունենում իշխանական լիազորությունների կենտրոնացում: Այսպես, Մ. Թետչերի կառավարման ժամանակ վարչապետի ապարատի աշխատակիցների թիվը մի քանի տասնյակ էր, իսկ Բլեթրի ժամանակ այն մի պահ անցավ 1000-ի սահմանը: Նման կենտրոնացումը հակասում էր անգլիական ավանդույթներին՝ լուրջ մտահոգություններ առաջացնելով ինչպես ընդդիմադիր կուսակցությունների, այնպես էլ վերլուծաբանների մեջ: Նշվում էր, որ Անգլիան եվրոպայի ամենակենտրոնացած երկիրն է դառնում,

չ նայած դա չ ափազանց ություն էր: Մասնավորապես՝
 Լուրջ մտահոգություններ առաջացան գործադիր
 իշխանության կազմում հատուկ խորհրդականների
 ինստիտուտի ձևավորման վերաբերյալ: Անգլիացի
 քաղաքագետները հակասություն էին տեսնում այն
 բանում, որ այդ խորհրդականներից շատերն ունեին
 բավական մեծ քաղաքական ազդեցություն, սակայն
 նրանց Լիազորությունների բնույթը ո՛չ
 դեմոկրատական, ո՛չ էլ նույնիսկ
 երիտդեմոկրատական էր: Նրանք նշանակվում և
 վերահսկվում էին վարչապետի կամ համապատասխան
 նախարարի կողմից, ընդ որում, նրանց
 պաշտոնավարումը նույնքան էր տևում, որքան
 իրենց նշանակողինը: Սակայն այս վիճակը երկար
 չ շարունակվեց, և 2000 թվականին խորհրդականների
 թիվը կրճատվեց. յուրաքանչյուր նախարար
 իրավունք ուներ ունենալ ու միայն մեկ հատուկ
 խորհրդական: Հատուկ խորհրդականների
 գործունեությունը կարգավորվում է «Վարքագծի
 հատուկ կանոնադրքով», իսկ շարքային պետական
 ծառայողների վարքագիծը՝ «Պետական
 քաղաքացիական ծառայության ընդհանուր
 օրենսգրքով»: Ինչպես պնդում են
 վերլուծաբանները, այս օրենսգիրքը նման էր
 ամերիկյան «Պետական ծառայության էթիկայի
 օրենսգրքին»²⁴⁵:

Հետաքրքիր է «Նախարարի օրենսգրքի»
 վերլուծությունը: Այն բաղկացած է տասը բաժնից,
 որտեղ միաձուլվում են իրավական և էթիկական
 նորմերը: Օրենսգիրքն արտացոլում է էթիկական
 սկզբունքները պետական կառավարման
 համակարգում ներդնելու ժամանակակից միտումը և
 դրանք իրավական «լեզվով» շարադրելու փորձը:

²⁴⁵ **Оболонский А. В.**, Государственная служба – политология, право, оплата, труда, история, реформы. Глава 6, Государственная служба в зарубежных странах, М., изд. «Дело», 2009, 512 с.

Տվյալ ժամանակաշրջանում հասարակության և պետության կապի ամրապնդման նպատակով ստեղծվեցին հանրային կյանքի ստանդարտներ, որոնք կոչված էին առաջին հերթին ապահովելու և վերականգնելու հասարակության վստահությունը պետական պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ, ինչպես նաև հստակեցնելու քարոյական արժեքներին սանդղակը:

Այդպիսով հիմնավորվեցին հետևյալ յոթ սկզբունքները.

1. Անշահախնդրություն - պետական պաշտոններ զբաղեցնող անձինք պետք է գործեն բացառապես հասարակական շահերի շրջանակում: Նրանք չպետք է օգտագործեն իրենց դիրքը՝ ի շահ իրենց, իրենց ընտանիքի և ընկերների:
2. Սկզբունքայնություն - պետական պաշտոններ զբաղեցնող անձինք իրենց ֆինանսական կամ այլ պարտականությունները կատարելիս չպետք է կախման մեջ գտնվեն կողմնակի անձանցից կամ կազմակերպություններից, որոնք կարող են ազդել այդ պարտականությունների կատարման վրա:
3. Անկողմնակալություն - պետական պաշտոններ զբաղեցնող անձինք ծանայողական հարցեր լուծելու (ներառյալ պաշտոնի նշանակում, պետական պայմանագրերի բաշխում), այս կամ այն անձանց պարգևատրելու դեպքում պետք է առաջնորդվեն թեկնածուների արժանիքներով:
4. Պատասխանատվություն - պետական պաշտոններ զբաղեցնող անձինք հաշվետու են հասարակության առաջ իրենց որոշումների և գործողությունների համար և պարտավոր են չխոչընդոտել իրենց ծանայողական գործունեության հետ կապված յուրաքանչյուր ստուգում:

5. Թափանցիկություն - պետական պաշտոններ զբաղեցնող անձանց գործողություններն ու որոշումները պետք է առավելագույնս թափանցիկ լինեն: Նրանք պետք է հիմնավորեն իրենց որոշումները՝ սահմանափակելով տեղեկատվությունը միայն այն դեպքում, երբ դա բխում է լայն հասարակության շահերի պաշտպանության անհրաժեշտությունից:

6. Ազնվություն - պետական պաշտոններ զբաղեցնող անձինք պարտավոր են տեղեկացնել իրենց պաշտոնական պարտականությունների հետ կապված անձնական հետաքրքրությունների մասին և քայլեր ձեռնարկել շահերի և միջոցների միջև ծագող կոնֆլիկտը լուծելու համար՝ ապահովելով հասարակության պաշտպանությունը:

7. Լիդերություն - պետական պաշտոններ զբաղեցնող անձինք պետք է սկզբունքները տարածել ու նախաձեռնողներ լինեն և հաստատեն դրանք սեփական օրինակով ²⁴⁶:

Սկզբունքները ձևակերպված են հստակ, դրանց բովանդակությունն իրավամբ սահմանափակում է պաշտոնատար անձանց գործունեությունը և թույլ է տալիս վերահսկել այն:

Շարունակելով պետական ծառայությունների բարեփոխումները՝ 2004թ. Թոնի Բլեյրն իր ծրագրային ելույթներից մեկում հայտարարել է, որ աշխարհը փոխվել է, և քաղաքացիական ծառայությունը նույնպես պետք է փոխվի ²⁴⁷:

Այդ փոփոխությունների անհրաժեշտ նախապայմանը պետական ծառայության մեջ կառավարության նկատմամբ հասարակության

²⁴⁶ **Оболонский А. В.**, Государственная служба – политология, право, оплата, труда, история, реформы. Глава 6, Государственная служба в зарубежных странах, М., изд. «Дело», 2009, 512 с.

²⁴⁷ **Оболонский А. В.**, Государственная служба Великобритании: традиции и поиск новой парадигмы)) Вопросы государственного и муниципального управления № 2, 2009, с. 57-81.

վստահությունը վերականգնումն է, իսկ կարևորագույն գործիքը՝ թափանցիկությունը²⁴⁸: Ինչպես գիտենք, կառավարության հանդեպ վստահությունն անհնար է շահել առանց քաղաքացիներին կենսական անհրաժեշտության որոշումներին ընդունման գործընթացում ներգրավելու: Եթե քաղաքացիները չեն վստահում հասարակական ինստիտուտներին, ապա կառավարությունը չի կարող արդյունավետ կատարել իր գործառույթները: Այդ առումով տեղին է հիշատակել թ. Բլեքի այն կարգախոսը, որ կառավարություն'ը պետք է ձևավորվի խնդիրների շուրջ, ոչ թե խնդիրները՝ կառավարության: Նա կոչ արեց վերացնել ցմահ պաշտոնավարությունը և կնքել քառամյա պայմանագրեր²⁴⁹: Նույն տարում լույս տեսած «Քաղաքացիական ծառայության բարեփոխումներ. իրականացում և կառուցվածքներ» կառավարական փաստաթղթում նույնպես ընդգծվում է, որ գլխավորը պետական ծառայությունների համապատասխանությունն է սպառողների սպասելիքներին: Այստեղ նշվում են վերափոխումների յոթ սկզբունքային մոտեցումներ, այդ թվում՝ պետական ծառայության մեջ կարևորվում է ռազմավարության մշակման կենտրոնի առկայությունը, քաղաքացիական ծառայության համակարգը պրոֆեսիոնալ հմտություններ ունեցող անձանցով համալրելը, դրա թափանցիկությունը հասարակության մասնավոր և ոչ առևտրային հատվածների համար, ծառայության մեջ ավելի արագ առաջխաղացումը, ավագ պաշտոններում ցմահ պաշտոնավարման վերացումը: Այս քայլերի իրականացման

²⁴⁸ The Ideal of Public Service: Reflections on the Higher Civil Service in Britain. Barry O' Toole/Routledge, London, 2006, p. 225.

²⁴⁹ **Оболонский А. В.**, Государственная служба – политология, право, оплата, труда, история, реформы. Глава 6, Государственная служба в зарубежных странах, М., изд. «Дело», 2009, 512 с.

արդյունքում արդեն 2003 թվականին յուրաքանչյուր վեցերորդ քաղճառայող «դրսից» էր, իսկ 2006-ին արտերկրացի քաղճառայողները կազմում էին ընդհանուրի 40%-ը: Պետք է նշել, որ կադրերի պարբերաբար փոխատեղումը կրճատեց պետական ծառայության պրոֆեսիոնալ և բարոյական ստանդարտներին թիվը:

Պետական ծառայությունում աշխատողի ինքնազգացողությունը և բարոյական որակների ապահովումը ուժեղացրեց էթիկայի նկատմամբ ուշադրությունը և դրանք կեղծ-իրավական ձևով կիրառելու փորձարկեց: Այստեղ կարևորվում է նաև քաղաքացիական ծառայության մասին օրենքի նախագիծ մշակելու գրեթե կես դար տևած փորձը:

Բրիտանական քաղաքացիական ծառայության պատմության անդրադառնալիս պետք է նշել, որ 2003 թվականին մշակվեց քաղաքացիական ծառայության ակտի նախագիծը: Փաստորեն, նախագծի հիմնական դրույթները կրկնում են տարբեր տարիներին վարչապետի կողմից (որը պետք է դառնար քաղաքացիական ծառայության գործերով նախարար) սահմանված նորմերը կամ Բուլքինհեմյան պալատի անունից հռչակված հրահանգները: Դա մասնավորապես վերաբերում է ժամանակակից բրիտանական պետական ծառայության կարևորագույն օղակի՝ Քաղաքացիական ծառայության հանձնաժողովի (Civil Service Commission) կարգավիճակի ու լիազորությունների և քաղաքացիական ծառայության օրենսգրքի նկարագրությունը (Civil Service Code): Վարչապետի ստորագրությունը հրապարակվել է նաև կարևոր բովանդակություն պարունակող «Քաղաքացիական ծառայության արժեքները» փաստաթուղթը, որը ծառայողի էթիկայի կանոնագիրք է աշխատանքի

ընդունվելու ժամանակ ծառայողի ստորագրած պայմանագրի անքակտելի մասը ²⁵⁰:

Քաղաքացիական ծառայության հանձնաժողովը հրապարակել է ծառայողներ վարձելու մասին բավական մանրամասն կանոնադիրք, որն ուղեցույց է անմիջական գործատուների, այսինքն՝ վարձելու իրավունք ունեցող կառավարական կազմակերպությունների համար: Պետական ծառայությանը բաց և թափանցիկ լինելու հարցերը վերջերս են մտել 2005-ին հրապարակված «Տեղեկատվության ազատության մասին» ակտի գործողության տակ:

Ամփոփելով պետք է նշել, որ Մեծ Բրիտանիայում պետական ծառայության բարեփոխումները շատ ավելի ընդգրկուն են, քան այլ երկրներում: Ժամանակակից բրիտանական պետական ծառայությանը պլյուրալիստական բաց կառուցվածք է, որն իր ռեսուրսներն ու պրակտիկան անընդհատ փոխանցում է մյուս օղակներին և իր յուրահատկությունները հաշվի առնելով՝ փոխառնում է մասնավոր հատվածում քաղաքացիների սպասարկման փորձը: Այն իր գործունեության առաջնահերթություններին է դարձրել քաղաքացիների պահանջմունքների բավարարումը: Իսկ պաշտոնատար անձանց վարքագծի էթիկայի նկատմամբ զգալիորեն աճող ուշադրությունը ցույց է տալիս, որ այստեղ խիստ կարևորվում են պետական ծառայողների հանդեպ քաղաքացիների վստահությանն ու հարգանքը:

Պետական ծառայության պատմությունը առանձնահատուկ է հատկապես Ամերիկայի Միացյալ Նահանգներում և իր բնույթով ամերիկյան քաղաքական համակարգի և ողջ ամերիկյան

²⁵⁰Оболонский А. В., Государственная служба – политология, право, оплата, труда, история, реформы. Глава 6, Государственная служба в зарубежных странах, М., изд. «Дело», 2009, 512 с.

հասարակությունը զավակն է: Ինչպես հայտնի է, ամերիկյան քաղաքակրթությունը ձևավորվել է պատմամշակութային, աշխարհագրական, քաղաքական և գաղափարախոսական գործոնների բավական անսովոր միախառնման արդյունքում, և այդ գործոնների պատճառով «միջին ամերիկացին» կասկածանքով ու թերահավատությամբ է վերաբերվում պետությանը:

Որոշ աղբյուրներում նշվում է, որ ԱՄՆ-ում բյուրոկրատիան հասարակության մեջ արմատավորվեց աստիճանաբար: Սկզբում ամերիկացիները նախընտրում էին պետությունը կառավարել առանց մշտական պետական ծառայողների՝ բոլոր իշխանական լիազորությունները տալով քաղաքացիների ժողովներին ու ընտրված անձանց: Սակայն կարճ ժամանակում նրանք համոզվեցին, որ ընտրված անձինք մշտական ծառայողների նման նույնպես կարող են չարաշահում թույլ տալ, իսկ պրոֆեսիոնալ վարչարարներից հրաժարվելը քոսային վիճակ է ստեղծում: Ուստի Սահմանադրության մեջ հիշատակվեց պաշտոնատար անձանց նշանակման մասին, թեև դեռևս ոչինչ չէր ասվում կառավարության կամ պետական ապարատի մասին: Ընդգծվեց, որ առաջին ամերիկյան նախագահների օրոք պետական ապարատը որպես այդպիսին գոյություն չուներ. նրանց ուշադրությունից դուրս էր պետական վարչարարության ոլորտը: «Յիմնադիր հայրերի», ինչպես նշարքային քաղաքացիների համար պետական ծառայողն ասոցացվում էր նախ և առաջ թագավորի կողմից բռնության և ճնշումների ենթարկվողի հետ:

«Յիմնադիր հայրերը» մի կողմից պնդում էին, որ հասարակության ճակատագիրը չպետք է կախված լինի կառավարողների անձնային որակներից, քանի որ

մարդիկ հրեշտակներ չեն, մյուս կողմից էլ ուշադրությունը կենտրոնացնում էին կառավարող «բնական արիստոկրատիայի» բարոյական որակների վրա: Այս հակասությունը լուծվում էր ինչպես իշխանությունը սահմանափակող համակարգ ստեղծելով, այնպես էլ այնպիսի անձանց իշխանության գալով, ովքեր առաջնորդվում էին հասարակության բարօրությանը ծառայելու սկզբունքով: Այս համակարգում խրախուսվում էին բարոյական որակները: Այդ առումով նշենք Բ. Ֆրանկլինի առաջ քաշած այն դրույթը, որ պետական ծառայությունում գլխավորը ոչ թե շահն է, այլ պատիվը: Այդպիսով, նրանք մեծ ուշադրություն էին դարձնում պետական ծառայության էթիկային: Լինելով լուսավորչության դարաշրջանի գավակներ՝ նրանք հավատում էին մարդկային բարիքն ու յթի հաղթանակին և համարում էին ռեալիզմն ու օպտիմիզմը, սկեպտիցիզմն ու իդեալիզմը: Նրանք հարում էին պետության կառավարման «կադրային» ասպեկտի վերաբերյալ «ոչ սենտիմենտալ տեսակետին»²⁵¹:

Ամերիկյան պետության կայացմանն ու զարգացմանը գուգընթաց՝ պետական ծառայողների թիվն անընդհատ աճում էր: Սակայն մինչև քաղաքացիական պատերազմը դատելի էր ունենում հիմնականում ոչ թե պետական գործառնյթների ընդլայնման, այլ փոստային ծառայության զարգացման շնորհիվ: Այսպես, 1816-1861թթ. քաղաքացիական ծառայողների թիվն աճեց մոտ ութ անգամ, որից 86%-ը բաժին էր ընկնում դաշնային փոստային ծառայությանը, այսինքն՝ պայմանավորված չէր կառավարչական ապարատի ընդլայնմամբ: Մյուս վարչություններին

²⁵¹ **А. В. Оболонский**, Кадровая политика в федеральной государственной службе США: история и современность, Гражданское общество и правовое государство, 2001, № 3, с. 41-61.

աշխատակազմերն առաջվանման փոքր էին՝ ընդամենը մի քանի տասնյակ մարդ: Բացառությամբ էր միայն գանձապետարանը, որը հարկերի հավաքումից այլ բուն \$ինանսական գործառնություններից բացի՝ նաև պետական գնումներ և արագ ընդլայնվող հողերի հաշվառում էր կատարում: Ընդ որում, ապարատում պաշտոնների էին նշանակվում «բնական արիստոկրատիայի» հայեցակարգի հիման վրա, այսինքն՝ կրթված և «հասարակությանը ծառայելու» պատրաստ մարդիկ: Այդ պաշտոնները հիմնականում ցմահ էին և ժառանգական:

Միևնույն ժամանակ ամերիկյան պետական ծառայությունն իրավանդություններով տարբերվում է աշխարհի այլ երկրների պետական ծառայություններից: Այն սկզբունքորեն ուղղված է դեպի պետության «բարձր շահը». ոչ թե դեպի քաղաքացին, այլ դեպի «հաճախորդը»՝ լայն իմաստով²⁵²: Պատմությունից հայտնի է, որ 1833 թվականին այստեղ արդեն ստեղծվեց «Թոշակային հիմնադրամ», որը քաղաքացիական պատերազմից հետո դարձավ կառավարության ամենահզոր դեպարտամենտներից մեկը: Աղբյուրները փաստում են, որ տնտեսական վարչությունները՝ աշխատանքի, առևտրի և գյուղատնտեսության, առաջացան ավելի ուշ, դրանք փոքր էին և ավելի դանդաղ էին զարգանում: Վերլուծաբանները նշում են, որ այսօր էլ ամերիկյան պետությունը տնտեսության գործերին ավելի քիչ է միջամտում, քան այլ պետություններ: Դա պայմանավորված է «ամերիկյան դեմոկրատիայի մասնակի և տեղային բնույթով, որը ստեղծեց հաճախորդների մասնակի և սպասարկող վարչություն»: Այս հաճախորդակենտրոնությունը ամերիկյան բյուրոկրատիայի բնույթը

²⁵² German civil service http://hse.ru/en/polit_strat/Vollmuth/Career.rtf; <http://ecsocman.hse.ru/data/2012/01/24/1269082913/%D0%93%D0%BB%D0%B0%D0%B2%D0%B0%206.pdf>

բացատրելու ամենակարևոր գործոնն է: Այն համակարգը, որի դեպքում պետական ապարատի պաշտոններին նշանակումը կատարվում է իշխանությունում գտնվող քաղաքական գործիչների կողմից, որտեղ օբյեկտիվ ցուցանիշները հակադրվում են թեկնածուների ընտրության համակարգին, հաճախ անվանում են հովանավորչական: Հովանավորչությունը ամերիկյան մոդելում առանձնանում էր նրանով, որ պետական գործերի կառավարման մեջ ներգրավում էին քաղաքականապես ակտիվ քաղաքացիներին: Իսկ այդ ամենն ապահովում էր առաջընթաց՝ ի տարբերություն «ջենթլմենների կառավարման» մոդելի:

Քաղաքականությունը կառավարումից առանձնացնելու հարցում Վիլսոնն ավելի զուսպ էր և ավելի շատ հետևում էր ամերիկյան ավանդույթին՝ նշելով վարչական և քաղաքական հարցերի տարբերությունը: Քանի որ դժվար է դրանց միջև հստակ սահման գծել, նա համոզված էր միայն վարչարարների պրոֆեսիոնալիզմի հարցում, այսինքն՝ շարունակում էր Փենդլթոնի օրենքի ուղին: Ավելի ուշ ամերիկացիները քաղաքացիական ծառայողներին սկսեցին առանձնացնել ըստ նրանց կողմից կատարվող աշխատանքի: Որոշ հետազոտողների կարծիքով, հենց այդ ժամանակ է ընդունվել աշխատանքային կանոնակարգի համապատասխանության սկզբունքը: Աստիճանաբար ներդրվեց նաև որակավորման ցանցը, որի մշակման ու ներդրման գործում ակտիվ մասնակցություն ունեցավ պետական ծառայողների արհմիությունը: Ընդ որում, գործընթացը գծային բնույթ չունեցավ: Այսպես, Ֆ.Ռուզվելտի օրոք դասակարգված պետական պաշտոններին քանակը սկզբում որոշակիորեն նվազեց՝ հասնելով 60%-ի, սակայն դա կապված էր

պէտական ծառայողական վերին էջելոններին
 որոշակի վերաքաղաքականացման հետ:
 Մասնավորապես ներդրվեց պաշտոններին
 մրցակցային քննություններին ազատվածների
 կատեգորիան: Յետագայում բոլոր պաշտոնները
 բաժանեցին երեք դասի՝ A, B, C: Սակայն դրանցից վեր
 գտնվում էին «կատեգորիայից դուրս» պաշտոնները:
 Դա նշանակում էր հովանավորչության տարրերի
 վերականգնում, ինչին Ռուզվելտը ձգտում էր
 գիտակցաբար: Նա ոչ միայն քաղաքականացրեց
 բյուրոկրատիայի վերին էջելոնները, այլև
 զգալիորեն ավելացրեց քաղաքացիական
 ծառայողների թիվը, ինչին նրան դրդեցին
 պատմական հանգամանքները (երկրորդ
 համաշխարհային պատերազմը): Չնայած դրանից հետո
 նրանց թիվը զգալիորեն կրճատվեց, սակայն չհասավ
 նախկին քանակին²⁵³:

Յոգեբանական տեսանկյունից մեծ
 հետաքրքրություն է ներկայացնում 1978թ.
 քաղաքացիական ծառայողական քարտեզի մասին
 օրենքը, որը հաստատում էր MeritSystem-ի սկզբունքները և
 տալիս էր դրանց հստակ ձևակերպումը, ինչը
 ենթադրում էր, որ կադրերի ընտրությունն ու
 առաջխաղացումը պետք է կատարվեն հասարակության
 բոլոր խավերից, և այդ ընտրությունը պետք է
 կատարվի բացառապես թեկնածուների
 ընդունակությունների, գիտելիքների և
 կարողությունների հիման վրա, արդար, բաց,
 բոլորին հավասար հնարավորությունները նձեռող
 մրցակցության պայմաններում՝ անկախ նրանց
 քաղաքական հայացքներից, ռասայից, ազգային
 ծագումից, կրոնից, սեռից, տարիքից, ընտանեկան
 դրությունից կամ հաշմանդամության

²⁵³ **Оболонский А. В.**, Государственная служба – политология, право, оплата, труда, история, реформы. Глава 6, Государственная служба в зарубежных странах, М., изд. «Дело», 2009, 512 с.

առկայությունից՝ հարգելով նրանց մասնավոր կյանքը և սահմանադրական իրավունքները: Ինչ վերաբերում է աշխատավարձին, օրենքը ենթադրում էր հավասարվճար հավասար աշխատանքի դիմաց, ինչը խթան է պետական ծառայությունում և աշխատանքի համար՝ ի տարբերություն մասնավոր հատվածի: Պետական ծառայողներից պահանջվում էր բարձրացնել աշխատանքի որակը, իսկ այդպիսի ձգտում չունեցողները պետք է հեռացվեն: Աշխատակազմի գարգացման տեսանկյունից պահանջվում էր արդյունավետ ուսուցում ու վերապատրաստում: Սուբյեկտիվիզմի նվազեցման նպատակով ծառայողներից պահանջվում էր զերծ լինել կամայականություններից, անհատական հովանավորչությունից կամ քաղաքական հարկադրանքից, ինչպես նաև նրանց արգելվում էր օգտագործել իրենց պաշտոնական դիրքը կամ հեղինակությունը նախընտրական քարոզարշավներին միջամտելու կամ ընտրությունների արդյունքների վրա ազդելու համար:

Այս սկզբունքներն անկասկած անհրաժեշտ են նպատակառդղված և արդյունավետ կառավարման համար, սակայն դրանք կյանքի կոչելը նախ և առաջ ձևավորեց բյուրոկրատական բարդ ու խճճված ընթացակարգեր: Առաջացավ աշխատանքի ընդունման նոր կառուցակարգ, որը կարծես կոչված էր լուծելու այս բարդ խնդիրը:

Աշխատանքի ընդունելու համար հանձնաժողովներն անցկացնում էին քննություններ: 40% դեպքերում դրանք գրավոր թեստեր էին, որոնք կիրառվում էին հիմնականում կրտսեր (2-4) և միջին (5-7) պաշտոններում ընդունվողների համար: Մյուս դեպքերում կիրառում էին «հեռակա քննությունների» մեթոդը,

որը կրթության, մասնագիտական փորձի, ինչպես նաև վետերանական արտոնությունների մասին տեղեկությունների հիման վրա թեկնածուների վարկանիշի թվային ցուցանիշներ կազմելն է: Այն համադրվում է թափուր տեղի համար լավագույն վարկանիշի հետ, և ընտրվում են լավագույն ցուցանիշ ունեցող թեկնածուները (ընդ որում, վերջնական ընտրությունը կատարում է կադրային մենեջերը): Պետություն և քաղաքացի կապն ապահովելու նպատակով 1993 թվականին ընդունվեց «Պետական մարմինների գործունեության արդյունքների գնահատման մասին» օրենքի, և 1996-ին՝ «Տեղեկատվության էլեկտրոնային ազատության մասին» օրենքի առաջնայնություններից մեկը, համաձայն որի՝ ցանկացած մասնավոր անձ իրավունք ունի պահանջելու դաշնային վարչությունների չհրապարակված փաստաթղթերի մատչելիություն, ընդ որում՝ այդպիսի պահանջը չի ենթադրում որևէ հիմնավորում: Պետական գաղտնիքի պահպանության նպատակով պահանջը մերժելու պատճառները թվարկված են օրենքում և բաղկացած են ինը կետից: Ըստ օրենքի՝ մի շարք դաշնային հաստատություններ պարտավոր են հանրության համար թափանցիկ դարձնել իրենց այն նիստերը, որտեղ քննարկվում են հասարակական շահերին առնչվող հարցեր, և չեն շոշափվում ազգային անվտանգության խնդիրներ:

Այսպիսի թափանցիկությունը նպատակ ունի մեծացնելու վստահությունը պետություն ներկայացնող անձի հանդեպ: Պետական ծառայողի գործունեության թափանցիկությունը, անկասկած, հոգուտ հասարակության էր: Այժմ քաղաքացին իրավունք ունի ծանոթանալու պետական շատ փաստաթղթերի, ներկա գտնվելու կառավարման մարմիններին նիստերին և այլն: Խնդիրը միայն

հոգեբանությունը չէ. ամերիկացի պետական ծառայողը հաճախ ստիպված է լինում «պայքարել հաճախորդի համար», քանի որ շատ ծառայություններ քաղաքացին կարող է ստանալ տարբեր պետական մարմիններում, ինչպես նաև ամենատարբեր հասարակական կազմակերպություններում: Մեծ նշանակություն է տրվում պետական ծառայողների էթիկայի խնդրին: Պետական ծառայության էթիկայի կանոնագիրքը առաջին անգամ հրապարակվել է դեռ 1958 թվականին՝ Կոնգրեսի քանաձևի տեսքով, որի ընդհանուր մասը ներկայացնում են քամբողջությամբ.

«Կառավարման համակարգում գտնվող յուրաքանչյուր անձ պետք է.

1. բարձրագույն բարոյական սկզբունքներին ու պետությանը նվիրվածությունը վեր դասի անձանց, կուսակցությանը կամ պետական մարմիններին նվիրվածությունից,
2. պահպանի ԱՄՆ-ի Սահմանադրությունը, ինչպես նաև բոլոր մարմինների կողմից ընդունված օրենքներն ու դրույթները և երբեք չաջակցի նրանց, ովքեր խուսափում են դրանք կատարելուց,
3. ամբողջ աշխատանքային օրն աշխատի օրավարձի դիմաց՝ անհրաժեշտ ջանքեր ու մտքեր գործադրելով՝ կատարելով իր պարտականությունները,
4. առաջադրված խնդիրները լուծելու համար ձգտի գտնել առավել արդյունավետ և տնտեսող եղանակներ,
5. երբեք խտրականություն չկիրառի ինչ-որ մեկին հատուկ բարիքներ կամ արտոնություններ տրամադրելու միջոցով ինչպես պարզաատրման դիմաց, այնպես էլ առանց դրա, և երբեք չընդունի բարիքներ կամ նվերներ

ի ր կ ամ ի ր ը ն տան ի ք ի հ ամ ար այ ն
հ ան գ ամ ան ք ն ե ր ու մ , ո ր ո ն ք կ ար ո ղ ե ն
մ ե կ ն աբ ան վ ե լ ո ր պ ե ս ազ դ ե ց ու թ յ ու ն
պ աշ տո ն ե ա կ ան պ ար տակ ան ու թ յ ու ն ն ե թ ի
կ ա տար մ ան վ ր ա ,

6. պ աշ տո ն ե ա կ ան պ ար տակ ան ու թ յ ու ն ն ե թ ի հ ե տ
կ ապ վ ած խո ս տո ու մ ն ե ր չ տա , ք ան ի ո ր պ ե տակ ան
ծ առ այ ո ղ ը չ ի կ ար ո ղ հ ան դ ե ս գ ալ ո ր պ ե ս
մ ա ս ն ա վ ո ր ան ձ , ե ր ք խո ս ք ը պ ե տակ ան պ աշ տո ն ի ն է
վ ե ր աբ ե ր ու մ ,
7. ո ' չ ու ղ ղ ա կ ի ո ր ե ն , ո ' չ է լ ան ու ղ ղ ա կ ի
առ ն տր այ ի ն հ ար աբ ե ր ու թ յ ու ն ն ե թ ի մ ե ջ չ մ տն ի
կ առ ա վ ար ու թ յ ան հ ե տ , ե թ ե դ ա հ ա կ ա ս ու մ է
պ աշ տո ն ե ա կ ան պ ար տակ ան ու թ յ ու ն ն ե թ ի
բ ար ե խ ի ղ ճ կ ա տար մ ան ը ,
8. ե ր ք ե ք չ օ գ տ ա գ ո ր ծ ի պ աշ տո ն ե ա կ ան
պ ար տակ ան ու թ յ ու ն ն ե թ ի կ ա տար մ ան ժ ամ ան ա կ
ձ ե ո ք բ ե ր վ ած գ աղ տն ի տե ղ ե կ ա տվ ու թ յ ու ն ը
ան ձ ն ա կ ան շ ա հ ս տան ալ ու ն պ ա տակ ո վ ,
9. բ ա գ ա հ այ տի կ ո ճ ու պ ց ի այ ի դ ե պ ք ե ր ը դ ր ան ց ի
հ այ տ գ ալ ու դ ե պ ք ու մ ,
10. պ ա հ պ ան ի այ ս ս կ զ բ ու ն ք ն ե ր ը ` գ ի տակ ց ե լ ո վ , ո ր
պ ե տակ ան պ աշ տո ն ը հ ա ս ար ա կ ա կ ան
վ ս տ ա հ ու թ յ ան ար տ ա հ այ տ ու թ յ ու ն ն է » (А. В. Оболонский,
2009)²⁵⁴:

Այ դ հ ար ց ե թ ի մ ան ր ամ ա ս ն վ ե ր լ ու ծ ու թ յ ան ը
ան դ ր ա դ ար ց ե լ ե ն ո ու ս հ ե տ ա գ ո տ ո ղ ն ե ր ²⁵⁵: ք ան ի ո ր
բ ար ո յ ա կ ան ն ո ր մ ե թ ի կ ո դ ա վ ո ր ու մ ը դ ր ան ի ց բ խ ո ղ
բ ո լ ո ր հ ե տ ն ա ն ք ն ե ր ո վ դ ե ո օ ր ե ն ք ի ու ժ հ ա ղ ո ր դ ե լ ու
հ ի մ ք չ է , կ ան ո ն ա գ ի ր ք ը ձ ե ո ք բ ե ր ե ց
խո ր հ ր դ ա տվ ա կ ան կ ար գ ա վ ի ճ ա կ : ե ր կ ու պ ալ ա տն ե ր ու մ

²⁵⁴ Конституция США, ст. II, раздел 2.2. См.: Хрестоматия по истории государства и права зарубежных стран. М., 1984, с. 196.

²⁵⁵ Шувалова Н. Управление нравственными отношениями в системе государственной службы: ориентация на успех // Управление, №2 (27)/2013. С. 41-48; Международный научный журнал «Инновационная наука» №12/2015. С. 111-178/ <http://aeterna-ufa.ru/sbornik/IN-12-3.pdf>

Ել կանոնագրքին հավանություն տվող բանաձև ընդունելով՝ իրենց ու ապարատի ծառայողներին առաջարկել են առաջնորդվել դրանում ամրագրված վարքագծի ստանդարտներով: Դեռևս մշակման փուլում գտնվող՝ բարոյական սկզբունքների պահպանության ուղղված այս փաստաթուղթը հետագա աշխատանքների ուղղորդման ելակետ էր: Այսպես, Քենեդիի օրոք հիմնադրվեց Էթիկայի և «շահերի բխման», այսինքն՝ պաշտոնատար անձի անձնական ու պետության շահերի բխման հարցերով նախագահական խորհրդատվական հանձնաժողով, իսկ 1978 թվականին ընդունվեց պետական մարմինների ծառայողների Էթիկայի մասին ավելի հստակ օրենք:

Ընդունված է, որ երկրի քաղաքական համակարգի կենսունակությունն ու լեգիտիմությունը մեծ մասամբ պայմանավորված են հասարակության մեջ իշխող արժեքներին, իդեալներին ու բարոյական նորմերին պետական ինստիտուտների և բարձրագույն պաշտոնատար անձանց, նրանց վարքագծի համապատասխանությամբ: Ամերիկյան պետության մեջ Էթիկայի մասին օրենքները փոփոխության են ենթարկվում հասարակական պահանջներին զուգընթաց: Օրենքի հիմնական բաժիններում քննարկվում էին պաշտոնից հեռանալուց հետո նախկին ծառայողներին աշխատանքի ընդունելու և նրանց գործունեությունը սահմանափակելու, իրենց ֆինանսական վիճակի մասին դաշնային պետական ծառայողների հաշվետվության կանոնների, նվերներ ընդունելու և գործուղումները ոչ կառավարական աղբյուրներից ֆինանսավորելու, համատեղությունամբ աշխատանքը սահմանափակելու և հոնորարներ ընդունելու, քաղաքացիական ծառայության և ծառայողների վճարման խնդրով հանրային հանձնաժողով ստեղծելու և այլ հարցեր:

Յետագայ ու մ այ ս օրենքից բխեցին սկզբունքներ, որոնք ամրագրվեցին պետական հրահանգներով: Այդ սկզբունքները ենթադրում էին, որ պետական ծառայությունները «հասարակական վստահության ծառայությունն է», որը ծառայողից պահանջում է Սահմանադրությանը, օրենքին և էթիկական սկզբունքներին հավատարմությունը վեր դասել անձնական և մասնավոր շահերից: Սկզբունքներից մեկն այն էր, որ պետական ծառայողը չի կարող ֆինանսական շահեր ունենալ, որոնք կարող են հակասել նրա կողմից ծառայողական պարտքի բարեխիղճ կատարմանը: Դա կոռուպցիայի դեմ պայքարի եղանակներից մեկն էր: Նույնը վերաբերում էր նվերներ ընդունելուն և այնպիսի տեղեկատվություն տրամադրելուն, որը հրապարակման ենթակա չէ:

Պետական ծառայողը չպետք է տա այնպիսի անթույլատրելի խոստումներ, որոնց կատարման համար պատասխանատու է կառավարական հաստատությունը: Պետք է բացառվի ծառայողական տարածքների տրամադրումը անձնական շահ ստանալու նպատակով: Նա պարտավոր է պահպանել պետական սեփականությունը և այն չծառայեցնել պետության շահերին հակառակ: Պետական ծառայողը չպետք է աշխատի այլ կազմակերպություններում և զբաղվի գործունեության այլ տեսակներով, փնտրի նոր աշխատանք կամ բանակցություններ վարի այնպիսի աշխատանքի ընդունվելու համար, ինչը կարող է խանգարել պետական ծառայության մեջ իր մասնագիտական պարտքը և ծառայողական պարտականությունները կատարելուն:

Այսքանով հանդերձ, պետական ծառայողը՝ որպես երկրի քաղաքացի, պարտավոր է բարեխիղճ կատարել օրենքով իր վրա դրված պարտականությունները, առաջին հերթին՝ այնպիսիք, ինչպիսին է, օրինակ,

դաշնային և տեղական հարկերի վճարումը, պետք է հավատարիմ մնա ԱՄՆ բոլոր քաղաքացիների հավասար իրավունքների ապահովմանն ուղղված բոլոր օրենքների նուկաններին:

Ինչպես տեսնում ենք, պետական ծառայողի՝ պաշտոնից հեռանալուց հետո նրան առաջադրված պահանջները շարունակում են գործել: Բացի այդ, պատասխանատու պաշտոնների բոլոր թեկնածուներն անցնում են ֆինանսական վիճակի, անկետային տվյալների և անձնական կյանքի մանրամասն ստուգում հատուկ ծառայությունների կողմից:

Այսուհանդերձ, էթիկայի հանձնաժողովի իրական հեղինակությունը բարձր է, իսկ դրա հանդեպ պետական ծառայողների շրջանում վերաբերմունքը հակասական է՝ թերահավատությունից մինչև նրա գոյություն մասին չիմացություն: Ծատերը դժգոհում են, որ էթիկայի համար պայքարը գործնականում վերածվել է բյուրոկրատական թղթաբանության, և անձը ստիպված է բացատրություն տալ հիմնական ծառայությունից դուրս աշխատած յուրաքանչյուր դրոշմարի համար:

Բանն այն է, որ պետական ծառայողը պետք է ստանա ինչպես նյութական, այնպես էլ բարոյական փոխհատուցում: Սակայն ո՛չ ամերիկյան քաղաքացիական ծառայողների միջին աշխատավարձը, ո՛չ էլ նրանց նկատմամբ հասարակության մեծ մասի արհամարհական-բացասական վերաբերմունքը չեն ապահովում նման փոխհատուցում: Այդ պատճառով էլ ամերիկյան պետական ծառայությունը, անընդհատ կատարելագործվելով հանդերձ, առաջատար երկրների համեմատությամբ իր օղակներում հեռու է կատարյալ լինելուց: Իսկ չփոխհատուցվող և հաճախ իրավիճակում չարդարացված սահմանափակումները կարող են բոլորովին անսպասելի հետևանքների հանգեցնել: Օրինակ՝ աշխատաշուկայում պետական

ծառայողական հեղինակությունը բարձրացնելու համար չարաշահվում է ծառայողական դիրքը կամ կիրառվում են ուճացված էթիկայի ստանդարտներ՝ քաղաքական շանտաժի և հաշիվներ մաքրելու նպատակով: Սակայն, ընդհանուր առմամբ, պետական ծառայողների էթիկայի խնդիրը կարևորագույններից մեկն է, և մեզանում նույնպես սրբաանտեսումը վատուկատանգավոր է:

Այժմ անդրադառնանք հանրային ծառայողական համակարգերի գարգացման պատմությանը Ֆրանսիայում և Գերմանիայում: Հանրային ծառայողական համակարգը բնականաբար համալրվում է տվյալ հասարակության մեջ ապրող անձանցով: Սակայն տարբեր երկրներում հանրային ծառայողականում աշխատող անձանց թիվը տարբեր է՝ պայմանավորված այդ երկրի կառավարման համակարգի յուրահատկություններով: Այդ առումով հետաքրքրական են Գերմանիայի և Ֆրանսիայի տարբերությունները: Աղբյուրներում նշվում է, որ Ֆրանսիայում ավելի շատ անձինք են ներգրավված հանրային ծառայողականում (բնակչության 22.6%), քան Գերմանիայում (բնակչության 15.5%): Գերմանիայում մեծ ուշադրություն են դարձնում պետական կառավարման համակարգին և դրանց համար կադրեր պատրաստելու խնդրին: Այդ մասին է վկայում այն փաստը, որ այստեղ գործում է Պետական կառավարման գիտահետազոտական ինստիտուտ (FOV), որը հիմնարար հետազոտություններ է իրականացնում պետական կառավարման համակարգի, հիմնականում՝ պետական ծառայողական վերաբերյալ ²⁵⁶:

Որոշ մեկնաբաններ նշում են, որ 1990 թվականից Գերմանիան փոխել է մոտեցումը պետական ծառայողների պատրաստման նկատմամբ, քանի որ

²⁵⁶German Research Institute for Public Administration (GRIP), http://www.foev-speyer.de/home/home_engl.asp.

ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այս երկրում երիտասարդ, լավ պատրաստված պետական ծառայողներին կարիք կա, այնպիսի պետական ծառայողներին, ովքեր պատրաստ են ներգրավվել ու վերականգնման գործընթացում²⁵⁷: Դիտարկումները ցույց են տալիս, որ այս խնդիրը բնորոշ է ոչ միայն գերմանական իրականությանը:

Ֆրանսիական պետության համար օրինակ է ծառայում Յոնոմեական կայսրությունը: Այստեղ կառավարման սկզբունքներն ընդունվել են դեռևս միջնադարյան օրենսդիրների կողմից: Փաստերը վկայում են, որ ուժեղ կենտրոնական կառավարություն ավանդույթը նախ Ռիչելյեի, ապա Լյուդովիկոս 14-րդի օրոք 17-րդ դարում ծաղկում է ապրել:

Յետաքրքիր է, որ Ֆրանսիական պետական կառավարման համակարգը ցարական Ռուսաստանի համար իդեալական մոդել էր: Այս երկու համակարգերը նման էին ոչ թե արդյունավետության մեջ, այլ արտաքին գծերով: Ընդգծենք, որ Ֆրանսիական պետական ծառայությունը փակ համակարգ է: Ժամանակի ընթացքում համակարգում որոշակի փոփոխություններ են կատարվել, սակայն դրանք չէին վերաբերում հիմնարար սկզբունքներին: Ֆրանսիան նախապատվություն է տալիս Շարլ դը Գոլի հայացքներին, և 1958 թվականի Սահմանադրության մեջ արդեն իսկ երևում էր դրանց պարզ անդրադարձը: Իսկ մեկ տարի անց Ֆրանսիայի նախագահի նախածնունդամբ փոխվեցին պետական ծառայողներին ներկայացվող պահանջները: Նա 1946թ. օրենքում քիչ փոփոխություններ կատարեց, սակայն դրանք

²⁵⁷ Sabine Leutenecker Public Administration Programmes in Germany, Verheijen T., Connaughton B. Ed., Centre for European Studies University of Limeric, Berlin, 1999, pp. 169-197.

նպատակ ունեին ամրապնդել ու քաղաքական իշխանություն ենթակայությունը պետական ծառայողներին:

Ժամանակակից ընկալմամբ՝ փակ պետական ծառայություն համակարգը հասարակություն և պետություն միջև անջրպետ չի ենթադրում, այլ նշանակում է, որ, ի տարբերություն ԱՄՆ-ի բաց պետական ծառայություն համակարգի, \$րանսիայում պետական ծառայողի իրավական կարգավիճակը պայմանավորված է իր գործատուի՝ պետության բնույթով: Այդ պատճառով էլ նրանց հարաբերությունները կարգավորվում են ոչ թե աշխատանքային, այլ վարչական իրավունքի և դրամաս կազմող պետական ծառայություն իրավունքի նորմերով, որոնք նախատեսում են կողմերի անհավասարություն, աշխատանքային վեճերի լուծման հատուկ կարգ, ինչպես նաև աշխատողներին համար լրացուցիչ սահմանափակումներ՝ բարոյական, նյութական փոխհատուցման և այլն: Փակ համակարգը ենթադրում է, որ մեկ անգամ պետական ծառայություն ընդունված մարդը, որպես կանոն, մնում է այդտեղ իր ողջ աշխատանքային գործունեության ընթացքում՝ այս ոլորտում ապահովելով իր մասնագիտական առաջընթացը:

Պետական ծառայություն համակարգում անձը հաճախ լուծում է մասնագիտական առաջընթացի խնդիր, որն առաջնային դեր է խաղում: Որոշ պետություններում այս խնդիրը խոչընդոտ է պետական ծառայողների գործունեության համար, իսկ \$րանսիայում խնդրին վերաբերվում են մեծ պատասխանատվությամբ: \$րանսիացիներին մեկնաբանությամբ՝ պետական ծառայությունը հատուկ, բոլորից տարբերվող մասնագիտություն է, որը մարդուց հատուկ հոգեբանական որակներ և պետությունը ծառայելու անմնացորդ նվիրում է

պահանջում: Բացի այդ, այն ծառայողին վստահություն է հաղորդում, որ իր կողմից ծառայողական պարտականությունների բարեխիղճ կատարումը կայուն և աստիճանաբար աճող նյութական բարեկեցության երաշխիքն է: Պետական ծառայության մեջ առավել պատրաստված կադրեր ներգրավելու և կադրային հոսքի առաջնաճակատում համար անհրաժեշտ է, որ պետությունը վստահի նրանց, իսկ ծառայողներն ունենան որոշակի առավելություններ: Այսպիսով, այս համակարգը աստճանաբար դառնում է կարծրացած և քաղաքական, սոցիալական և տեխնոլոգիական փոփոխությունների ժամանակաշրջաններում չի կարողանում ճկունություն դրսևորել ու հարմարվել նոր իրողություններին: Բացի այդ, կայուն աշխատավայրը հաճախ հանգեցնում է միջնորդավորվածության ու քննադատությունից զերծ հնազանդության՝ պայմաններ չստեղծելով աշխատակիցների նախաձեռնողականության դրսևորման և մասնագիտական առաջխաղացման համար: Նման դեպքերում հետագա մասնագիտական առաջխաղացման համար հաշվի է առնվում աշխատանքային փորձը:

Գրեթե բոլոր զարգացած երկրներում կարևոր տեղ է զբաղեցնում պետական ծառայության մեջ թափանցիկության ու ճկունության խրախուսումը: Դիտարկենք Ֆրանսիական արդի պետական ծառայության հիմնական առանձնահատկություններն ու սկզբունքները վերջին՝ 1983-1984թթ. բարեփոխումից հետո: Խոսքն այս դեպքում վերաբերում է համալիր պետական ծառայությանը:

Ֆրանսիայում 80-ական թվականներին զգալիորեն բարեփոխվեց տեղական պետական ծառայության համակարգը: Հատկանշական է, որ պետական

ծ առ ա յ ու թ յ ու ն ու մ ն ու յ ն պ ե ս ն եր դ ր վ ե ց
կ ար ի եր ա յ ի հ ամ ա կ ար գ ը , ս ա կ ա յ ն տ ե դ ա կ ա ն
մ ար մ ի ն ն եր ն ի ն ք ն ու ր ու յ ն ու թ յ ու ն ձ եռ ք
բ եր ե ց ի ն կ ա դ ր ա յ ի ն և ա պ ար ա տ ի ն վ եր ա բ եր ո ղ ո թ ո շ
հ ար ց եր ու մ :

Պ ե տ ա կ ա ն ծ առ ա յ ու թ յ ա ն ա ն ց ն ե լ ու գ լ խ ա վ ո թ
ը ն թ ա ց ա կ ար գ ը մ ր ց ու յ թ ն է , ո թ ը հ ա վ ա ս ար
հ ն ար ա վ ո թ ու թ յ ու ն ն եր ա պ ա հ ո վ ե լ ու առ ա վ ե լ
Ժ ո ղ ո վ թ դ ա վ ար ա կ ա ն ձ և է : Մ ր ց ու յ թ ն ա ն ց կ ա ց վ ու մ է
ի ն չ պ ե ս պ ե տ ա կ ա ն ծ առ ա յ ու թ յ ա ն ա ն ց ն ե լ ի ս , ա յ ն պ ե ս
է լ պ ե տ ա կ ա ն ծ առ ա յ ու թ յ ու ն ու մ գ տ ն վ ո ղ ն եր ի
առ ա ջ խ ա դ ա ց մ ա ն ն պ ա տ ա կ ո վ : Ա յ ս առ ու մ ո վ ա յ ն ն մ ա ն է
Յ ա յ ա ս տ ա ն ի Յ ա ն ր ա պ ե տ ու թ յ ու ն ու մ ա յ ս օ թ գ ո թ ծ ո ղ
պ ե տ ա կ ա ն ծ առ ա յ ու թ յ ա ն հ ամ ա կ ար գ ու մ ա շ խ ա տ ա ն ք ի
ա ն ց ն ե լ ու կ ար գ ի ն : Թ ա փ ու ր պ ա շ տ ո ն ի առ կ ա յ ու թ յ ա ն
և մ ր ց ու յ թ հ ա յ տ ար ար ե լ ու մ ա ս ի ն հ ա ն ր ու թ յ ու ն ը
ի ր ա գ ե կ վ ու մ է հ ամ ա պ ա տ ա ս խ ա ն մ ի ջ ո ց ն եր ո վ :
Մ ր ց ու յ թ ի ա ն ց կ ա ց մ ա ն հ ամ ար ձ և ա վ ո թ վ ու մ է
հ ա ն ձ ն ա ժ ո ղ ո վ , ո թ ի տ վ ա ծ դ ր ա կ ա ն գ ն ա հ ա տ ա կ ա ն ը ո չ
թ ե պ ա շ տ ո ն ը ս տ ա ն ա լ ու ի ր ա վ ու ն ք է , ա յ լ ը ն դ ա մ ե ն ը
հ ն ար ա վ ո թ ու թ յ ու ն : Ի ս կ ն շ ա ն ա կ ու մ ը կ ա տ ար ու մ է
մ ր ց ու յ թ ը հ ա յ տ ար ար ա ծ մ ար մ ի ն ը կ ա մ ա ն ձ ը :
Պ ե տ ա կ ա ն ծ առ ա յ ու թ յ ա ն պ ա շ տ ո ն ու մ ն շ ա ն ա կ վ ա ծ
ա ն ձ ն ա ն մ ի ջ ա պ ե ս ձ եռ ք չ ի բ եր ու մ պ ե տ ա կ ա ն
ծ առ ա յ ո ղ ի կ ար գ ա վ ի ճ ա կ , ա յ լ փ ո թ ձ ա շ թ ջ ա ն է
ա ն ց ն ու մ : Մ ր ց ու յ թ ն եր ի օ թ ի ն ա կ ա ն ու թ յ ու ն ը և
դ ր ա ն ց ար դ յ ու ն ք ն եր ի կ ի ր առ ու մ ը վ եր ա հ ս կ վ ու մ
ե ն վ ար չ ա կ ա ն դ ա տ ար ա ն ի կ ո ղ մ ի ց :

Ս ա կ ա յ ն պ ե տ ք է ն շ ե լ , ո թ Ֆ ր ա ն ս ի ա յ ու մ մ ր ց ու յ թ ն
ը ն տր ու թ յ ա ն պ ար տ ա դ ի թ ձ և չ է : Օ թ ե ն ք ը և ը ն դ հ ա ն ու ր
կ ա ն ո ն ա դ ր ու թ յ ու ն ը պ ե տ ա կ ա ն ծ առ ա յ ու թ յ ա ն մ ե ջ
թ ու յ լ ե ն տ ա լ ի ս ն ա ն ը ն տր ու թ յ ա ն ա յ լ
ը ն թ ա ց ա կ ար գ եր : Դ ա կ ար ո ղ է լ ի ն ե լ մ ա ս ն ա գ ի տ ա կ ա ն
ք ն ն ու թ յ ու ն կ ա մ ը ն տր ու թ յ ու ն ` ը ս տ ո թ ո շ ա կ ի
ց ա ն կ ի : Ո թ ո շ դ ե պ ք եր ու մ հ ն ար ա վ ո թ է ն ա ն կ ա մ ա յ ա կ ա ն

ընտրություն: Գոյություն ունի բարձր պաշտոններին ցանկ, որոնցում նշանակումն իրականացվում է կառավարության որոշմամբ: Դրանք քաղաքական պաշտոններն են՝ կառավարության գլխավոր քարտուղար, կենտրոնական վարչության տնօրեն, պրեֆեկտ, դեսպան և այլն:

Ֆրանսիայում պետական ծառայողի մասնագիտական աճը գնահատում է ղեկավարը՝ 0-20 միավորների սանդղակով և կից գրավոր դիտողություններով: Բարձրացումը կատարվում է ըստ կարգի և ըստ ռանգի: Վերջինս ավելի շատ պայմանավորված է տարիների փորձով, քան աշխատողի առավելություններով. և ավ գնահատականը կարող է կարգի բարձրացումն արագացնել, սակայն ցածրը չի կարող խոչընդոտել այն. եթե հանրային ծառայողը տվյալ կարգում առավելագույն ստաժին է հասել, կարգի բարձրացումը մեխանիկորեն է կատարվում: Ռանգի բարձրացման համար աշխատանքային փորձը նախապայման է, սակայն առաջին հերթին կարևորվում է թեկնածուի վաստակը, որը գնահատվում է երեք չափանիշներից մեկով՝ ռանգի բարձրացման ներկայացված անձանց ցուցակում ընդգրկվածություն, այդ ցանկում ներգրավվելուց առաջ մասնագիտական քննություն և սովորական մրցութային մասնագիտական ընտրություն²⁵⁸ ²⁵⁹: Կամայականությունները բացառելու նպատակով գործում են հատուկ մարմիններ՝ վարչական հանձնաժողովներ, Կենտրոնական պետական ծառայության բարձրագույն խորհուրդ և

²⁵⁸ **Оболонский А. В.**, Кризис бюрократического государства Реформы государственной службы: международный опыт и российские реалии, М., 2011.
²⁵⁹ **Perers. G.**, The Politics of Bureaucracy. N.Y., L., 2004.

վարչական դատարան, որտեղ կարելի է բողոքարկել արդյունքները:

Ֆրանսիական պետական ծառայությունը կարևոր առանձնահատկություններն են այն, որ առկա է կորպորատիվ կապվածություն հատկապես պետական կառավարման բարձրագույն օղակներում: Բացի ձևական պայմանականություններից, մարդկանց այս շրջանակին միավորում են պետության վարչական էլիտային պատկանելու գիտակցությունը և երկարամյա ոչ ձևական կապերը:

Ինչ վերաբերում է Գերմանիայի պետական ծառայությանը, փաստենք, որ Գերմանիան նույնպես բյուրոկրատական հարուստ ավանդույթներ ունեցող երկիր է: Նշենք, որ պետական ծառայության մասին առաջին կայսերական օրենքը հռչակվեց Գերմանական կայսրության ձևավորումից գրեթե անմիջապես հետո՝ 1873 թվականին: Սակայն հատկանշական է, որ այնտեղ պահպանվել են պետական ծառայության պրոլսական տարրեր: Սակայն հինը պահպանելով՝ նրանք ձևավորեցին նոր համակարգ:

Գերմանիայում պետական ծառայության նշանակելու մի քանի ձև կա՝ ցմահ, ժամանակավոր, մշտական նշանակմանը նախորդող հարաբերական ժամանակով, նախապատրաստական ծառայություն:

Այստեղ պետական ծառայողները դասակարգվում են ըստ մակարդակների և պաշտոնների: Գերմանիայում պետական ծառայության անցնելու կարգը սահմանում են «պետական ծառայություն» և «փորձաշրջան» հասկացություններն ու փորձաշրջանի անցկացման պայմանները: Ուշագրավ է, որ պետական ծառայության ընդունվելիս գործում է հավասար հնարավորությունների սկզբունքը, ըստ որի՝ պետական ծառայության

նշանակումը կատարվում է թեկնածուի ընդունակությունների և մասնագիտական պատրաստվածություն ամկարդակին համապատասխան: Արգելվում է խտրականությունը սեռի, ծագման, ռասայի, կրոնի, ինչպես նաև կրոնական դրդապատճառներով:

Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում գործում էին պետական ծառայություն անցնելու հետևյալ ընդհանուր պահանջները. պետական ծառայող կարող էր դառնալ նա, ով՝

- ✓ գերմանացի էր՝ ըստ Սահմանադրության 116-րդ հոդվածի,
- ✓ հանձն էր անում աջակցել Սահմանադրության նգով ազատ ժողովրդավարական կարգին,
- ✓ ուներ պատրաստվածություն հատուկ ամկարդակային²⁶⁰:

1985 թվականին ընդունված օրենքի համաձայն՝ հնարավոր էին բացառություններ ընդհանուր կանոնից: Այսպես՝ ծառայողական անհրաժեշտությունից ելնելով՝ պետական ծառայությունում պրոֆեսորի, դոցենտի և այլ բուհական պաշտոններ կարող էին զբաղեցնել նաև արտասահմանցիներ:

Այսպիսով, ԳԴՀ-ի օրենսդրությունը բավական հանգամանակից կանոնակարգում էր պետական ծառայություն ընդունվելու կարգը:

Հնարավոր թեկնածուները թափուր պաշտոնի մասին իրազեկվում են տպագիր և ինտերնետային հատուկ հաղորդագրությունների միջոցով: Նրանց ընտրությունը պետք է կատարվի տվյալ պաշտոնին համապատասխանություն, ընդունակությունների և մասնագիտական ձեռքբերումների հիման վրա՝

²⁶⁰ Речь Федерального канцлера д-ра Ангелы Меркель на открытии CeBIT, 2006, Источник информации: Фирма I.W. Messe Consult GmbH - эксклюзивное представительство Deutsche Messe AG для стран CH.

